ԳԻՐՔ LV



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 7-8 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ.
1909

№ 7—8

Վեհ. Տ. Տ. Մատթէոս Բ. օծեալ Կաթողիկոս ամենայն Հայոց 3
Յովհաննէս Զ. Մեծարարոյ. Մ. Ա. Օ. . . . 5
Կռուել եմ ուզում. Բանաստեղծութիւն. Յարութիւն Պետրոսեան 20
Պերճ Պռոշեանցի վերջին օրերը. Քաջբերունի . . 21
*** բանաստեղծութիւն. Եղ. Աբանեան . . . 36
Ի՞նչ է հասարակութիւնը. Pessimist 37
Ողջոյն ձեզ... Ամպրէ 54
Քօսա-գաղ լերան վկան. Խանզադէ . . . 56
Ժողովրդի մէջ. Բոզիգէրի. Թարգմ. օր. Ն. Աղանեանց 69

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Մթնշաղի անուրջներ, Վահան Տէրեանի. Գ. Ենգիբարեան։—Ստացուած գրքեր 81

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Իսկական պատճառները։ Գ. Ե.—Լուրեր։ Մահդոյժ . 87

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԱՆԳԼԻԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հ. Բոկլի—Նոտովիչի հաստառուած

Թարգմանեց Վարդգէս Աղանեանց

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Դիմել «Լուսալի» խմբագրութեան

ԳԻՐՔ LV



ՀԱՅԿ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 7-8 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՏ. 7
1909

ՎԵՀ· Տ· Տ· ՄԱՏԹԷՈՍ Բ·

ՕԾԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Սեպտեմբերի 13-ը մի նշանաւոր պատմական օր դարձաւ Հայկական կեանքում։ Այդ օրը 127-րդ անգամ հնչեց Հայոց Մայր տաճարի մէջ Լուսաւորչից սկսուած Հայրապետական օծման արարողութիւնը. այդ օրը ս. օծումն ընդունեց Էջմիածնի ամենայն Հայերի նորընտիր Կաթողիկոս տ. տ. Մատթէոս երկրորդը և այդպիսով փարատուեցաւ Կաթուղիկէ եկեղեցու սգակիր քօղը, որով ծածկուել էր նա Մկրտիչ Ա.-ի մահով։

«Լումայ»-ի խմբագրութիւնը շնորհաւորելով հանդիսաւոր օրը՝ ցանկանում է օծեալ Հայրապետին երկայն կեանք և բարեբաղդ պաշտօնավարութիւն և միանգամայն կար և զօրութիւն, որ կարող լինի նա դարմանել Հայ ազգի և եկեղեցու այն բազմաթիւ կարիքները, որոնք ժառանգութիւն են մնացել Նորին Օծութեան հանգուցեալ Հայրապետից և վերջնիս մահից յետ անիշխանութեան ապաբաղդ օրերից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ. ՄԵԾԱԲԱՐՈՅ

109. Վկայասէրէն մինչև Ապիրատ, Պահլաւունեաց տունը իբր դարուկէս (1065—1203) ժառանգութեամբ պահած էր կաթողիկոսական աթոռը, և կերպով մը ընտրական շփոթութիւններ պակասած էին ազգին մէջէն։ Ապիրատի մահուընէ ետքը Պահլաւունեաց տունը չկրցաւ ներկայել արժանաւոր կաթողիկոսացու մը, և ժառանգական սկզբանց հետևողութեամբ սկսաւ խօսուիլ Սեբաստիոյ Անանիա եպիսկոպոսի վրայ, իբր զի Գետադարձի տունէն էր, որ Պահլաւունիներէն առաջ քանի մի կաթողիկոսներ տուեր էր ազգին։ Այլ Անանիա Իկոնիոնի սուլտանութեան սահմանէն էր. և Լեւոն թագաւոր կ'ուզէր իւր սահմանէն առնուլ կաթողիկոսը և իւր սահմաններուն մէջ պահել կաթողիկոսութիւնը։ Իւր արքունական ազդեցութեան շնորհիւ կրցաւ վերջապէս կաթողիկոս օծել տալ իւր ազգականներէն և մտերիմներէն Սսոյ եպիսկոպոս Յովհաննէսը, որ Մեծաբարոյ անուն ստացաւ աւելի արտաքին քան ներքին ձիրքերուն համար, թէպէտ ներքիններն ալ բոլորովին յետնեալ չեղան։ Ապիրատ Սիսի մէջ մեռած էր, այլ Յովհաննէս չուզեց հոն մնալ. այլ լաւագոյն սեպեց իւր Սիսը թողուլ և երթալ Հռոմկլայ, հայրապետութեան պաշտօնական աթոռը։

Յովհաննէսի ընտրութիւնը ընդհանուր ազգին զանազան մասերուն համահաճութեամբ չէր եղած, և Արևելեան չորս մեծ աթոռները ընտրութեան չէին մասնակցած, ինչ որ պայմանադրեալ սովորութիւն էր, նմանապէս Իկոնիոնի սուլտանութեան ենթարկեալ Սեբաստիոյ և Կեսարիոյ աթոռներն ու ազգայիններն ալ մաս ունեցած չէին. արդէն իսկ Աղթամար զատ և ինքնագլուխ կաթողիկոսութիւն կը նկատուէր, և Կիլիկիոյ հետ յարաբերութիւն չունէր։

110. Յովհաննէսի ընտրութիւնը, ոչ միայն արդէն եղած բաժանումները չվերուց, այլ և նոր բաժանումներու պատճառ եղաւ։ Աղթամար զատ կաթողիկոս ունէր, թէպէտև պատմութեանց մէջ անունը յիշուած չէ. Արևելեայք տակաւին Բարսեղ Անեցին կաթողիկոս կը ճանչնային և Կիլիկիոյ հետ հպատակու-

թիւն և հաղորդակցութիւն խղած էին, Սեբաստացիք և Կեսարացիք և առհասարակ Իկոնիոնի սուլտանութեան Հայեր դժկամակեցան Յովհաննէսի ընտրութեան վրայ, զոր Լեւոնի կամայական և ապօրինի մի գործը կը դատէին, և չուզելով զայն ճանչնալ, վերոյիշեալ Անանիա Սեբաստիոյ եպիսկոպոսը, Գետադարձի աղղականութենէն, կաթողիկոս հռչակեցին և օծեցին։ Այսպէս գրեթէ տարի մը չորս կաթողիկոսներ կային միանգամայն, բայց տարին իսկ չլրացած, Յովհաննէսի և Լեւոնի հին բարեկամութիւնը պաղեցաւ, և չենք գիտեր ինչ խնդրով երկուքը իրարու դէմ գժտեցան։ Յովհաննէս ի զուր մեծաբարոյ չէր կոչուած, մեծհոգի կողմը բռնեց և չուզեց Լեւոնի գործիք դառնալ, և հայրապետական իշխանութիւնը նորա կամքին ենթարկել։ Լեւոն չյաջողեցաւ Յովհաննէսի միտքը փոփոխել, և ոչ իսկ նորա դէմ ուղղակի պայքար մղել, այլ թողուց որ Նա իւր Հռոմկլայի հանդարտութեան մէջ մնայ, և իրեն համամիտ եպիսկոպոսներով Սիսի մէջ գումարում կազմեց, և Արքակաղնի վանքին առաջնորդ Դաւիթ եպիսկոպոսը կաթողիկոս օծել տուաւ։ Ապիրատ վերջին օրերը Արքակաղնի վանքին մէջ անցուցեր էր։

111. Կաթողիկոսութեան բաժանումները մեծապէս աղետալի կարող էին դառնալ, այլ բարեբաղտաբար շուտով անցան։ Լեւոն ոչ զոք հալածեց, և ամենքն ալ իրենց հանդարտ պաշտօնավարութեան մէջ թողուց, մինչև որ Բարսեղ և Դաւիթ և Անանիա իրարու ետևէն վախճանեցան, և Յովհաննէս առանց մրցակիցի ու հակաթոռի մնաց։ Դաւիթի անունը օրինաւոր կաթողիկոսներու շարքին մէջ կը յիշուի սովորաբար, այլ ոչ մի կերպով հնար է արդարացնել անոր կաթողիկոսութիւնը, քանի որ երբեք Յովհաննէս պաշտօնապէս և օրինաւորապէս աթոռազուրկ չհռչակուեցաւ, և Դաւիթ Արքակաղնեցին պարզապէս հակաթոռ մը պէտք էր նկատուէր Բարսեղ Անեցիի և Անանիա Սեբաստացիի նման։ Կերպով մը զինքն արդարացնելու ծառայեց Սսոյ ժողովը, որուն վրայ չխօսած պէտք է Հայ Օրբելեանց կամ Ռուպելեանց վրայ տեղեկութիւն տալ։

112. Օրբելեանք բնիկ Վրացի նախարարութիւն մըն են և նշանաւորագոյններէն մին, ե իբր նախահայր կը կարծուի Ճենացի իշխան մը, որ Վրաստան գաղթած կ'ըլլայ չորրորդ դարուն մէջ, Մամգոն Ճենացիին Հայաստան գաղթելուն նման, և Օրբեթ բերդը իրեն բնակավայր ստանալէն Օրբել կամ Օրբուլ կոչուած է, իբր Օրբեթեցի։ Այդ ցեղը Վրաց թագաւորութեան մէջ առաջնակարգ դիրք մը կը ստանայ, և իբր թագաւորութեան երկրորդը կը նկատուի և ընդհանուր սպարապետութեան կը կոչուի։ Վրացի

Օրբելեանց պատմութիւնը մինչև երկոտասաներորդ դար կը հասնի, երբ Վիրք հիւսիսային Հայաստանի վրայ տիրած էին. Դաւիթ որդի Դեմետրի, թագաւոր Վրաց, մեռնելուն ատեն (1158) ժառանգ կը ցուցնէ իւր Տեմա անչափահաս զաւակը. և խնամակալութիւնը կը յանձնէ իւր եղբօր Գէորգիի, պայմանով որ տղան երբ չափահաս ըլլայ թագաւոր օծուի և իշխանութիւնը ստանձնէ. Միանգամայն Օրբելեանց նախարար Իւանէի կը յանձնէ իւր տղան խնամել և անոր իրաւունքը պաշտպանել. Գէորգի նախ ժամանակաւոր իշխանութեան պատրուակով թագաւոր օծուեցաւ, և Տեմայի չափահաս եղած ատեն յապաղեց իշխանութիւնը անոր յանձնել. Իւանէ Տեմայի պաշտպանութեան համար գինուեցաւ, բայց իւր կուսակիցները և նոյն ինքն Տեմա Գէորգիէ շահուեցան, մինչև որ ինքն Իւանէ ալ հարկադրուեցաւ անձնատուր ըլլալ կեանքի ապահովութեան պայմանով. Բայց Գէորգի դըրժեց, և Օրբելեան Իւանէի բոլոր ցեղը ջարդեց, և ամէն իրաւունքի զրկեց (1177), և նորա երկիրը շնորհեց Սարգիս իշխանի մը, զոր ի դէպ է նոյնացնել Խուպասար իշխանին հետ. Օրբելեան Ստեփանոս երկու անուններն ալ կը յիշէ. Ցիշեալ Սարգիս իշխանը էր որդի Զաքարի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Սարգիսի, որ ընիկ քուրդ կը կարծուի, և քրիստոնէութիւն ընդունելով հայ եղած. Վարձատրեալ Սարգիսը Օրբելեանց հետ խնամութիւն ունեցած է, բայց Գէորգիի ամենահաւատարիմ գըտնուելով և Օրբելեանց դէմ դառնալով, արժանացած է Օրբելեանց երկիրն ու պատիւն ու սպարապետութիւնն ստանալու. Սարգիսի մահուանէ ետքը անոր զաւակները կը ժառանգեն Օրբելեան անունը, և իրենց զաւակը Զաքարէ կը ստանձնէ սպարապետութեան պաշտօնը, իսկ կրտսերն Իւանէ կ'անուանուի աթաբէգ, իբրև ընդհանուր կառավարիչ երկրին.

113. Զաքարէ սպարապետ և միանգամայն իշխան Լոռի գաւառի, իւր իշխանութեան ներքև ունէր հայ գունդ մըն ալ, որ ազգային հայ ծէսով կը վարուէր, և ինքն Զաքարէ ալ հաւատարիմ մնացած իւր ազգային հայ ծէսին. Այլ ինչ ինչ կէտերու մէջ Վիրերու և Հայերու մէջ եղած տարբերութիւններ ծանր կուգային Զաքարէի, վասն զի աննպաստ էին Հայերուն, որոց քով շատ աւելի փառաւոր կ'երևնային Վրաց ծէսերը. Արևելեայ վարդապետներ այդ մասին անողոք էին, և հայ եկեղեցւոյ սովորութեանց պաշտպանութեան անունով իրենց ձևերը անփոփոխ կը պահէին, ինչ որ Զաքարէի ծանր կուգար. Այս պատճառով յատուկ պատուիրակներ յղեց Յովհաննէս կաթողիկոսին, և քանի մի խնդիրներու լուծումը խնդրեց անկէ. Գլխաւորներն էին. 1. Հայ բանա-

կին ներուի շարժական խորան շրջեցնել և անոր վրայ բանակին մէջ պատարագել։ Զ. Պատարագի արարողութիւնը կատարուի ճոխ և զարդարուն զգեստներով և ոչ արեղայական անշուք սքեմով։ 3. Վերափոխման և Խաչվերացի տօներ կատարուին ամսաթիւի ճիշդ օրով և ոչ մերձաւոր կիրակէին փոխադրելով։ Զաքարէի առաջարկները կը յայտնեն, թէ ինչ սովորութիւններ կը տիրէին այն ատեն Արևելեայց մէջ։ Մեծ տօներուն եօթնեկական դրութեամբ կատարուելը իբր հին աւանդութիւն կը հաստատուի, ինչպէս որ մինչև ցայսօր պահուած է։ Առանց զարդուց պատարագելը վանական պարզութեան կամ խստակրօնութեան հետեւանք է, ինչպէս որ ժամանակին Լամբրոնացին ալ Տուտէորդիին և բոլոր Արևելեայց կը յանդիմանէր, թէ վրացի սաքուլայիւ այսինքն վեղարով կը պատարագեն։ Վերջապէս շարժական սեղանէ բացարձակապէս զգուշանալնին, Օձնեցիի կանոններէն առնուած, բայց չափազանցուած և խղճահար պահպանութիւն մը եղած է։ Սակայն զգեստի և սեղանի կէտերը նախնական կանոններ չէին, և յատկապէս շարժական սեղանի նշանակ են Զորոյվանքի մէջ պահուած Լուսաւորիչի սեղանը, Աւարայրի պատարագը և ուրիշ պատմական յիշատակներ։

114. Զաքարէ ուղղակի Յովհաննէսին դիմեր էր, իբրև կաթողիկոսի, այլ իւր պատգամաւորներ շիտակ Սիս եկան և Լեւոն թագաւորին ներկայացան, նա ալ իւր պաշտպանած Դաւիթ կաթողիկոսի ձեռքով ուզեց արևելեան իշխանին դիմումները զոհացնել. և Սիսի մէջ ժողով գումարել տուաւ (1204)։ Ժողովը հաւանեցաւ բացարձակապէս զարդարուն զգեստով պատարագելու և շարժական սեղան գործածելու, իսկ Վերափոխումը օգոստոս 15 և Խաչվերացը սեպտեմբեր 14 ամսաթիւերուն տօնելը ներեց միայն Յունաց և Վրաց իշխանութեան ներքև գտնուող Հայերուն, իբր բացառիկ զիջողութիւն։ Ասոնք կը կազմեն Սսոյ ժողովին ութը գլուխներուն Ա. Բ. և Դ. կանոնները։ Միւս հինգ գլուխներն են. Գ. Պատարագը մատուցանել ոչ միայն վասն ննջեցելոց, այլ և վասն կենդանեաց։ Ե. Յայտնութեան և յարութեան ճրագալոյցները մինչև երեկոյ պահել. և վերջէն ձուկով ու ձէթով միայն լուծել։ Զ. Քրիստոսի և սուրբերու պատկերները յարգել։ Է. Առանց դպիր ձեռնադրելու սարկաւագ չձեռնադրել։ Ը. կրօնաւորներուն անստացուած լինել, վանքի մէջ ընակել և միսէ ժուժկալել։ Ի հարկէ այդ հինգ գլուխներն ալ ժամանակին տիրող անկարգութիւնները բառնալու նպատակով հաստատուեցան։ Այդ ութը գլուխները ընդհանրապէս դիտողութիւն չեն վերցներ. միայն Ե. գլուխը ենթադրել կուտայ թէ նաւակատիքները այն ատեններ սկսած են

աւելի կանուխ լուծուել, հարկաւ պատարագն այ կանխելով, այլ որոշ տեղեկութիւն մը չենք գտած։ Երբ Դաւիթ Արքակաղնեցին Սսոյ ժողովին հետ կը փութար Զաքարէ սպասալարը գոհացնել, Յովհաննէս Մեծաբարոյ ևս որ իբրև կաթողիկոս կը մնար Հռոմկլայի մէջ և որուն դիմեցին անշուշտ Զաքարէի պատգամաւորները, իւր հաւանութեան զգալի նշան ալ կ'աւելցնէր, և շարժական սեղան մը և ճոխ վրան մը, և զարդարուն զգեստներ և սպասներ պատրաստել կուտար, և Մինաս եպիսկոպոսը քաջավարժ պաշտօնեայներով կը յղէր ուղղակի ի Լօռի, որ տրուած որոշումները գործադրեն։

115. Սիսի և Հռոմկլայի կաթողիկոսներուն համաձայն վճիռները չբաւեցին զսպել Արևելեայ վարդապետներուն հակառակութիւնը շարժական սեղանի և ճոխ զգեստներու կիրառութեան դէմ։ Նոյն միջոցին մեռած էր Բարսեղ Անեցին, Արևելեայց կաթողիկոսը, և նոր կաթողիկոս չէր ընտրուած, որով հերձուած մը վերցուած էր, սակայն Տուտէորդին կը վարէր հակառակողներուն գլխաւորութիւնը։ Զաքարէ ուզեց գործը ժողովով վերջացնել, և Արևելեայց ժողով մը գումարել տուաւ ի Լօռի (1205)։ Բայց համաձայնութիւն չգոյացաւ, մաս մը համաձայնեցաւ Սսոյ ժողովոյն որոշմանց Զաքարէի բաղձանքին համեմատ, և այս կողմին գլխաւորներն էին Խաչատուր Տարոնեցի վանահայր Հաղարծինի, և Մխիթար Գօշ վանահայր Գետկայ, բայց Տուտէորդիի կողմը բուռն ընդդիմութիւն կը վարէր։ Այսու հանդերձ շարժական սեղանը և զարդարուն զարդերը գործածուեցան հանդիսապէս, և Խաչատուր Տարոնեցի այդ առթիւ երգեց Խորհուրդ խորին զգեստաւորութեան շարականը, որ սովորական կիրառութիւն ստացած է։ Ամեն միջոց գործածուեցաւ Տուտէորդին համոզելու, այլ ոչ Զաքարէի սաստը և ոչ Խաչատուրի և Մխիթարի միջնորդութիւնը օգուտ չունեցան։ Մինաս եպիսկոպոսն ալ միջնորդելու համար Հաղբատ գնաց, բայց հալածուեցաւ. և այն ատեն Զաքարէ բռնութեան դիմելով բանտարկեց Տուտէորդին և քանի մը ընկերները կաթողիկոսին նուիրակը անարգելնուն համար։ Երկրորդ ժողով մըն ալ հրաւիրեց Անի (1207), որ խաղաղութիւնը չկրցաւ հաստատել, և նոր բանտարկութիւններ և աքսորներ տեղի ունեցան Զաքարէի հրամանով, մինչև որ մնացած հակառակորդներ լռեցին և համակերպեցան։ Դաւիթ և Անանիա կաթուղիկոսներն ալ մեռած էին նոյն միջոցին (1206), և Յովհաննէս Մեծաբարոյ Լեւոնի հետ հաշտուեցաւ, և իւր իշխանութիւնը Զաքարէի միջնորդութեամբ Արևելեայց մէջ ալ ընդունուեցաւ, և Աղթամարի հնացեալ բաժանումէն զատ բո-

լոր ազգը Յովհաննէսի իշխանութեան ներքև միացաւ և բաժանմանց վտանգները խափանուեցան։

116. Այդ միջոցէն ետքը 15 տարի ևս հանդարտ իշխանութիւն վարեց Յովհաննէս, այլ պատմական պարագաներ նուազ են։ Ունիմք Ռուբէնի Անտիոքի իշխանին պատմութիւնը, որ թէպէտ լոկ քաղաքական, սակայն կը յայտնէ Հայոց և Լատինաց կրօնական յարաբերութեանց վիճակը։ Պեմունդ կոմս Անտիոքայ իւր որդւոյն և ժառանգին Պալտինի մահուընէ ետքը, սորա որդին և իւր թոռը Ռուբէնը ժառանգ նշանակեց, որոյ մայրն Ագիտա Լեւոն թագաւորին Ռուբէն եղբօր դուստրն էր։ Պեմունդի մահուընէ ետքը Ռուբէն Անտիոքի կոմս եղաւ, բայց Պեմունդի Ճիւանա որդին, որ Տրապոլսոյ իշխան էր, Ռուբէնը հալածեց և Անտիոքը գրաւեց (1208)։ Լատիններ ընդհանրապէս Ճիւանի կողմն եղան, որովհետև Ռուբէն մօր կողմանէ հայ էր, իբրև հայ սնած էր և Հայերու կողմէն կը պաշտպանուէր։ Լեւոն բանակ ալ չարժեց Ռուբէնի պաշտպանութեան, այլ վերջէն խնդիրը պապին դատաստանին թողուեցաւ, որ էր Իննովկենտիոս Գ.։ Սա գործին քննութիւնը յանձնեց Պետրոս կարդինալին, որ յայտնապէս Լատիններու կողմը բռնեց, և Հայերը նզովել իսկ յանդգնեցաւ, որուն իւր բոլոր ոյժով դէմ դրաւ Յովհաննէս կաթողիկոս։

117. Այս միջոցին Կիլիկիոյ մէջ սկսեր էին շատնալ լատին կրօնաւորներ և լատին իշխաններ.. և Լեւոն պաշտպանութիւն կ՚ընէր անոնց, յուսալով որ Եւրոպացիներու ներկայութիւնը նպաստաւոր կ՚ըլլայ իւր երկրին զարգացման։ Այլ կրօնաւորները հռոմէական եկեղեցւոյ ջերմ պաշտպաններ էին, և սկսած էին իրենց վարդապետութեամբ ժողովուրդին միտքերը յուզել, և իշխաններն ալ անոնց օգնականներն ու պաշտպաններն էին։ Պետրոս կարդինալի ընթացքը դայրոյթ պատճառեց Լեւոնին, և որովհետև Անտիոքի խնդիրը հայու և լատինի խնդիր էր դարձած, Լեւոն ալ սկսաւ լատին կրօնաւորներն ու իշխանները իր երկիրներէն արտաքսել։ Լատիններ Իննովկենտիոս Գ. պապին և Ոթոն Դ. կայսեր միջնորդութեան դիմեցին. այլ խաղաղութիւն ու հաշտութիւն չհաստատուեցաւ մինչև որ Անտիոքացիք չզիջան։ Լեւոն անձամբ Անտիոք գնաց և իւր եղբօրթոռ Ռուբէնը կոմսութեան մէջ հաստատեց (1213)։ Տարիներ առաջ (1210) Լեւոն Ռուբէնը իւր թագաւորութեան ժառանգ նշանակած էր, որովհետև ինքը արու զաւակ չունէր։

118. Լատինք իրաց նոր վիճակէն քաջալերուած, ուզեցին նորէն Կիլիկիոյ մէջ տարածուել. ուստի արտաքսուած էին Լեւոնի հրամանով։ Բայց Լեւոն, որ անգամ մը Լատիններուն ընթաց-

քին վրայ գայթակղած էր, անողոք մնաց անոնց դիմումներուն հանդէպ, թէպէտև Ոնորիոս Գ. պապը, որ Իննովկենտիոս Գ. պապին յաջորդած էր (1216), և Երուսաղէմի լատին պատրիարքը և ուրիշներ միջնորդեցին լատին կրօնաւորներուն Կիլիկիոյ մէջ ընդունուելուն համար։ Լեւոնի այդ ընդդիմութիւնը թերևս պատճառ եղաւ, որ կրկին հակառակութիւնն։ բորբոքեցան Անտիոքի կոմս Ռուբէնի դէմ, որ իշխանութենէն հալածուեցաւ (1219), և Լեւոնի դիմելով անկէ ալ մերժուեցաւ, և նոյն իսկ շնորհուած ժառանգութենէն ալ զրկուեցաւ։ Նոյն տարին Լեւոն իւր տկարութիւնը զգալով, արու զաւակ չունենալուն, իւր 16 տարեկան Զապէլ աղջիկը թագաւորութեան ժառանգ նշանակեց, և անոր խնամակալութիւնը յանձնեց Սիր Ատան և Կոստանդին իշխաններուն, Յովհաննէս կաթողիկոսի պաշտպանութեան ներքև։ Քիչ ետքը Լեւոն վախճանեցաւ (1219 Մայիս 1)։

119. Լեւոնի կամքը կատարուեցաւ և Զապէլի գլուխը դրուեցաւ արքունական թագը կաթողիկոսական օրհնութեամբ, այլ իսկոյն ներքին խռովութիւններ սկսան։ Ռուբէն նախկին կոմս Անտիոքայ օտար բարեկամներու ձեռքով իշխանութիւնը գրաւել ուզեց, այլ Կոստանդին խնամակալէ ձերբակալուեցաւ և բանտ դրուեցաւ (1220), ուր և մեռաւ քանի մը տարի ետքը (1223)։ Յովհաննէս Բրիէնոս լատին թագաւոր Երուսաղէմի և ամուսին Լեւոնի Ստեփանիա կամ Ֆանի աղջկան, նա ալ թագաւորութիւնը ձեռք ձգելու աշխատեցաւ, այլ իւր կնոջ մեռնելովը իրաւունքէ ինկած նկատուեցաւ և խնդիրը փակուեցաւ։ Ճիշտ այդ շփոթութեանց միջոցին էր որ Յովհաննէս Զ. կաթողիկոսն ալ վախճանեցաւ, ընդ ամէնն իբր 18 տարի պաշտօնավարելէ ետքը (1203—1221)։ Յովհաննէս ստուգիւ բաղդաւոր եղաւ, վասն զի բազմաճդի բաժանումներու դիմաց գտնուելով, ամէնէն ալ ազատեցաւ հակաթոռներուն մեռնելովը, և կրցաւ խաղաղութեամբ իշխանութիւն վարել։ Արդիւնաւոր նկատուեցաւ նաև անով, որ միութեան խնդրոյն յաջող լուծումը իւր օրով տեղի ունեցաւ։ Երկայնամիտ և մեծաբարոյ բնաւորութեամբը շատ խնդիրներ ճարտարօրէն անցուց, և վերջապէս արթուն նախազգուշութեամբ լատինական միջամտութեանց դիմադրեց, և իւր խորհուրդներն էին հարկաւ՝ որոնք Լեւոնի վրայ ազդեցին Պետրոս կարդինալին և լատին կրօնաւորներուն դէմ դնելու։ Դժբաղդաբար Յովհաննէսի արթնութիւնը չշարունակեց իրմէ ետքը, և իւր մահուանէ ետքը լատին կրօնաւորներուն թիւն ալ ազդեցութիւնն ալ շատցան Կիլիկիոյ մէջ։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ

120. Կոստանդին նշանաւորագոյն հայրապետներէն մին պիտի ճանչցուի, եթէ պաշտօնավարութիւնը նկատի առնենք։ Նա 46 տարի պաշտօն վարեց (1221—1267) ամենայն խաղաղութեամբ և կարգաւորութեամբ։ Իրմէ աւելի երկար պաշտօնավարողներ եղան միայն Գրիգոր Գ. Պահլաւունի 51 տարի և Ս. Սահակ Ա. Պարթեւ իբր 52 տարի, սակայն առաջինը շատ մանկահասակ սկսաւ և վերջինը պաշտօնազրկութիւն ունեցաւ, թէև անվաւեր, և աքսորներ կրեց։ Կոստանդին որդի էր Վահրամի, ընիկ Երզրոզդ հայոց Բարձրբերդ քաղաքէն, աշակերտ Մամուիանու վանքին, որ Սեաւլեոի վանքերէն մէկն էր, մինչև նոյն վանքին առաջնորդութեան և եպիսկոպոսական աստիճանի բարձրացած։ Իւր ընտրութիւնը կատարուեցաւ ազգին ընդհանուր հաճութեամբ, և իւր անունը նախադասուեցաւ իբրև ստուգիւ արժանաւոր անձ մը։ Ոչ յարենէ և կամ ի պատուոյ, կամ ի մամոնայէ, այլ ի շնորհաց Հոգւոյն կոչեցեալ և յամենայն լեզուաց վկայեալ (Վարդ. 141)։ Կոստանդին չտեսեց այդ վարկը և կարող եղաւ մինչև վերջ իւր ազդեցութիւնը պահել, և շփոթ պարագաներու մէջ հաշտութեամբ և խաղաղութեամբ առաջնորդել։ Միայն թէ իւր կաթողիկոսութեան միջոցին Լատիններու հետ բարեկամութիւնը չափազանցեց, Հեթում թագաւորի ուղղութեան հետևելով։ Թէպէտ և ցորչափ իրենք երկուքնին էին գործերուն գլուխը, դրական դիջում մը չըրին Լատիններուն կողմը, բայց ոչ Հեթում և ոչ Կոստանդին մտաբերեցին, թէ իրենց ուղղութիւնը յառաջանալով վտանգաւոր կրնար դառնալ յապագային։

121. Կոստանդինի կաթողիկոսութեան սկիզբը տիրող խընդիրը արքունական գահին գործն էր։ Զապէլի թագուհիութիւնը բոլորովին անուանական էր. և արևելցի ժողովուրդ մը աղջկան մը իշխանութեամբ չէր կրնար կառավարուիլ։ Նոյն ինքն Զապէլ ալ, ըստ ամենայնի բարի և առաքինի աղջիկ մը, շատ հեռու կը գտնէր ինքզինքը պետական հոգերու զբաղումէն։ Զապէլի ամուսին մը տալու և թագաւոր մը ունենալու խորհուրդը հաստատուեցաւ. և իբր ընտրելի նախադասուեցաւ Փիլիպպոս, Անտիոքի դուքսին թոռը, մօրը կողմէն հայ, որ թէպէտ Ռուբէնի պէս հայ կրթութիւն առած չէր, բայց այդչափն ալ բաւական սեպուեցաւ, զայն իբրև Ռուբինեան ցեղին շառաւիղ ընդունելու։ Փիլիպպոս տակաւին պատանի էր, և թագաւորական աստիճանին սիրոյն երդում ալ ըրաւ հայադաւան և հայասէր լինել (Վարդ. 141), և պահել Հայոց կարգն ու կանոնը, ծէսն ու եկեղեցին (1222)։ Շուտով

յայտնուեցաւ Փիլիպպոսի կեղծեօք երդում ըրած ըլլալը, զի բոլորովին հակառակ ուղղութեամբ վարուեցաւ, և հետզհետէ Հայոց արքունիքին գանձերն ու հարստութիւնները, զպատուական Թագն և զպաղատն գաղտնի Անտիոք փոխադրեց (Վարդ. 141)։ Երբ գործը յայտնուեցաւ, ուզեց փախչել, այլ Կոստանդին խնամակալ եաւէն հասաւ ու ձերբակալեց, և Բարձրբերդի մէջ բանտարկեց, և Անտիոքի իշխանէն պահանջեց, որ գաղտնի տարուած հարստութիւնները դարձնէ իբր իւր որդւոյն փրկանք։ Իշխանն բանակցութիւնները երկարեց, փոխանակութեան չզիջաւ, և կը կարծէր բռնութեամբ և զօրութեամբ յաջողիլ, սակայն Փիլիպպոս բանտի մէջ մեռաւ (1223), և հարստութիւններ Անտիոք մնացին։

122. Թագաւորական իշխանութիւնը նորէն Զապէլի դարձած էր Կոստանդինի խնամակալութեամբ, բայց հնար չէր այնպէս պահել. Զապէլին պէտք էր երկրորդ ամուսին մը տալ, այլ Զապէլ կը խորշէր և կուսանաց վանք քաշուիլ որոշած էր, և Իսաւրիոյ Սելեւկիա քաղաքը առանձնացած էր իւր ազգականներուն մօտ։ Կոստանդին խնամակալ և Կոստանդին կաթողիկոս և մեծամեծք Զապէլին ամուսին ընտրած էին խնամակալին որդին Հեթումը, այլ Զապէլի սիրտը անոր հետ չէր։ Համոզողական կերպեր օգուտ չունեցան, և խնամակալն Սելեւկիա երթալով և քաղաքը պաշարելով, Զապէլը բռնադատեց անձնատուր ըլլալ, և այդ նորօրինակ հարսնախօսութեան հաւանիլ. և Հեթումի և Զապէլի ամուսնութիւնը հանդիսապէս կատարուեցաւ Սիս քաղաքը, Հեթում թագաւոր ալ օծուեցաւ և Կոստանդին խնամակալ սկսաւ այնուհետև թագաւորահայր կոչուիլ։ Պատմութիւնը կը վկայէ թէ Կոստանդին կաթողիկոս գործունեայ դեր ունեցաւ այդ եղելութեանց մէջ, որք առանձինն նկատուած ատենին շատ տարօրինակ կ'երեւին, այլ ընդհանուր առմամբ օգտակար եղան և անհրաժեշտ նկատուեցան, որովհետև քաղաքական իշխանութիւնը ապահովելու և եկեղեցական կարգերը պահպանելու նպատակով գործուեցան։

Մեր դարուն բացատրութեանց ոճով, պետական փաստ և պետական պահանջ կոչուած պարագայն է, որ անլուծանելի տագնապները լուծելու եղանակն է։ Հակառակ բռնադատեալ սկզբնաւորութեան Հեթումի և Զապէլի ընտանեկան կեանքը օրինակելի եղաւ, որովհետև բարեպաշտական զգացումը զօրաւոր էր երկուքին վրայ հաւասարապէս։ Զապէլ թագուհի Դիթութեան պաշտօնեայ հաւատաւոր կուսանաց նախատիպը եղաւ, և Հեթում թագաւոր ի վերջոյ Դրազարկի վանքին մէջ սքեմ առաւ և կրօնաւորեցաւ։ Այդ վերջին եկեղեցական կերպարանն է, որ յորդո-

րեց մեզ մանրամասնել պարագայ մը, որ եկեղեցական պատմութեան հետ ուղղակի կապ չունի։

123. Կոստանդին կաթողիկոս, երկրին համար օգտակար բան մը ըրած ըլլալու համոզմամբ, չուզեց այլևս Սիսէ հեռանալ, և թողլով Հռոմկլայի հայրապետանոցը, ուստի վերջին կաթողիկոսներն ալ ստէպ բացակայ կ'ըլլային, և համակերպելով հնաւանդ սովորութեան, որ եկեղեցական կեդրոնը քաղաքական կենդրոնին մէջ տեսնել կը սիրէր, և լրացնելով Լեւոնի ունեցած մեծ փափագը, կաթողիկոսարանը առժամաբար հաստատեց Սիսի Ս. Սոփիա նորակերտ կաթողիկէին քով, զոր պէտք է տարբերել Սիսի Ս. Էջմիածին հին մայր եկեղեցիէն։ Կաթողիկոսարանին և արքունիքին ժամանակաւորութիւնը նպաստեց Կոստանդինի և Հեթումի համամիտ գործակցութեան։ Եւրոպական յարաբերութիւններ դեղեցիկ գոյներով ներկայացան երկուքին ալ, քաղաքական զարգացման և եկեղեցական բարեկարգութեան առաւելութիւնները տեսան անոնց մէջ, զոնէ իրենց երկրին և իրենց կացութեան բաղդատմամբ։ Կաթողիկոս և թագաւոր օրինաւոր փոփոխութիւններու փափաքներ տածելով, Անտիոքի իշխանութեան հետ վարուած խնդիրները մոռացութեան տալով, և խաչակիրներու նոր արշաւանքներէն օգտուելու դիտմամբ, իրենց դուռները համարձակ բացին օտարներու առջև, և ամէն տեսակ յարաբերութիւնները ընդարձակեցին անոնց հետ։ Պէտք է յիշել թէ Կոստանդինի ժամանակ տեղի ունեցած Խաչակիրներուն հինգերորդ արշաւանքը Փրեդերիկոս Բ. կայսեր առաջնորդութեամբ (1228), և վեցերորդ արշաւանքը Լուդովիկոս Թ. Դաղղիոյ թագաւորին գլխաւորութեամբ (1248)։ Լատին կրօնաւորներ, որոց մուտքը Լեւոնէն արգելուած էր, նորէն սկսան շատնալ Կիլիկիոյ մէջ, և նոյն իսկ Սիսի մէջ Դոմինիկեանք աշակերտութեան վանք բացին (1237)։ Նոյն պատճառներով շատեր սկսան Արևմուտք երթալ, և Իտալիոյ քաղաքներուն մէջ փոքրիկ դաղթականութիւններ հաստատել, և օգտուիլ նոյն ատենին Իտալացւոց ունեցած վաճառականական առաւելութիւններէն։ Այդ դաղթականներուն աճման հետևանքն է, որ քիչ ժամանակի մէջ կը սկսիմք կարևոր հայ հաստատութիւններ տեսնել Իտալիոյ մէջ, հիւրանոց մը ի Վենետիկ (1253), վանք մը ի Ռիմինի (1254), եկեղեցի մը յԱնքոնա (1262), հիւրանոց մըն ալ ի Հռոմ, եկեղեցի մըն ալ ի Գենուա (Ճէնովա), և ուրիշներ ուրիշ կողմեր, զի գրեթէ Իտալիոյ բոլոր առևտրական քաղաքներու մէջ հայկական հաստատութեան մը յիշատակներ կը գտնուին մինչև ցայսօր, թէպէտև ամենուն սկզբնաւորութեան թուականները դիւրին չէ ճշտութեամբ որոշել։

124. Այս կերպով Հռոմի պապերու հետ ալ յարաբերութիւնները, որոց սկիզբը կանուխէն տեսանք, և որոնք պահ մը Լեւոնի օրով խզուած էին, սկսան նորէն աճիլ և զարգանալ։ Այդ յարաբերութիւններ տարբեր նպատակներով կը մշակուէին Հայերուն և Լատիններուն կողմէն։ Հայեր արտաքին օգուտէն և քաղաքական օգնութենէն աւելի բան մը չէին սպասեր, մինչ Լատիններ արտաքինին և քաղաքականին պատրուակով աւելի կրօնական իշխանութիւնին ընդարձակել կը դիտէին։ Կրօնական պայմանները յայտնի ալ կ'առաջարկէին. և Հայեր ստիպեալ յարմարելու արտաքին ձևերու կը դիմէին և լոկ կեղծեօք օգտուել կը կարծէին։ Լատիններ կը քաջալերուէին նոր և աւելի ծանր պայմաններ ստեղծել, և խոստացուած նպաստները կը յապաղէին և չէին գործադրեր, և այսպէս կրօնական պայմանները տակաւ կ'ընդարձակուէին։ Առաջին յարաբերութեան յիշատակը Անտիոքի Լատին պատրիարքներու խնդիրով կ'սկսի։ Խաչակիրներ Արևելքի մէջ քաղաքական տէրութեանց հետ եկեղեցական աթոռներ ալ հաստատել սկսած էին, յունական աթոռներու տիտղոսներով, և ինչպէս Երուսաղէմ, նոյնպէս և Անտիոք Լատին պատրիարքութիւններ հաստատուած էին, որք կը կարծէին նոյն աթոռներու ընիկ իրաւունքներուն տէր լինել։ Այդ սկզբունքով Անտիոքի լատին պատրիարքը կը դիտէ, թէ Կիլիկիոյ երկու դաւառները Անտիոքի պատրիարքութենէն կախում ունէին, և որովհետև Հայոց կաթողիկոսները Կիլիկիոյ մէջ կը գտնուէին, կը հետևցնէր թէ Հայոց կաթողիկոսութիւնը պէտք է իրեն ենթարկուած ըլլայ, և Հայերուն զիջողական ընթացքէն քաջալերուելով, Հռոմի պապին կը բողոքէր, որպէս զի Հայոց կաթողիկոսին հրամայէ իրեն հնազանդիլ, և իւր գերագոյն պատրիարքութիւնը ճանչնալ։ Հայերը չէին կրնար լատին պատրիարքին իրաւասութեան հպատակիլ, բայց միւս կողմէն լաւ գիտնալով պապական քաղաքականութեան ձգտումները, մտածեցին յարմար կերպով մը դժուարին կացութենէն ելնել, առանց պապին ալ ընդդիմանալու։

125. Մեզի հասած յիշատակներ և պատմութիւններ յստակ չեն Հայերուն բռնած ընթացքին վրայ, որովհետև չէին ալ կրնար պատիպատ դարձուածներուն իսկութիւնը խոստովանել։ Բայց մեզ դժուար չէ թեթև քննութեամբ մը գործը պարզել։ Հայերը գիտէին հարկաւ որ լատին պատրիարքին ձգտումները հաճելի պիտի ըլլան Հռոմի պապութեան, քանի որ միջնորդարար պապական իշխանութեան ընդարձակուելուն պիտի ծառայէր։ Միւս կողմէն կը մտածէին, որ բացարձակ ընդդիմութիւնն ալ կրնար զիրենք ակնկալեալ օգուտներէ և օգնութիւններէ զրկել։ Հայոց հա-

մար բաւական էր որ ազատ պատրիարքութիւն մը պահեն Արեւելքի մէջ, և մենք կը տեսնենք որ այդ նպատակին մէջ յաջողած են։ Գրիգոր Թ. պապը (1227—1241) գրելով Անտիոքի պատրիարքին, Հայոց կաթողիկոսին ազատ և ինքնագլուխ աթոռը կը ճանչնայ և լատին պատրիարքին կ՚արգելու իրեն տարօրինակ ձգտումները (1238)։ Հեթում ու Զապէլ կանուխէն գրած են եղեր, և թէպէտ կաթողիկոսին գրելը չյիշուիր, բայց ենթադրել ի դէպ է։ Ահա ժամանակն ու պարագայն յորում Հայերը՝ Հայաստանկայց աթոռին պաշտպանութեան համար Սեղբեստրոսի տուուչութեան կամ հաստատութեան պատմութիւնը մէջ տեղ կը դնեն, և յայտնելով թէ Սեղբեստրոս պապ ճանչցեր է Հայոց պատրիարքութեան անկախութիւնը, կը հետևցնեն, թէ նոյն աթոռը ուրև լինի նոյն իրաւունքը կը վայելէ. և թէպէտ Կիլիկիոյ մէջ, բայց Անտիոքի աթոռին հպատակելու պարտաւորեալ չէ։ Այդ պաշտպանութիւնը Դաշանց Թուղթին հետևանքն է, կամ աւելի ճիշտը ըսելով Դաշանց Թուղթը այդ պաշտպանութեան ձևին հետեւանքն է։ Դաշանց Թուղթը յայտնապէս հայ յօրինուած է, որ յոյն կամ լատին օրինակ ալ չունի, և ունիթոռական նշաններ ալ չկրեր, ուստի յայտնապէս կ՚երևի թէ Դաշանց Թուղթը այդ միջոցին ստեղծուեցաւ իբր փաստ այն պաշտպանութեան եղանակին, զոր իրենց տկարութեան և ակնկալութեան միջոցին ընդդրկեցին Հայերը, ուզելով աթոռնին պաշտպանել և պապերը փայփայել։ Դաշանց Թուղթին այդ ծագումը ևաքանզևս կը հաստատուի գրութեան ոճէն և գրութեան գտած կարևորութենէն։ Լատիններ սիրով կ՚ընդունին Սեղբեստրոսեան տուուչութեան կերպը, միշտ Հայոց վրայ թողլով յայտարարութիւնը, և պնդելով թէ Հայեր կ՚ըսեն, և ոչ թէ Հռոմի աթոռը յառաջ կը բերէ։

126. Գրիգոր Թ. պապին հրամանագիրը, որով կը լուծնէր Անտիոքի լատին պատրիարքին ձգտումները, այնչափ հաճելի եղաւ Հայերուն, որ Կոստանդին կաթողիկոս փութաց խորին շնորհակալութիւն յայտնել, բարձրացնելով և չափազանցելով իսկ պապերու դիրքը, թէև առանց գործնականապէս բան մը զոհելու (1239)։ Գրիգոր Թ. պապն ալ փոխադարձ մեծ ուրախութիւն զգաց, և Կոստանդինի ղրկեց վերարկու եւ պատմուճան հայրապետական եւ թաղ եւ մատանի (Զամչ. Գ. 226), որովք իդէպ է իմանալ սովորական պալիումը որ է լատինական եմիփորոնը և լատինաձև սրածայր խոյրը։ Կոստանդինի մի ուրիշ գիրն ալ կը յիշուի առ Իննովկենտիոս Դ. պապ (1243—1254), որ երկամեայ աթոռոյ պարապութենէն ետքը Գրիգորին Թ. յաջորդած էր. և Կոստանդին կաթողիկոս օգտակար համարած էր յարաբերութիւնները նո-

բոզել։ Ինոովկենտիոս Դ. ևս նորոգեց իւր նախորդին վճիռները ի նպաստ Հայոց աթոռին. վասն զի Լատինք Արևմուտքի մէջ լաւ համարում և մեծ ակնկալութիւն կը տածէին Կիլիկիոյ հայ քրիստոնեայ թագաւորութենէ յուսացուած օգուտներուն վրայ։ Այդ Ինոովկենտիոսի թուղթին պէտք է վերագրել, ինչ որ ինքն Կոստանդին Արևելեայց գրած թուղթին մէջ կը յիշէ վերջին օծման վերաբերմամբ, թէ ի ֆռանկաց գրեալ են առ մեզ (Կիր. 173)։ Պապերը յարաբերութեան շատնալէն քաջալերուած, հետզհետէ սկսան պահանջումները շատցնել և դաւանական կէտերուալ մտնել։ Կիրակոս կը պատմէ Հոգւոյն Սրբոյ բղխման նկատմամբ Ինոովկենտիոսի Դ. յուզած խնդիրը (1248) ի ձեռն Թղթոց և յատուկ պատուիրակաց, բայց զայն չպատմած պէտք է յիշել Կոստանդինի շրջաբերական գիրը։

127. Եկեղեցական բարեկարգութեան պէտքը երբեք պակաս եղած չէ, զի զեղծմունք մշտատև տկարութիւններ են, որոնցմէ ազատ չեն եկեղեցականներն ալ հաւատացեալներն ալ։ Զեղծմունք կը շատնան երբ վարչական կապեր կը խզուին և շփոթ պարագաներ հսկողութիւնը կը նուազեցնեն։ Հայրապետական աթոռը Սիսի մէջ տարապիր, արևելեան դաւառներ հսկողութենէ հեռու, հակաթոռներու իշխանութեամբ կանոններ խանգարուած, բարեկարգութիւններ ընական կերպով տկարացած էին։ Կոստանդին ուզեց օգտուիլ այն խաղաղութենէն զոր աթոռը կը վայելէր, և այն լաւ յարաբերութիւններէն զորս Արևելեայց հետ վերանորոգած էր, և նոր ժողով մը գումարեց ի Սիս (1243). ուր հաստատուեցան 25 բարեկարգական կանոններ, և այդ կանոնները շրջաբերական գրութեամբ և յատուկ նուիրակով յուղարկեց Արևելք։ Նուիրակն էր Վարդան վարդապետ Արևելցին, որ իւր վանքէն գացեր էր Երուսաղէմ, և անկէ Սիս եկած, և հինգ տարի կաթողիկոսարանին մէջ աշխատած և մեծ համբաւի և ազդեցութեան տէր եղած. մանաւանդ իբրև միջնորդ յարաբերութեանց Արևելեայց և Կիլիկեան վարդապետներուն միջև։ Երկու գիրեր ունինք Կիրակոսէ պահուած, մէկը Վարդան վարդապետի համար յանձնարարական, որուն համար կաթողիկոսը կ՚ըսէ թէ փափագեցի իմովս ձեռամբ գրել առ ձեզ (Կիր. 166), և միւսը կանոնական ժողովին 25 գլուխները պարունակող։ Նշանաւորագոյններն են։ Դ. կ՚որոշէ ձեռնադրութեան տարիքը, եպիսկոպոսութեան 30, քահանայութեան 25 և սարկաւագութեան 20։ Ը. Պասկի համար արգելեալ կը համարուին մինչև վեց ծննդովք հեռացեալք յազգակցութենէ արեան և տարիքը կ՚որոշէ փեսային 14 և հարսին 12։ Թ. Եպիսկոպոս և

վարդապետ և երէց ուրիշ թեմի մէջ պաշտօն չվարէ առանց հաճութեան վիճակաւորին։ Բայց և ասոնք ծշմարտացն մի՛ հակառակեսցեն։ ԺԳ. Եպիսկոպոսը տարին երկիցս իւր թեմը այցելէ և սուրբ ու գիտուն քորեպիսկոպոսներ դնէ։ ԺԵ. Ապօրէն կենակցութեան մէջ գտնուողները մարմնաւոր պատուհասիւ և հոգեւորաւ խրատել և տուգանել։ ԺԶ. Ամենայն պահք ըստ կանոնաց առանց ձկան և ձիթոյ և գինւոյ եղիցի, բայց ի հարկէ հիւանդութեան։ ԻԱ. և ԻԲ. և ԻԳ. ըստ լուսաւորչադիր կարգի քահանայն զժողովուրդ տասանորդէ, և եպիսկոպոսն զքահանայս, և Հայրապետն զեպիսկոպոսունս, յաւելլով, թէև զայն չառնէք, զչափաւորն արարէք։ Սոքա ընդհանուր և հաստատուն բարեկարգութեան կէտեր են։

128. Մանաւոր յիշատակութեան արժանի են հետեւեալներն ալ։ ԺԷ. կանոնը կը հրամայէ, որ հաւատք օրէնք հայհոյողներուն զլեզուն հատցեն և կամ ծակեսցեն. և լար ի ներքս ածցեն և ծեծելով ի շուրջ ածցեն օր մի, և ըստ զոյին տուգանս առցեն և յաղքատս տացեն։ Այդ կանոնը կ՚երևի թէ արդիւնք է լատին աշխարհէն հասնող հաւատաքննական արձագանքներուն։ ԻԴ. կանոնը կ՚ըսէ որ առաւօտուն Գոհանամք և երեկոյին Լուր ծայնից աղօթքներուն վերջերը փակուին ի դէմս Քրիստոսի և ոչ ի դէմս Երրորդութեան, զի մի Երրորդութեան վերայ թուեսցի խաչն։ Այդ կարգադրութիւնը ցարդ պահուած կը տեսնուի ժամագիրքին մէջ, թէպէտ աւելորդ զգուշաւորութիւն մըն է, և լոկ օտարներու խծբծանքներէ ազատելու կը ծառայէ։ Իսկ ԻԵ. կանոնը ի Ֆրանկաց զրնալ լինելուն համար հիւանդաց խորհուրդը օծմամբ հրամայել կը կարգադրէ, որովհետև, կ՚ըսէ, և Օծնեցին Յովհան, որ զատեալ է զմեզ յազգացդ, զրեալ է որ առնենք, և պարտ է առնելն, և արարէք ստուգիւ։ Բայց ոչ Կոստանդինի և ոչ ուրիշներուն զիջողական հոգին այս մասին արդիւնք չունեցաւ, և ամեն անգամ որ հիւանդները օծելու խօսք եղաւ՝ հայ հաւատացեալը երբեք չհամակերպեցաւ։ Այդ կանոններն էին զորս Վարդան Արևելցին կաթողիկոսական պատուիրակութեամբ տարաւ հաղորդել և իւր ազդեցութեամբ անոնց ընդունելութիւնը ապահովել։

129. Այս միջոցին կրպատկանին Հայերու և Թաթարներու միջև յարաբերութիւնները, որոնց բուն նպատակը քաղաքական խաղաղութիւնն էր։ Թաթարաց սկիզբը նշանակել մեր նպատակէն դուրս է։ Այս դարուն սկիզբն է որ Ջինկիզ խան կը զօրանայ և կը տիրէ Պարսից (1218), մինչ իւր զօրավարներ կ՚ասպատակեն զանազան կողմեր։ Ինքն շուտով կը մեռնի (1226), և Ջալալադին նորէն կը տիրէ Պարսից և ամէն կողմ կը սկսի արշաւել և աւերել, մինչև որ անգամ մը յաղթուելէն ետքը կը սպանուի

(1228)։ Քիչ ետքը նորէն սկսան թաթարաց արշաւանքները (1232), որք հասան Աղուանից Մուղան դաշտը (1233), զանազան քաղաքներու տիրեցին, Դանձակն ալ գրաւեցին (1235), և վիճակով իրենց մէջ բաժնեցին զանազան երկիրներու տէրութիւնը։ Զարմաղան, հրոսակին մէկ ճիւղին գլուխը, յարձակեցաւ Վրաց և Հայոց երկիրները, առաւ Շամքոր և Լոռի ամուր քաղաքները և Արցախի բերդերը, գերեց Վանական վարդապետը և Կիրակոս պատմիչը (1238). Անի և Կարս քաղաքներ քանդուեցան և ջարդուեցան (1239)։ Միւս կողմանէ զանազան իշխաններ հնազանդութեամբ և հարկատուութեամբ բարեկամութիւն հաստատեցին, բայց պատերազմներ շարունակեցին։ Բաղու, որ Զարմաղանի յաջորդած էր, առաւ Կարինը Իկոնիոյ սուլտանին ձեռքէն (1242), մեծ յաղթութիւն մըն ալ տարաւ անոր վրայ Դերջանի դաշտին մէջ, և տիրեց Երզնկայի, Կեսարիայի և Սեբաստիայի, և անհնարին արիւնահեղութիւններ կատարեց Հայոց ՈՂԲ (1243) թուին, զի համարագիր Թուականի ՈՂԲ էր, և ըստ այն գործեցան արդիւնքն արժանաւոր ողբոց, կ'ըսէ պատմիչը (Վարդ. 147)։

Մ. Ա. Օ.

ԿՌՈՒԵԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Կռուել եմ ուզում... Կռուել, մնքառել.
Հանգիստ չէ սիրում կրակոտ հոգիս.
Կռիւի տենչանքով իմ սիրտն է վառուել,
Կռիւ եմ ուզում—դուրս գալ ասպարէզ։
Թող չարն ու կեղծիք—մարդկանց գերիշխան,
Ժայռի պէս խրոխտ դուրս գան իմ հանդէպ.
Ճանթածին հոգիս կայծակի նման
Ժայռին կը զարկէ ուժգին, անվրէպ։
Եւ հաւատացէք, կատաղի զարկով,
Չարիք ու կեղծիք ես կը փշրեմ,
Ժայռը կը հալեմ սրտիս կրակով,
Բարու յաղթանակ արձան կը կերտեմ...

* * *

Սարերի միգապատ, անժպիտ կատարին
Կանգնեցի թինկ տուած մամռապատ վէմ քարին.
Նայեցի դէպի ցած—ծովն ահեղ, ալեկոծ,
Գալարուն ալիքներ դիւրաշարժ ինչպէս օձ,
Աշխուժով, եռանդով վազում են ամեն կողմ,
Պայքարում ու կռւում ժայռի դէմ անողորմ։
Ու հոգիս լցուեցաւ կռուելու տենչանքով.
Նետի պէս սլացաւ քարձունքից դէպի ծով,
Սուզուեցաւ ալեաց մէջ՝ ամեհի եւ անսանձ,
Ու կռուեց, պայքարեց՝ անյողդողդ, միգապանծ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

1907 թուի նոյեմբերի սկիզբն էր։

Բժ. Վարշամեանը դալով իմ բնակարանս՝ յայտնեց, որ Պռոշեանցն արդէն Բաղու�է և կամենում է ինձ տեսնել։

Ահա անսպասելի մի լուր։

Չէ՞ որ նոր կարդացել էի մի հայ լրագրի մէջ, որ Պռոշեանցը Ալէքսանդրապոլով անցել է Աշտարակ իւր առողջութիւնը վերականգնելու, դիմեցի ես այս հարցով պ. Վարշամեանցին։

—Այո՛, նա գնացել էր Աշտարակ ու մի քանի օր է որ վերադարձել է Բաղու և այժմ հիւանդ պառկած է իւր փեսայ Ստեփան Տիգրանեանցի բնակարանում, բացատրեց բժ. Վարշամեանը։

Իսկոյն գնացի այցելութեան։

Ստեփան Տիգրանեանցի բնակարանը այդ միջոցին Տարգովայա փողոցումն էր, տիկին Տէր Յակոբեանի տան երկրորդ յարկում։ Էլէքտրական զանգը քաշելուց յետոյ ընդառաջ դուրս եկաւ Պռոշեանցի մեծ դուստր՝ տիկին Տիգրանեանը։

—Այո, եկել է հայրս, հիւանդ է և պարկած է մի փոքր սենեակում. ա՜խ, որքան լաւ կլինէր, եթէ դուք համոզէիք նորան գնալ դէպի փողոց նայող հիւսիսային սենեակը, որ աւելի ընդարձակ է, խնդրեց ինձ տիկին Տիգրանեանցը և առաջնորդեց ինձ սեղանատան միջով մինչև այն սենեակն, ուր պառկած էր Պռոշեանցը։

Մտայ ներս. Պռոշեանցը ծգուած էր իւր մահճակալի վերայ, երեսը դէպի միակ լուսամուտը, որ նայում էր դէպի տան բակը և որից հաղիւ մի 2—3 ժամ թափանցում էին արևի ճառագայթները։

—Էս ՞ինտեղ ես, հէր օրհնուած, քանի ժամանակ է սպասում եմ քեզ, դիմեց ինձ Պռոշեանցը և մեկնեց իւր դողդոջուն և դալկացած ձեռքը։

—Էսպէս էլ բան կլինի՞, շարունակեց նա. միքանի օր է վերադարձել եմ Բագու, հիւանդութիւնից չեմ կարողանում տանից դուրս գալ, իսկ իմ բազմաթիւ ծանօթներից ոչ ոք, ոչ՛ ոք չէ այցելում ինձ և չէ մխիթարում ինձ, կարօտ եմ կենդանի խօսքի։

Ներողութիւն խնդրելով՝ ես բացատրեցի, որ չգիտէի նորա անակընկալ գալուստը և, ընդհակառակը, ես կարծում էի թէ նա Աշտարակումն է։ Մի քանի սովորական հարց ու պատասխանից յետոյ, պատրաստուեցի որ հարցնեմ նորա հիւանդութեան մասին, բայց Պռօշեանցը թէքուեց փոքրիկ սեղանի կողմը, վերցրեց զանգակը և հարեց։

Ներս մտաւ մի հայ կին, որ, ինչպէս յետոյ պարզուեց, նշանակուած էր միայն հիւանդին ծառայելու։

Հայ կինը, առանց պատուէրի սպասելու, դրեց հողաթափները հիւանդի կախած ոտերի առաջ և ինքն անցաւ նորա կողքը՝ թեւից բռնելու։

Այս շարժումներից հեշտ էր եզրակացնել, որ կինը արդէն գիտէր իւր անելիքը, արդէն վարժուած էր իւր դերակատարութեան մէջ։ Հիւանդն զգուշութեամբ հագաւ հողաթափերը և յենուած օգնական կնոջ վերայ՝ շատ դանդաղ դուրս գնաց սենեակից։

Ես մնացի միայնակ։ Հազիւ անցաւ մի քանի րոպէ և ուժից ընկած Պռօշեանցը, նոյն կնոջ օգնութեամբ, վերադարձաւ սենեակ, շնչասպառ նետուեց մահճակալի վերայ ու երկար ժամանակ չէր կարողանում հանդստացնել շնչառութիւնը, որ խօսի։

—Տեսնում ե՞ս, ահա այսպէս է իմ դրութիւնը, խոմ մի բան էլ չկայ, բայց հարկադրուած շուտ շուտ պէտք է դուրս գնամ... ախորժակս վատ չէ, բայց կերածս չէ մնում... բարակ ու կցկտուր ձայնով արտասանեց Պռօշեանցը։

Այս խօսքերից արդէն յայտնի եղաւ Պռօշեանցի հիւանդութեան տեսակը և նորա վտանգաւոր դրութիւնը. փոքր խօսելուց յետոյ ես պատրաստուեցի հեռանալու հիւանդի բնակարանից։

—Գաբրիէ՛լ, հիւանդոտ ձայնով դիմեց ինձ Պռօշեանցը՝ երբ ես հրաժեշտի ձեռքս մեկնել էի դէպի նա, Աստուած սի-

բես, չմոռանաս ինձ, շուտ շուտ սրի մօտս, գիտեմ ծառայութեանդ դուցէ երբեմն արդելք լինեմ, բայց խնդրում եմ, մոռացութեան չտալ ինձ...

Մահճակալի մէջ նստած՝ Պռօշեանցն արտասանեց այս խօսքերը, գլուխը թեքեց ձախ ուսի վերայ աչքերը դէպի ցած և ձախ ձեռքով զանգահարութեամբ նորից պատրաստուեց հայ կնոջը կանչելու...

Ես միամտացրի, որ կայցելեմ և դուրս գնացի։

Երկու օրից յետոյ նորից այցելեցի Պռօշեանցին, որ չափազանց ուրախացաւ և սկսեց դանդատուել ուրիշ ծանօթներից։

— Երևակայիր քեզ, Գաբրիէլ, մի քանի օր առաջ, մարդի միջոցով խնդրել էի Գ. և Ե. քահանաներին, որոնք ջոկ ջոկ հարիւր միքանի բոպէով մատն մօտս ու այնուհետև էլ չեմ տեսնում նրանց երեսը... երևի ծանր է հիւանդի հետ ժամանակ անցնելը։ Գիտէ՞ս, որքան ծանօթ ունիմ այստեղ՝ Բագուում, բայց նորանցից ոչ ոք չէ երևում, կարծես Սահարայի անապատում ենք։

Դէմքը թեքեց միւս կողմի վերայ և խոր մտածմունքի մէջ ընկաւ։ Մի բոպէից յետոյ նորից շարունակեց իւր արտունչը.

— Օտարը խոմ օտար է, բայց հարազատներս էլ կարծես օտարացել են ինձանից... մտնել, տեղեկանալ, հարցնել ուտելս, կամ խմելս... ոչ ոք... դարդակ բան է... երանի կամ կինս կենդանի լինէր, կամ ես մեռնէի կնոջս հետ միասին... զայրացած ու յուսահատ արտասանում էր հիւանդը։

Այս խօսքերի վրայ ես չգիտէի ինչ պատասխան տամ, կամ ինչով մխիթարեմ նորա կոտրուած սիրտը. ուստի նորան հոգեպէս հանդստացնելու նպատակով կամեցայ հեռացնել նորա ուշքը այդ տխուր նիւթից, և առաջարկեցի բացատրել թէ ի՞նչ հանդամանքներից սարսափած նա, Պռօշեանցը, վերջին անգամ ընկաւ Աշտարակ։ Այդ բոպէին նա արդէն բաւականին հանգըստացած էր. և կարող էր հեշտութեամբ անցնել խօսակցութեան այլ նիւթի։

— Աշտարակ, հա ասեմ, գիտես, Գաբրիէլ, կինս որ մեռաւ, ես արդէն ինձ կենդանի չէի զգում, իմ գոյութիւնս

ինձի չէր թուում, ուստի ես կամենում էի մեռնել և մշանջենապէս հանգստանալ իմ կնոջ կողքին, Թիֆլիսում, Խոջիվանքի գերեզմանատանում կամ հանգչիլ իմ հայրենի հողում, իմ մանկական օրօրանում, Աշտարակ գիւղում։ Մտածեցի, որ իմ հայրենակիցները կճանաչեն ինձ... չեն թողնիլ անհետ կորչելու... մի քանի ժամանակ կեանք կունենամ, թող կեանքիս այդ ամենաչնչին մասը անցկացնեմ իմ ծննդավայրում. ահա այդ մտքով էլ դնացի Աշտարակ. պատասխանեց հիւանդը և բոպէական ընդհատումից յետոյ նորից շարունակեց խօսակցութեան թելը։

—Դորա համար, մտածեցի ես. առաջարկել հայրենակիցներիս շինել հասարակութեան հաշուով երկու սենեակ, մինը դրադարանի համար, միւսը իմ բնակութեան համար, որ իմ մահից յետոյ կլիներ էլի հասարակաց դրադարանի սեփականութիւն։

Այս խօսքերի վրայ կանգ առաւ Պռոշեանցը, որովհետև զանգը կանչեց հայ կնոջը։ Դուրս դնաց կմախք դարձած Պռոշեանցը՝ ոտերն իրար զարկելով, մէջքը կռացած և ապա նորից վերադառնալով ընկաւ մահճակալի մէջ և շնչասպառութիւնից հանդստանալուց յետոյ, նորից շարունակեց իւր պատմութիւնը։

—Ո՞րտեղ մնացի. հա, մի սենեակի փոխարէն ես խոստացայ տալ Աշտարակի հասարակութեան ընդ միշտ առաջին՝ իմ բոլոր գրեանքս, երկրորդ՝ իմ հեղինակութեան ժառանգական իրաւունքը, որից հասարակութիւնը կարող էր ունենալ մօտ 300 ռուբլի տարեկան եկամուտ հիմնուելիք դրադարանի օգտին։ Ես մտածեցի, որ եթէ այդ իրաւունքը թողնեմ իմ օրինաւոր ժառանգներին, իւրաքանչիւրին հազիւ հասնի տարեկան 50 ռուբլի, մի չնչին գումար, որ ստացողին առանձին օգուտ տալ չէ կարող, այն ինչ մի հասարակաց դրադարանի համար տարեկան 300 ռուբլի մշտական եկամտի աղբիւր՝ ունի մեծ նշանակութիւն։ Ուստի խորհուրդս յայտնեցի մօտիկներիցս ոմանց ու ինչ կասկած, դտայ հաւանութիւն։ Մնաց ընդհանրացնել գործը։

—Հէնց այդ միջոցին—շարունակեց հիւանդը—քո collega-ն ու իմ համագիւղացի բժիշկ Մնացական Յարութիւնեանցը ժա-

մանակաւորապէս գտնուում էր դիւղում և պատրաստւում էր տալ հաստատակութեանը մի ճաշկերոյթ. Աշտարակումն էր նաև ինձ և քեզ քաջածանօթ բարեկամ Սուքիաս արքեպիսկոպոս Պարդեանցը, կտակիս համակրողներից մինը։ Տեսնում ես, հանդամանքները կարծես յաջող ելք էին խոստանում։ Ահա խնջոյքի ժամանակ...

Այս խօսքի վերայ Պռօշեանցը աքալով և հեւալով էլի թեքուեց դէպի սեղանի վերայ գրած գանդը և ներս մտնող հայ կինը այս անգամ ստացաւ հիւանդից պատուէր՝ բերել մի բաժակ կաթ։ Կաթը կամաց կամաց, կում կում, սկսեց խմել և նորից շարունակել իւր պատմութեան թելը, որ կարծես թէ իրան էլ հետաքրքրում էր և նա դոհ էր, որ ես առանց ծանծրանալու լսում էի ու ընկերակցում էի նորան։

—Հա, հացկերոյթի ժամանակ առաջարկուեց և իմ կենացը, ճառերի մէջ յիշեցին Ներսէս կաթողիկոսին, Սմբատ Շահաղիզին ու այլ աչքի ընկնող աշտարակցիներին, պնդելով որ մեզպէսներն են Աշտարակին փայլ տուողը, նորա անունը բարձրացնողը, որ բախտաւոր են ներկայ աշտարակցիք, որ մեզ պէս հայրենակիցներ ունեն և ապագայ սերունդը երախտագիտութեամբ և հպարտութեամբ պէտք է յիշի Պռօշեանցների, Շահաղիզեանցների և այլոց անունները. մի խօսքով, բանը ինչ երկարացնեմ, Գաբրիէլ, գիտես էլի թէ՝ այդ տեսակ հանդամանքներում, կարմիր ու ճերմակ գինու բաժակներից յետոյ ինչ բառեր են թնդում օդի մէջ։

—Մանաւանդ այնպիսի բանաստեղծական դիրք ունեցող տան մէջ, Քասախ գետի ծառաղարդ ժայռի գագաթին, ուր դրած է բժ. Մնացական Յարութիւնեանցի տունը, ուր այդ ճառերը արտասանւում էին, աւելացրի ես։

—Այո, այո, կամրջի դլխին, ախ ինչ հրաշալի պատկեր է այդ տեղ դարնան ժամանակ, կցեց Պռօշեանցը և շարունակեց իւր պատմութիւնը։ Հա, այդ ընդհանուր ոգևորութեան ժամանակ ահա առաջարկուեց իմ կտակը։ Որքան հացկերոյթը շարունակուեց, հանդիսականները միահամուռ դոմում դոմփանում էին իմ յղացած միտքը և նպաղ պատրաստականութիւն էին յայտնում իրագործել կտակս, այսինքն շինել մի տուն 2 սենեակից

իւր պարագաներով հասարակաց դրադարանի և իմ բնակութեան համար, որի վերայ հաղիւ ծախսուէր 2000 ռուբլի։ Ճաշկերոյթը վերջացաւ, հրաւիրեալները ցրուեցին։

Այստեղ Պռօշեանցը խնդրեց, որ մի փոքր ընդհատուին լինի խօսակցութեան մէջ, որպէս զի կարողանայ շունչ առնել և ապա շարունակել.

—Հա, հետևեալ օրը, շարունակեց Պռօշեանցը, կազմուեց մի համախօսական, մէջը արձանագրուեց իմ կտակը և երեկեան ոգևորուած հասարակութեան խոստումները և ապա մի հաւատարիմ մարդու ձեռքով սկսեցին պրտրացնել գիւղում ստորագրութիւն ժողովելու։ Հէնց այդ տեղ երևաց ներկայ աշտարակցիների ներքինը... ախ, ինչ անեմ, Գաբրիէլ, հապա հալ չի, թէ չէ աշտարակցիներին նորից կնրկարագրէի... Համախօսականը ներկայացնում են մինին, որ պատասխանում է «էհ, հեր օրհնած, չէք թողնի որ լուսանայ, ինչ էք առաւօտ...», միւսը՝ թէ «ոնց կարելիա, առաջ պէտք է տանել այս ինչ պարոնին, նա իշխան է, առաջ նա պէտք է ստորագրի». երրորդը՝ թէ «ես կամ ու կամ, ես նաղդ եմ, դուք դեռ տարէք այս ինչ մարդուն...» չորրորդը՝ թէ «ամենայն ուրախութեամբ կստորագրեմ, բայց հիմայ ժամանակ չունիմ, ծիս թամքած է, շտապում եմ գնալ Ալինաղեղ, էնտեղից էլ Աբարան, ուր մի ամսաչափ կուշանամ...» հինգերորդը՝ թէ «էհ, ինչ անենք թէ խոստացայ, բա հացկերոյթի ժամանակ կասեն թէ չէ, համածայն չեմ, ոնց կլինի...», վեցերորդը՝ թէ եթէ ուրիշները կստորագրեն, ես էլ կստորագրեմ...» և այն և այլն։ Հապա, էն անիծուածները էս պէս օրին բերին դլխիս և համախօսականը մնաց մի թղթի կտոր, որ ո՞վ գիտէ, քամին ո՞ր կողմի վերայ տարաւ։ Այսպէս վարուեց ինձ հետ այն Աշտարակը, որին ես զոհել եմ իմ կեանքի ամենաեռանդուն և ամենաթանգագին ժամանակը։ Ձեռք վերցնելով Աշտարակից՝ ես յաւիտեան և ընդմիշտ դէն ծգեցի նորան և եկայ Բաղու. դժգոհութեամբ վերջացրեց իւր պատմութիւնը Պերճ Պռօշեանցը։

Ժամանակը երեկոյեան դէմ էր, կերակուր բերին հիւանդի համար, ուստի ես հեռացայ և խոստացայ այցելել հետևեալ օրը։

Միւս օր՝ սովորական ժամին ես մտայ Պռօշեանցի

սենեակը։ Նոյն կացութիւնը, նոյն դրութիւնը, նոյն կենցաղն ինչ որ երեկ. միայնակութիւն, բացակայութիւն հարազատների և ծանօթների, նաև բացակայութիւն խնամող բժիշկների։ Միայն հայ կինն էր, որ երբեմնակի երևալով դանդի ծայնին, կատարում էր իւր դերը։

Սովորական ողջոյնից յետոյ ես նստեցի աթոռի վերայ, հիւանդի դէմ, որն այդ միջոցին ծղուած էր մէջքի վերայ մահճակալի մէջ, ձեռքերն աջ ու ձախ կողմից դրած գլխի տակ, կարմիր ֆէսը քիչ աչքերի վերայ քաշած, լուռ նայում էր դէպի լուսամուտը։ Մի քանի րոպէից յետոյ ինքն իր լռութիւնը խախտելով սկսեց խօսել։

— Հաւատացնում եմ քեզ, Գաբրիէլ, որ այս իմ անիծեալ հիւանդութեանս ժամանակ՝ միակ ու միակ մխիթարութիւնս արևի նառադայթներն են, որ լուսամուտով ընկել են վրաս։ Բնութեան այդ հրաշալի պարգևից անդամ ես զուրկ եմ, ըստորում սենեակս ունի այնպիսի մի դիրք և այս միակ լուսամուտն այնպէս է դրած, որ արևն իւր կենսատու նառադայթները հազիւ մի երկու ժամ կարողանում է ծղել իմ վերայ, իմ այրած, մաշուած սիրտս մխիթարելու... և մերոնք այս մխիթարութիւնից կամենում են զրկել ինձ, կամենում են տեղափոխել հիւսիսային կողմը, իսկ ես ամենևին չեմ համաձայնիլ և այս սենեակս չեմ ծդիլ... մի քանի օր կեանք ունեմ, գոնէ արևն ինձ մխիթարի, այս արևի համար եմ ապրում... ապրելս այսուհետև ուրիշ նպատակ չունի...

Նորից լուսահատութիւն, նորից խորհրդաւոր լռութիւն, բայց խորհրդաւոր մտածմունքի և այդ լռիկ րոպէին Պռօշեանցը իւր խորն ընկած աչքերը և գունատ ու մաշուած դէմքը յանկարծ ինձ վերայ դարձնելով և ձեռքը մեկնելով արտասանեց կարծես իւր դաղտնի մտածմանց շարունակութիւնը։

— Ախր էլ ի՞նչ ապրեմ է՞, ո՞ւմ համար ապրեմ... ո՞ր նրպատակիս համար ապրեմ... կինս մեռաւ... մեծ որդիս իւր անխոհեմ ուղղութեան համար յաւիտեան աքսոր դնաց, միւս զաւակներիս համար աւելորդ ծանծրութիւն եմ... էլ ո՞ւմ համար ապրեմ... չէ՛, ես պէտք է մեռնեմ, ես ուզում եմ մեռնել, մեռնելն ուղղակի իմ ցանկութիւնս է... և ես հաս-

տատ գիտեմ, որ պէտք է մեռնեմ այս ցաւից. միայն կցանկայի այստեղ չմեռնել, որպէս զի այս սենեակը չկորչի... կինս որ մեռաւ Թիֆլիզում, նորա մահից յետոյ ոչ ոք զաւակներիցս չէր ուզում մտնել նորա սենեակը և ես հարկադրուեցայ փոխել բնակարանս։ Այս է իմ ցանկութիւնը, մեռնել և այս բնակարանում չմեռնել... Իմ շիրիմս պէտք է լինէր Աշտարակում, իմ մայրաքաղաքում, բայց ոչ իմ կարողութիւնս թոյլ տուեց տուն շինել մեր գիւղում և ոչ Աշտարակի հասարակութիւնը կամեցաւ կատարել վերջին ցանկութիւնս—տալ ինձ 3 արշին հող... Աշտարակցոց վարմունքից յետոյ՝ արդէն ինձ համար բոլորովին միևնոյն է թէ որ տեղ կամփոփեն իմ ոսկրներս, այստեղ՝ Բաղու, թէ մի այլ տեղ...

Ես դիտմամբ խառնուեցի խօսակցութեան մէջ, աշխատեցի ըստ առաջնոյն հեռացնել նորա ուշքն այդպիսի մտածմունքներից, որ չափազանց վնասակար էին նորա հոգեպէս հանգստութեան համար. իսկ Պռոշեանցը հակառակեց.

— Չէ, Գաբրիէլ, դու չգիտես իմ դրութիւնը, ապրելս ի զուր է և ես կմեռնեմ... միայն հեղինակութեանց ժառանգական իրաւունքի մասին և դրեանցս մասին, Աշտարակի դէպքից յետոյ, փոխել եմ մտադրութիւնս։ Վճռել եմ յատկացնել այդ երկուսն էլ Ներսիսեան դպրոցին, որ ինձ դաստիարակել է, կրթել և սնուցել։ Եւ արդէն խնդրել եմ Սահեփանին (իւր փեսայ, փաստաբան Տիգրանեանց Բաղումի), որ այս մտքով մի կտակ շինի իմ անունից։

Քանիցս որ այցելել էի Պռոշեանցին, չէի հանդիպել նորա մօտ ոչ դեղօրայք և ոչ խնամատար բժիշկի, ըստ որում նորա խնամող հայ բժիշկները Զ. և Վ., հիւանդի ասելով, զնացել էին ս. Էջմիածին Վեհափառ Խրիմեանի թաղմանը հանդիսատես լինելու։ Այն ինչ հիւանդի դրութիւնը օրէցօր վատթարանում էր, իսկ անալին դրութիւնը մնում էր անփոփոխ, չկար կարևոր հոգատարութիւն, բժշկական խնամք, հոգեպէս հանգստութիւն և այլն, որոնք ներկայ հանգամանքում խիստ կարևոր էին։ Այդպիսի յարմարութիւնները կարելի էր դանել միայն լաւ հիւանդանոցում։

Ուստի Պռոշեանցի խօսակցութիւնից օգուտ քաղելով, խօսք բացի հիւանդանոցի մասին, միայն վախենալով, թէ, մի գուցէ, Պռոշեանցի կողմից դժգոհութեան հանդիպեմ։ Իսկ նայ, իմ սպասածին հակառակ, մեծ յօժարութիւն ցոյց տուեց, աւելացնելով որ իւրայինները հակառակ են նորա հիւանդանոց գնալուն, որպէս զի չենթարկուեն քաղաքի «ասէկօսէին»։ Վերջին խօսքերը մտածողութեան և փոխադարձ խորհրդակցութեան առիթ եղան իմ և Պռոշեանցի մէջ։ Դարձնել ուշադրութիւն փողոցային «ասէկօսէներին» և թողնել հիւանդին անխնամ դրութեան մէջ, թէ՞ հիւանդի դրութիւնը վտանգաւոր համարելով գերակշիռ համարել նորա անձնական շահերը։ Ես պնդում էի վերջին տեսակէտի վրայ և Պռոշեանցը լիովին համաձայն էր ինձ հետ, ուստի երկուսով համաձայնեցինք ի կատար ածել մեր որոշումը, այսինքն հիւանդ Պռոշեանցի անձնական շահերը գերադաս համարելով, տանել նորան (հիւանդին) մի բարեկարգ հիւանդանոց։

Իսկ ինչ կվերաբերի հարազատների ընդդիմութեանը, որ հիմնուած էր ասէկօսէներից վախենալու վերայ, Պռոշեանցն ինքը չարաչար հակառակ էր թէ ասէկօսէներին և թէ իւրայինների ընդդիմութեանը և վճռել էր անպայման գնալ դրա հակառակ։

Այնուհետև մնում էր ընտրել մի յարմարին հիւանդանոց։ Կանգ առայ դոքտոր Գալկինի հիւանդանոցի վրայ, բայց սա թանդ էր, օրական 3 ռուբլի, որ Պռոշեանցի համար ծանր էր, ըստ որում նորա բոլոր դրամական կարողութիւնը այդ միջոցին, նորա ասելով, հասնում էր ընդամէնը մօտ 200 ռուբլի։

Հիւանդանոցի ընտրութիւնը մնաց հետևեալ օրուան և տուն վերադարձած, հեռախօսով ես, այնուամենայնիւ, խընդրեցի դոքտոր Գալկինի համաձայնութիւնը մի առանձին սենեակ յատկացնելու իւր հիւանդանոցում։ Երբ հետևեալ օրը նորից մտայ Պռոշեանցի բնակարանը, այդտեղ հիւանդանոցի ընտրութեան հարցը և մանաւանդ գործի դրամական կողմը կրկին բեմ բարձրացան։ Եւ այդ խորհրդակցութեան ժամանակ միտք ծագեց դիմել Նաւթարդիւնաբերողների խորհրդի Սև

քաղաքի հիւանդանոցի վարչութեանը։ Այդ հիւանդանոցը իւր փառաւորութեամբ ապիս է բոլոր յարմարութիւններ։

Մի կարևոր արդելք էր միայն հանդիսանում մեր առաջ, որ եթէ Պռոշեանցին ընդունեն հիւանդանոցում, այդ շնորհը պէտք էր վերագրել Պռոշեանցի արժանապատուութեանը, բսա որում Նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցները նաւթային գործերում ծառայողների համար են։ Բայց խորհրդի գործերի կառավարիչը հաճութեամբ ընդունելով մեր դիմումն, հարթեց ճանապարհը և այսպիսով որոշուեց որ հետևեալ օրը Պռոշեանցը ընդունուի Սև քաղաքի հիւանդանոցը ծրիապէս։

Գործի այսպիսի ընթացքով Պռոշեանցը շատ գոհ էր, մինչև անգամ ուրախ։ Այստեղ հիւանդը չարաչար թախանձում էր ինձ որ վաղը նորան հիւանդանոց տանեմ ես և ոչ այլ ոք. իսկ ես ամէն կերպ աշխատում էի համոզել նորան, որ աւելի յարմար է եթէ տանեն իւրայինները։ Այնուամենայնիւ անկարելի եղաւ համաձայնեցնել նորան, ուստի անճարացած և հիւանդին հանգստացնելու համար խօսք տուի վաղը գալու։

Վաղը կիւրակի էր, 1907 թուի Նոյեմբերի 11. Արդէն առաւօտ է։ Քանի մօտենում էր Պռոշեանցի մօտ գնալուս ժամը, այնքան աւելի էր հնչում հոգիս, ըստորում զգում էի որ այս օրը մի տեսարան պէտք է բացուի, սպասում էի որ երկուստէք մի հակառակութիւն պէտք է երևան գայ, հիւանդը ամենայն ուժով պէտք է ծգտի դէպի հիւանդանոց, իսկ նորա հարազատները պէտք է ընդդիմադրեն նորան և ես այդ ընտանեկան տեսարանին ակամայ ներկայ պէտք է լինեմ։ Ուստի ինձ համար գնալ անտանելի էր, իսկ չգնալ՝ անկարելի։

Գնացի։ Մտայ Պռոշեանցի սենեակը։ Հիւանդն արդէն ինձ սպասում էր, գալուստս յայտնի էր և նորա հարազատներին։

Հիւանդը պառկած դրութիւնից նստեց մահճակալի վերայ և սկսեց ժողովել իւր իրեղէնները. սեղանի վրայից վերցրեց մանր պատկերները և այլ մանրիկ առարկաներ, ծալեց թաշկինակները, շապիքները և միւս սպիտակեղէնը և այլն։ Այդ բոլորը դարսեց մի առ մի իւր թեթև արկղի մէջ, որ կարծես պատրաստուում է մի երկար ճանապարհորդութեան։

Ես հեռու նստած աթոռի վրայ, դիտում էի հիւանդի դործունէութիւնը և մտածում թէ հիւանդ մարդը, որքան էլ ցանկալիս լինի իւր մահը, այնուամենայնիւ ձեռքից բաց չի թողնիլ կենաց յուսոյ նշոյլը։ Ի՞նչ էր մտածում այդ խորհրդաւոր բոպէին Պռօշեանցը, ես չդիտեմ. միայն երկուսս էլ լուռ էինք։

Ձանգակը զարկեց. ներս մտաւ հայ կինը և պատուէր ստացաւ հագցնել հիւանդին իւր հանդերձը և ժողովել ու կապել նոր անկողինը։

Այդ միջոցին ներս մտան երկուսը հիւանդի դաւակներից և աղաչում էին հօրը չգնալ հիւանդանոց, մինչև անդամ չէին թողնում որ նա հագնուի։ Բայց Պռօշեանցը անդրդուելի կերպով ընդդիմանում էր։ Վերջապէս հագնուած և հայ կնոջ վերայ յենուած դուրս եկաւ սեղանատուն։ Ես դնացի նորա հետքից։

Սեղանատանը շրջապատեցին Պռօշեանցին նորա դաւակները և ուժով արդելում էին նորան դուրս դնալ տնից։ Պռօշեանցը խիստ զայրացած ընդդիմանում էր։ Բարձրացաւ աղմուկ, դժդոհութիւն, աղաչանք, բողոք, ամէն տեսակ զդացմանց արտայայտութիւն։

Իմ դրութիւնս անտանելի էր։ Հէնց այդ բոպէին ես նրկատեցի դահլիճում բժիշկ Վարշամեանցին և խիստ խնդրեցի որ նա փոխարինի ինձ և հիւանդին տանի յանձնի հիւանդանոց։ Որովհետև հիւանդանոցի վարչութեանը անձանօթ էին և Պռօշեանցը և բժ. Վարշամեանցը, ուստի տուի նորանց հարկաւոր տոմս և ինքս իսկոյն և եթ հեռացայ Տիդրանեանի բրնակարանից։

Ոտնկոխ անելով աղերսանքն ու արդելքները, Պռօշեանցը դուրս է պրծնում ուժով ու առանց օդնութեան իջնում է երկրորդ յարկից աստիճաններով մինչև Տարդովի փողոց և այդտեղ, դրան առաջ նստում։ Ապա իջնում է բժ. Վարշամեանցը և կառքով տանում հիւանդին յանձնում է հիւանդանոցին։

Նոյեմբերի 14 այցելութեան դնացի Պռօշեանցին. նորա համար դատարկել էին բժիշկների ընդունարան—սենեակը, ուր միայնակ պառկած էր հիւանդը։ Սենեակը փառաւոր, մաքուր,

լուսաւոր, կահաւորուած, բժշկական և կենցաղավարական հոգատարութիւնը օրինակելի։ Ինքը հիւանդը շատ գոհ էր ամէն բանից, միայն ծանծրանում էր որ իւր բաղմաթիւ ծանօթներից այցելում էր հիւանդանոցում ամէն օր միայն բժ. Վարշամեանը։ Զեմ խօսում Պռոշեանցի դաւաճէների և փեսայի մասին, որ իւրաքանչիւր օր այցելում էին։ Հիւանդի ծանծրութիւնը սասկանում էր մանաւանդ գիշերները, երբ մնում էր միայնակ։ Ուստի նա խնդրում էր բժ. Վարշամեանին որ գիշերները մնայ նորա մօտ։ Այդ անկարելի էր։

Չնայելով հրաշալի հոգատարութեան, հիւանդի ոյժը օրեցօր պակասում էր, այլ և նա չէր կարողանում նստել մահճակալի մէջ, բայց յիշողութիւնը, դատողութիւնը խիստ լաւ էր։

Հասաւ Նոյեմբերի 22, հինգշաբթին։ Հիւանդի դրութիւնը կրիտիքական էր, այլևս ոչ մի յոյս, գիշերը անցրեց անքուն և անշարժ և Նոյեմբերի 23-ին 1907 թուի, ուրբաթ առաւօտեան ժամի 8 և 30 րոպէին այլ ևս չկար Պերճ Պռոշեանցը։

Գնաց յաւիտենականութեան գիրկը հայ գրականութեան չարքաշ մշակներից մինը, որ ծնուեց աղքատութեան մէջ և մեռաւ օտարութեան ու չքաւորութեան մէջ։ Թող այսուհետև նորա բաղմաթիւ երկերը յիշեցնեն նորա անունը։

Ուրբաթ, Նոյեմբերի 23 երեկոյեան դէմ, խոնաւ եղանակին, Սև քաղաքի կողմից Տելէֆոնի փողոցով դանդաղ ընթանում էր երկու ձի լծած մի սև դիակառք։ Հայ կառապանը սև զգեստ հագած, կամաց կամաց շարժում էր դիակառքը երկար ու լայն փողոցով։ Դագաղի մէջ՝ դիակառքի վերայ անշարժ հանգստանում էր մի կորացած, ոսկը դարձած դիակ։ Այդ Պերճ Պռոշեանցն էր։

Նորա ետևից գնում էին հազիւ 2—3 կառք հանգուցեալի հարազատներով։ Ամբոխը դեռ կարծում էր թէ Պռոշեանցը դեռ ևս կենդանի է, դորա համար էլ գաղտնի էր պահում իւր յարգանքը, սպասում էր որ հիւանդը անշնչանայ, դիակ դառնայ, որ ըստ այնմ արժանանայ յարգանքի։

Հասաւ դիակառքը Տարգովի փողոց և Պերճ Պռոշեանցը

լռիկ մնչիկ անցաւ այն տան կողքից, որտեղից 12 օր առաջ աղմկայոյզ կերպով դուրս եկաւ դէպի Սև քաղաքի հիւանդանոցը։

Ահա դիակառքը կանգ առաւ հայոց եկեղեցու առաջ և Պերճ Պռօշեանցը՝ իւր փոքրիկ տնակի մէջ՝ մտաւ հայոց եկեղեցին դիշերելու այնտեղ։ Նա այժմ միայնակ է, բայց վաղը կսկսի նորա դիակի յարգանքը։

Արդարև շաբաթ օրը տեղական լրագրների մէջ դուրս եկաւ Պռօշեանցի մահուան յայտարարութիւնը և այդ օրը պատարագի ժամանակ, եկեղեցում ասեղ ծգելու տեղ չկար, այնքան շատ էր յարգողների թիւը։

Պատարագը վերջացաւ. եկեղեցու բագում լուսանկարով հանեցին հանգուցեալի պատկերը և ապա դագաղը նորից բարձրանալով դիսկառքի վրայ հոգևոր երգերով շարժուեց դէպի երկաթուղու կայարանը Թիֆլիզ գնալու։

Ժողովրդի խուռն բազմութիւնը, կառքերի ահագին խումբը Տելէֆոնի լայն փողոցում կանգնացրել էին շարժումը, կանգ էին առել և ծիաքարշերը։ Տխուր հանդէսը դանդաղաքայլ յառաջ էր գնում դէպի երկաթուղին։ Հասարակութիւնը ոտով էր գնում ի պատիւ հանգուցեալի...։ Շատերը, մանաւանդ կանայք, խօսակցում էին թէ ինչպէս, ինչ ձևով և երբ յաւերժացնեն հանգուցեալ Պռօշեանցի յիշատակը։

Երկաթուղու գնացքը պատրաստ կանգնած է։ Ծայրի վագոնը Պռօշեանցի համար է։ Նա գնում է Թիֆլիզ իւր վաղեմի փափագը, իղձը լրացնելու, այն է մշտնջենապէս հանգստանալու իւր կնոջ կողքին...։ Նորա ցանկութիւնը կատարեց նորա փեսայ Ստեփան Տիգրանեանցը, որին Պռօշեանցը իւր կենդանութեան ժամանակ չափազանց յարգում էր։

Թէև հարկ էր այստեղ դնել վերջակէտ, բայց որպէսզի մահանկարը լրիւ լինի, ինձ հարկաւոր է յիշատակել և այն յարգանքը, որ գալիս էր հեռագրների միջոցով։ Այս հեռագրները օրինակ են, թէ ո՞րպիսի յարգանք է վայելում միևնոյն անձնաւորութիւնը իւր կենդանի և մեռած ժամանակ։ Ահա նմուշի համար մի երկուսը։

Բաղուից 1 դեկտեմբերի։

«Հայրենի գրական անդաստանի բազմավաստակ մշակնե-
ըից մեկն էլ պակասեց։ Արարատեան շինականներին յաւեր-
ժացնող մեծ լուսանկարչի թարմ գերեզմանի առաջ երախ-
տագիտութեամբ գլուխ ենք խոնարհեցնում», Յակոբ Խոչամի-
բեանց, Աբել Տէր Բաղդասարեան, Գարեգին Շահինեան, Սար-
գիս Տէր Զաքարեան, Յարութիւն Այվազեան, Արսէն Բալա-
յեան, Անտոն Տէր Գրիգորեան, Պետրոս Մելքումեան, Մարկոս
Զալալեան, Տիրան Սարգսեան, Մկրտիչ Մանուչարեանց»։ Մշակ
1907 թ. դեկտ. 4 № 173.

«Երախտագիտութեամբ գլուխ խոնարհեցնողներից» շատե-
ը, երևի, քանիցս անգամ անցել էին Տարգովի փողոցով և գի-
տէին, որ գլխի վերևը, մի փոքրիկ սենեակում միայնակ ընկած
է իւրեանց «մեծ նկարիչը» և որոնում է մի ընկեր, մի ծա-
նօթ, մի խօսակից, մի մխիթարող, սակայն բոլորն էլ սպա-
սում էին որ «նկարիչը» առաջ դիակ դառնայ։ «Գլուխ խո-
նարհեցողներից» մինը—Արսէն Բալայեանցը—եթէ չեմ սխալ-
ւում, նա է, որ շատ տարի առաջ, իբրև Բաղուի պատգամա-
ւոր Ներսիսեան դպրոցի յոբելեանի ժամանակ Թիֆլիզում, բազ-
մաթիւ հանդիսականների առաջ ջերմաջերմ համբոյրներ էր տա-
լի Պերճ Պռոշեանցին։ Իսկ այժմ... սորա հիւանդ ժամանակ...

Ահա մի այլ հեռագիր։

Էջմիածին 26 Նոյեմբերի.

«Հեռագիրը հաղորդեց մեր սիրելի հայրենակից Պերճ Պռո-
«շեանցի մահը։ Հասարակութիւնը յանձին Պռոշեանցի ողբում է
«իւր պարծանքներից մինին։ Պսակի փոխարէն որոշուած է
«Պռոշեանցի անունով գրադարան-ընթերցարան հիմնել։ Խնդ-
«րում ենք հանգուցեալի թաղման ժամանակ լինէք մեր ներ-
«կայացուցիչը և հասարակութեան անունից յայտնէք ցաւակ-
«ցութիւն։ Հոգեհանգիստ պիտի կատարուի։ Աշտարակի զիւ-
«ղական հասարակութեան հաւատարմատար Խաչատուր
«Քոչարեանց։ Վտակ. 1907 թ. Նոյեմբ. 28 № 7».

Աշտարակի ներկայացուցիչն իւր այս հեռագրով գիտէք
ում է դիմում, Թիֆլիզի առաջնորդ Սաթունեան Գարեգին արք-

եպիսկոպոսին։ Համեմատեցէք Աշտարակի հեռագիրը և Պռօշեանցի կտակի պատմութիւնը, բժ. Յարութիւնեանցի ճաշկերոյթը և այլն։ Հետաքրքրականն այն է, որ պսակ չեն դնում, ծախս կպահանջի, դորա փոխարէն հիմնուելու է գրադարան, իսկ վերջինս կազմելու համար դիմում են օտար քաղաքների անձանց և հաստատութիւններին, որ ձրիապէս գրեանք ուղարկեն, ուղարկեն և փող։ Ուրեմն ապագայ գրադարանը կազմուում է օտարների փողով և գրքերով, սեփականութիւն է Աշտարակի և կրում է Պռօշեանցի անունը։ Հապա հեռագրի փողն ուրմից հարկաւոր է ստանալ... յարմարինը էլի Թիֆլիզի ներկայացուցիչն է...

Այժմ կարդացէք հետևեալ նամակը, որ տպագրուած է Մշակի մէջ № 23 Յունուարի 30, 1908

«Աշտարակ 26 Յունուարի.

«Հիմնուելիք «Պռօշեան» գրադարանի մասնաժողովի ան-«դամներս ստանձնած լինելով մեր պաշտօնը, սորանով խնդրում «ենք բոլոր այն անձերին և հիմնարկութիւններին, որոնք խոս-«տացել են այդ գրադարանին նուիրել գրքեր կամ փող, բարեհա-«ճեն ուղարկել հետևեալ հասցէով. Аштаракъ, книжный «магазинъ „Араксъ“ К. Атомянцу. *Իրաւունք ստանալու «համար դիմումն արել ենք, ուր հարկն է»։*

Մասնաժողովի անդամներ Կ. Ատոմեան.
Մ. Թամազեան.
Հ. Զոլախեան.

Այս ասածներս Աշտարակի մի երեսն է, միւս երեսը կարդացէք բուն աշտարակցի Յ. Արամեանի նամակը Ղամարլու գիւղից 1909 թուի Օգոստոսի 5-ից «Կոչ աշտարակցիներին» խորագրով։ Տես. «Հորիզոն» 1909 թ. № 12.

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

Բաղու

*
* *

Երկինքը ամպոտ,
Երկին մռայլած
Իսկ շուրջս քարոտ
Ժայռեր են կախուած։

Սարի խոր լանջով
Գեսակն է վազում,
Իր հզոր ձայնով
Անհ է տարածում։

Իսկ դու անբախտ սիրտ
Քո ցաւն ես ողբում
Այս մռայլապատ
Խոր ձորի միջում։

Ունայն է շուրջդդ,
Ոչ ոք չի լսում
Քո բիւր դարդերը
Այս մեծ աշխարհում։

ԵՂ. ԱԹԱՆԵԱՆ.

Ի՞ՆՉ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ (*)

III

Օրգանական ուղղութիւն

Բնական գիտութիւնը անցեալ դարու սկզբներում նոր թափով զարթելով ողողեց ամբողջ գիտական աշխարհը։ Շնորհիւ հանճարեղ հետազօտողների նա մեծ տիրապետութիւններ արաւ և իւր վրայ հրաւիրեց գիտական աշխարհի ուշադրութիւնը։ Նրա ազդեցութիւնն ու հմայքը շատ մեծ էր, մինչ այն աստիճան, որ գիտութեան լուրջ ծառայողներն անգամ մի տեսակ տարուեցին նրանով։ Բնական գիտութիւնը ոչ միայն բնութեան ուսումնասիրութեան համար այսպիսով նոր գիտական ճիւղեր առաջ բերեց և նպաստեց եղածներին աւելի ընդլայնելու և խորանալու, այլ և իւր ազդեցութիւնը տարածեց միւս գիտակարգերի վրայ՝ փիլիսոփայութեան, պատմութեան, ի միջի այլոց նաև սոցիոլոգիայի վրայ։ Դուրս եկան մի շարք հեղինակներ, որոնք ոգևորուած բնագիտութեան նոր նուաճումներով աշխատեցին հասարակութեան էութիւնը և զարգացումը բնագիտութեան օրէնքներով բացատրել։ Դարվինի տուած տեսակների ծագման տեսութիւնը մի կողմից նրանց այն հիմքն էր տալի, որ մարդ արարածը կենդանական աշխարհի զարգացման վերջին տեսակն է, որ մարդը շարունակութիւն է կենդանական աշխարհի, հետևապէս մարդկային հասարակութեան ուսումնասիրութեան դէպքում պէտք է ի նկատի ունենալ օրգանական աշխարհի զարգացման օրէնքները։ Միւս կողմից Կոնտն արդէն այն միտքն էր տարածել, որ հասարակութիւնը մի պատահական ու արուեստական երևոյթ չէ, այլ բնական օրէնքներով է կազմուած. հետևապէս եթէ հասարակութիւնը բնական օրէնքների է ենթակայ, պէտք է օգտուիլ այն գիտութեան տեսութիւններից, որը անմիջապէս իւր քննութեան նիւթը դարձնում է բնութիւնը։

---

*) Լումայ 1909 № 5—6

Գիտութեան մէջ առհասարակ յայտնի դրութիւնից են անցնում անյայտ դրութեան ուսումնասիրութեանը, միայն որոշ, յայտնի, պարզաբանուած գիտական օրէնքները հնարաւոր են դարձնում անյայտի ուսումնասիրութիւնը: Բնագիտութիւնը ընդհանրապէս տուել էր մի շարք օրէնքներ օրգանիզմի զարգացման և նրա էութեան վերաբերեալ. մարդկային հասարակութիւնն էլ մի տեսակ շարունակութիւն լինելով օրգանական աշխարհի զարգացման, պէտք է նոյն օրէնքներին ենթարկուէր, յայտնի դրութիւնից պէտք էր անյայտ դրութեան ուսումնասիրութեանը անցնէր: Ահա այս բանավարութեան հետևանք է լինում սոցիոլոգիայի մէջ օրգանական ուղղութեան առաջ գալը և երկար ժամանակ ահագին չափեր ստանալը:

Այս ուղղութեան էական հիմքը այն է, որ հասարակութիւնը ինքը մի օրգանիզմ է, որը իւր զարգացման ընթացքում ենթարկւում է նոյն օրէնքներին, ինչ որ օրգանիզմը: Այս ուղղութեան հետևողներից շատերը հասարակութիւնը ոչ միայն համեմատում են օրգանիզմի հետ, այլ և շատ անգամ նաև նոյնացնում, այսինքն աշխատում էին այն ամենը, ինչոր ունի առհասարակ օրգանիզմը, դտնել նաև հասարակութեան մէջ. ծայրահեղութիւն, որը արդիւնք է եղել բնագիտական նոր օրէնքների թերի ու միակողմանի ըմբռնողութեան: Օրգանական ուղղութիւնը ընդունում է, որ հասարակութիւնը իւր կազմութեամբ մի օրգանիզմ է, որ հասարակութեան կազմող մասերը նոյն դրութեան մէջն են, ինչ որ օրգանիզմի բաղադրիչ մասերը: Ինչպէս օրգանիզմը մի ամբողջութիւն է, կազմուած զանազան մասերից, որոնք միմեանց հետ սերտ կապակցութիւն ունեն, միմեանց լրացնում և պայմանաւորում են, նոյնպէս և հասարակութիւնը մի ամբողջութիւն է կազմուած զանազան մասերից, որոնք միացած են անբաժան իրար հետ, միմեանց պայմանաւորում և լրացնում են: Օրգանիզմը ունի զարգացում, նոյնպէս և հասարակութիւնը. օրգանիզմի զարգացման էական յատկանիշն է ամբողջի միութիւն և մասերի շերտաւորումն. որքան օրգանիզմը զարգացման բարձր աստիճանի վրայ է դտնւում, նոյնքան աւելի նրա բաղադրիչ

մասերը կլանում են ամբողջի կողմից և նոյնքան աւելի տարբերութիւն է առաջ գալի հէնց իրենց այդ մասերի մէջ։ Այս նոյն զարգացման օրէնքն է իշխում նաև հասարակութեան մէջ. որքան մարդկութիւնը յառաջադիմում է, նոյնքան աւելի նրա ամբողջութիւնը ընդլայնւում է, այսինքն կազմող մասերն աւելի սերտ են կապւում ամբողջութեան հետ և նոյնքան աւելի տարբերութիւններ է առաջ գալի նրա բաղադրիչ մասերի մէջ։

Մի կողմից, օրինակ, տեսնում ենք, որ մարդկութեան գաղափարը, որ առաջ նեղ, սահմանափակ էր ու համարեա անհասկանալի, այժմ աւելի քան ընդարձակուել է. նրա մէջ առաջ մտնում էին միայն մի քանի ազգեր. (յոյները նոյնիսկ միայն իրենց էին իսկական մարդկութեան ներկայացուցիչ համարում, իսկ օտարներին բարբարոս), այժմ բոլոր ազգերը պարփակւում են մարդկութիւն գաղափարի մէջ։ Միւս կողմից այդ կազմող մասերի տարբերութիւնը առաջ մեծ չէր. ազգերն իրենց գործունէութեան ֆունկցիաներով շատ չէին տարբերւում. առաջ ազգերը մեծ մասամբ և հողագործ և անասնապահ և արդիւնաբերող էին միաժամանակ, իսկ այժմ ազգերից ոմանք առաւելապէս հողագործութեամբ են զբաղւում, միւսները արդիւնաբերութեամբ (ինդուստրիա), ուրիշները միջնորդների դեր են կատարում։ Այս օրինակից երևում է, որ մի կողմից ամբողջն է մեծանում և բաղադրիչ մասերն են աւելանում, միւս կողմից այդ մասերն աւելի ու աւելի են տարբերւում միմեանցից։ Ինչպէս օրգանական աշխարհում նպատակը ըստ ինքեան դեր չունի, այլ ամեն ինչ մեքենայօրէն է կատարւում, նոյնը նաև հասարակութեան զարգացման մէջ, ոչ թէ առաջուց նշանակուած նպատակը, իւր հողն է դեր խաղացողը, այլ հասարակութեան մէջ գործող մեքենայական ոյժերն են ամեն ինչ առաջ տանում։ Այդպիսով օրգանական ուղղութիւնը հասարակութեան զարգացումն ու կազմութիւնը ըստամենայնի համեմատում է և գտնում է նոյն օրգանիզմի զարգացման ու կազմութեան հետ։

Ուշադրութեամբ նայելով խնդրին՝ կտեսնենք, որ այս ուղղութիւնը և իւր հերթին նիւթի ուսումնասիրութեան հա-

մար թիւր ճանապարհ է ընտրում։ Հասարակութիւնը և օրգանիզմը իրար նմանեցնել չի կարելի այն պատճառով, որ մինչդեռ օրգանիզմի բաղադրիչ մասերից ամեն մէկը ամբողջութեան համար անհրաժեշտ է և նրա բացակայութեան դէպքում օրգանիզմի ամբողջութիւնը կ՚կորչի, նոյնը չի կարելի ասել նաև հասարակութեան վերաբերմամբ. սրա կազմող մասերից մէկը կամ միւսը կարող է պակասել և դեռ ամբողջութիւնը չի խանգարուի։ Օրինակ, եթէ օրգանիզմի որև է անդամը՝ ձեռքը, ոտքը, աչքը, պակասի, ամբողջութիւնը կխանգարուի. այդ նոյնը չի կարելի ասել հասարակութեան վերաբերմամբ. հասարակութեան մի անչափը կարող է մեռնել, հեռանալ ամբողջից, բայց դրանով դեռ ևս ամբողջութիւնը չի խանգարուի։ Միւս կողմից հասարակութիւնը կարող է մեծանալ իւր մասերի թէ որակով և թէ մանաւանդ քանակով, մինչդեռ օրգանիզմի բաղադրիչ մասերի համար չի կարելի ասել, թէ նրանք քանակով կարող են շատանալ։ Մի հասարակութեան անդամների թիւը ժամանակի ընթացքում աճում է, եռապատկւում և քառապատկւում է, մինչդեռ օրգանիզմի անդամները ոչ միայն չեն աճում քանակով, այլ աւելի շուտ պակասում են։

Օրգանիզմի մէջ գիտակցութիւնը կեդրոնացած է մի տեղ. ուղեղն է այն կեդրոնը, որը ղեկավար է հանդիսանում օրգանիզմի համար։ Մի՞թէ կարելի է նոյն բանը ասել նաև հասարակութեան վերաբերմամբ. ո՞վ կարող է ասել, թէ որտեղ է հասարակութեան ընդհանուր ղեկավարող և հսկող ոյժը. կամ հնարաւո՞ր է դործածել նոյն իսկ «հասարակութեան ուղեղ» դարձուածքը։ Դարձեալ մի խոշոր տարբերութիւն օրգանիզմի և հասարակութեան կազմութիւնների մէջ։

Ինչպէս տեսնում ենք, հասարակութիւնը իւր կազմութեամբ արդէն իսկ նման չէ օրգանիզմին և հետևապէս սխալ է նմանութիւն գտնել երկուսի զարգացման օրէնքների մէջ։ Օրգանիզմի զարգացման ընթացքում գլխաւոր ոյժը կեդրոնանում է ամբողջութեան վրայ. մասերը մի տեսակ ծառայական դրութեան մէջ են ամբողջի վերաբերմամբ. նրանք գործիքներ են, որ ամբողջը զարգանայ։ Հասարակութեան զարգացման մէջ մենք

բոլորովին հակառակ երևոյթն ենք նկատում. ամբողջն է ծառայում իւր մասերին. մարդ անհատը միջոց չէ և ոչ գործիք հասարակութեան համար. նա չի ծառայում հասարակութեան ձեռքին իբրև գործիք, այլ ընդհակառակը հասարակութիւնը, ամբողջութիւնն է աշխատում իւր մասերի բարօրութեան համար. եթէ կարելի է ասել, այս դէպքում նպատակը մասն է, իսկ միջոցը՝ ամբողջը։ Օրգանիզմի զարգացման ընթացքում որքան և շերտաւորումն ու համախմբումն առաջ է գնում (дифференціація и интеграція), այնուամենայնիւ ամբողջը ու մասերի յարաբերութիւնը, կապը միշտ ֆիզիօլոգիական է, մինչդեռ հասարակութեան զարգացման ընթացքում նկատում ենք, որ ամբողջի ու մասերի մէջ եղած ֆիզիօլոգիական կապերը հետզհետէ տեղի են տալիս հոգեկաններին։ Անհատը հասարակութեան հետ առաջ կապուած էր աւելի շուտ ֆիզիօլոգիապէս. այժմ ընդհակառակը, հոգեկան կապերն են դեր խաղացողները անհատի հասարակութեան մասը կազմելու խնդրում. անհատը աւելի շուտ ազատ է այս դէպքում, քան անհրաժեշտութեան տակ է։

Ըստ Դարվինեան տեսութեան, օրգանիզմների զարգացման մէջ իշխողը կեանքի կռիւն է. աւելի լաւ յարմարուողը, աւելի ուժեղն է կեանքում տպրում և յաղթանակ տանում. հասարակութեան մէջ իշխողը միշտ կեանքի կռիւը չէ, այլ նաև ընկերսիրական զգացմունքը, անձնազոհութիւնը։ Մարդկային հասարակութեան մէջ միշտ աւելի յարմարուողը չի ապրում, այլ նաև տկարը, թոյլը. օրինակ սարուկները, ճորաները, այժմ մասամբ բանուորները պահպանում են իրենց գոյութիւնը, թէև սրանք կեանքի կռուի մէջ համեմատաբար թոյլ են։ Որքան օրգանիզմը զարգանում է, այնքան աւելի է ուժեղանում նրա մղած կռիւը միւս օրգանիզմների դէմ. եթէ հասարակութիւնն էլ յիրաւի միայն օրգանիզմի զարգացման օրէնքին ենթարկուէր, պէտք է որ անհատական կռիւը աւելի խստանար և հասարակական շահը, ոչ անմիջական անհատական շահը դեր խաղար կեանքում։ Ով պատմութեանը ծանօթ է, չի կարող բողոքել այսպիսի կոպիտ սխալի դէմ։ Միայն կեանքի կռուով առաջնորդուող, աւելի լաւ յարմարուելու ձգտող հասարակու-

թեան անդամներից երբէք անհատական անձնազոհութեան օրինակներ չէինք կարող սպասել. հերոսների գոյութիւնը պէտք է ժխտէինք. պատմութեան էջերից պիտի ջնջէինք Յովհան Հուսի, Սալոնօրոլայի, Վարդան Մամիկոնեանի անունները:

Օրգանիզմի զարգացման մէջ իշխող օրէնքն է, որքան կարելի է աւելի լաւ յարմարուել շրջապատին, աւելի լաւ միջոցներ ձեռք առնել շրջապատի հետ դաշնակցելու: Մարդկային հասարակութեան զարգացման մէջ մենք տեսնում ենք նաև մի այլ երևոյթ. ոչ միայն յարմարուել շրջապատին, այլ նաև աշխատել շրջապատը իրեն յարմարեցնել: Այս երևոյթը զարգացման մէջ մի նոր գործօն ոյժ է. բնութիւնը իրեն յարմարեցնել կնշանակէ ստորադրեալի դերից իշխողի դերի անցնել, մի դրութիւն, որ օրգանիզմին անծանօթ է: Օրգանիզմը միշտ ստորադրուած է շրջապատին և բնութեան օրէնքներին, նրա աշխատանքը միտեսակ կրաւորական է. մինչդեռ հասարակութեան զարգացման մէջ մենք սրա կողքին տեսնում ենք նաև մի ներգործական կողմ. մարդկային հասարակութիւնը վերջին դէպքում մի տեսակ կենդանի կռուի մէջ պաշտպանողական դրութիւնից անցնում է երբեմն յարձակողական դրութեան: Որքան և մարդը ստիպուած է ցրտին տաք հագնուել, շոգին՝ թեթև, նոյնքան էլ նա անանցանելի ճանապարհները կարողանում է հարթել և իրեն յարմարեցնել. հեռաւորութիւնը արդելք չի լինում նրա համար խօսելու (տելեֆօն, հեռագիր). գիշերային մթութիւնը նա կարողանում է էլէկտրական լոյսով լուսաւորել և այլն և այլն:

Օրգանիզմը իւր մղած կենդանի կռուում օգտուում է բացառապէս բնութեան տուած զէնքերով, մինչդեռ այժմ մենք լաւ ենք տեսնում թէ ինչպէս հասարակութիւնը իւր մղած կռիւներում ՝ որպիսի արհեստական գործիքներ է ստեղծել, միջոցներ, որոնք բնութիւնից չեն տուած, այլ միայն մարդկային մտքի ծնունդ են: (Բաւական է յիշել վերջին նշանաւոր պատերազմները, գաղափար կազմելու հասարակութեան մղած կռուի ահռելիութեան ու մեծութեան մասին): Օրգանական տեսութեան պաշտպանները մարդու վրայ սահմանակ նայում են զուտ կենդա-

նական տեսակէտից և նրա հոգեկան աշխարհը կարծես միանգամայն մոռացութեան են տալի։ Անհատը այս ուղղութեան կարծիքով միայն բեհեի դեր ունի և զուրկ է ինքնուրոյնութիւնից. սակայն հասարակութեան զարգացումը այլ բան է ապացուցանում։

Նեշտենք նաև մի հանգամանք, որ օրգանական զարգացումը աւելի նեղ դաղափար է ըստինքեան, քան հասարակութեան յառաջադիմութիւնը։ Օրգանական զարգացման մէջ առաւելապէս խնդիրը օրգանիզմի ֆիզիոլոգիական յատկութիւններին և ոյժերին է վերաբերում. իսկ հասարակութեան յառաջադիմութեան խնդիրը ընդգրկում է դրա հետ միասին և աւելի դեռ մեծ չափով քան այդ մարդու հոգեկան ոյժերի, հոգեկան յատկութիւնների զարգացումը։

Որքան էլ այս ուղղութեան ներկայացուցիչները հռչակաւոր անուններ են, բայց և այնպէս գիտական տեսակէտից նայելով խնդրին, դալիս ենք այն եզրակացութեան, որ հասարակութեան ի՞նչ լինելը և ի՞նչպէս զարգանալը այս տեսութեամբ ամբողջովին չի պարզաբանւում։ Այս ուղղութեան գլխաւոր ներկայացուցիչն է Հերբերտ Սպէնսէրը, որը այս խնդրի վերաբերմամբ բաւական դրուածքներ ունի։ Նշանաւոր են նաև Շէֆլէ, Լիլիէնֆէլդ, որոնք իրենց դրուածքներում հասարակութեան և օրգանիզմի համեմատութիւնը ծայրահեղութեան են հասցրել։

Օրգանական ուղղութեան պաշտպանած տեսութեան իսկական գիտական արժէքից զուրկ լինելը յայտնի է դառնում նաև նրանով, որ նախ այս տեսութեան առաջարկած օրէնքները չեն համապատասխանում արդէն իսկ գոյութիւն ունեցող այլ գիտական օրէնքների ճշմարտութեանը. երկրորդ, որ այդ տեսութեան առաջարկած միջոցներով տեղի ունեցած և ունեցող երևոյթների մեծագոյն մասը չեն բացատրւում։ Ցայտնի է սակայն, որ որքան ճշմարտութեանը աւելի մօտ է մի գիտական տեսութիւն, նոյնքան աւելի երևոյթներ է ընդգրկում նա և նոյնքան աւելի շատ երևոյթներ են պարզաբանւում այդ տեսութեան առաջարկած միջոցներով։ Այսպիսով օրգանական ուղղութիւնն էլ անզօր է երևում հասարակութեան ի՞նչ լինելու և ի՞նչպէս յառաջդիմելու պրոբլէմները լուծելու։

IV

Տնտեսական ուղղութիւն

Ահա մի ուղղութիւն, որը ներկայումս էլ դեռ խոշոր նուաճումներ է անում կարելի է ասել բոլոր կուլտուրական երկրներում յանձին քաղաքական կուսակցութեան։ Այս ուղղութեան հետևողների թիւը որքան օրէցօր քանակով աճում է, նոյնքան որակով թուլանում է։ Մի որոշ, պարզ ուղղութեան փոխարէն հանդէս են եկել բաւականաչափ հերձուածներ և ուղղափառների կողմից նզովեալների թիւը արագութեամբ աճում է։ Այս ուղղութեան ծննդեան ժամանակի պայմանները ուսումնասիրելով հասկանալի են դառնում այն ծայրահեղութիւնները, որոնք բնականաբար սպրդել են այդ վարդապետութեան մէջ և պատճառ են դարձել այդ ուղղութեան հետևողների մէջ բազմաթիւ տարաձայնութիւնների։

19-րդ դարու առաջին կիսում մարդկային հասարակութեան իրաւակարգի փոփոխութեան համար մի շարք մեծ ու փոքր յեղափոխութիւններ եղան, որոնք սակայն չկարողացան իրենց վերջնական նպատակին ծառայել։ Լուրջ դիտողները և խնդրով խորը հետաքրքրուողները նկատեցին, որ միայն իրաւական հաւասարութեամբ հասարակութիւնը չի կարող ազատուել անհաւասար դրութիւնից, որ այս նպատակին հասնելու համար ամենամեծ խոչնդոտը հանդիսանում է գոյութիւն ունեցող տնտեսական անհաւասարութիւնը և ուրեմն պէտք է մաքառել այս չարիքի դէմ։ Այս ուղղութեամբ սկսուեցին մի շարք ուսումնասիրութիւններ ու կազմակերպութիւններ երևան գալ, որոնք և հիմք դարձան հասարակութեան կազմի և հաւասարութեան հասնելու օրէնքները տնտեսական հիմքերով բացատրող ուղղութեան առաջ գալուն։ Այս ուղղութեան մէջ պէտք է առանձնապէս ուշք դարձնել մի հանգամանքի վրայ, որը մեծ չափերով ազդել է տնտեսական վարդապետութեան միակողմանիութեան և դոգմատիկ դառնալու վրայ։ Ցաւոնի է որ այս ուղղութեան հիմնադիրները իրենց կեանքի ընթացքում եղել են քաղաքական կուսակցութեան հիմնադիրներ, քաղա-

քական գործիչներ և աշխատել են որքան կարելի է իրենց պաշտպանած քաղաքական պահանջները և ծրագիրները հաստատուն, գիտական հիմքերի վրայ դնել։ Այն հանգամանքը, որ գիտական որևէ ուղղութիւն ոչ թէ աւելի շուտ ճշմարտութիւնը որոնելուն է հետևում, այլ մի տեսակ գործադրում է յօգուտ քաղաքական որոշ խնդիրների կուսակցական տեսակէտից բացատրելուն, արդէն իսկ այդ ուղղութիւնը զրկում է գիտական ածականը կրելու իրաւունքից։ Ոչ թէ ճշմարտութիւնը ըստ ինքեան, որը կապ չունի վնասակար և օգտակար գաղափարների հետ անմիջապէս, ելակէտ է այս դէպքում այս ուղղութեան հետևողների համար, այլ միայն որոշ քաղաքական շահերի որոշ օգուտների արտայայտումն է կէտ նպատակը։ ոչ թէ ճշմարտութեան համար աշխատել կնշանակէ այս, ճշմարտութիւն, որ շատ անգամ միայն գոյութիւն ունեցող ձևերին հակառակ է լինում, այլ որոշ դասակարգի և խմբակցութիւնների օգտին։

Կուսակցական ուղղութիւնը ջատագովելու ու հիմնաւորելու միակողմանի աշխատանքից հետևում է և այն թերութիւնը, որ աչքի է ընկնում տնտեսական ուղղութեան հետևողների գրուածքներում։ Այս ուղղութեան հիմնադիրները իրենց գրուածքներում չեն մշակել մի որոշ փիլիսոփայական սիստեմ. նոքա չեն տուել գիտութիւնների համակարգութիւնը, որով պարզուէր իւրաքանչիւր գիտութեան տեղը և արժէքը հասարակութեան ուսումնասիրութեան խնդրում։ Մինչդեռ նախկին երկու ուղղութիւններն էլ (մտաւորական և օրգանական) ունին փիլիսոփայական որոշ սիստեմ, այստեղ, շնորհիւ այն հանգամանքի, որ գրուածքները մեծ մասամբ կուսակցական շահերի չորս կողմն են պտտուել, մեծ մասամբ անորոշ և ցրուած տեղեկութիւնների ենք հանդիպում։ Այս է պատճառը, որ երկու գլխաւոր հիմնադիրների (Կ. Մարքս և Ֆ. Էնգելս) մահուանից յետոյ միայն նրանց աշակերտ հետևողները աշխատել են հետզհետէ լրացնել թերի մնացած խնդիրների պակասը. այս դէպքում էլ շատերը ընկել են այնպիսի ծայրահեղութիւնների մէջ, որ սառնարիւն գիտական մտածողների համար այլ

Լաս անկարելի է եղել այդ ուղղութեան մէջ մնալ և դուրս են եկել ու կազմել նոր տնտեսական ուղղութիւն։ Ոչ միայն որոշ գիտական համակարգութիւն, այլ և ինքնուրոյն մեթոդ, ուսումնասիրութեան յատուկ եղանակ չունի այս ուղղութիւնը և շատ անգամ պատմական, հասարակական երևոյթները քննելու, վերլուծելու դէպքում տարբերուում է զանազան մեթոդների ընտրութեան մէջ։

Գալով այս ուղղութեան հիմնական դաղափարներին, պէտք է նկատել, որ շնորհիւ այս ուղղութեան քաղաքական կուսակցութեան կերպարանք ստանալուն, ընդարձակուել են և մեծ մասամբ լուրջ խնդիրներով հետաքրքրուողներին ծանօթ են, այնպէս որ աւելորդ կլինէր մանրամասն յիշատակել նրանց, բաւականանանք այստեղ միայն ամենագլխաւորները յիշելով։

Այս ուղղութեան համածայն հասարակութիւնը կազմուած է դասակարգերից. անհատը հասարակութեան զարգացման մէջ դեր չի խաղում, այլ միայն դասակարգն է իսկական գործօնը։ Ուշադրութիւն դարձնենք նախ այն հանգամանքի վրայ, որ ոչ իրենք, այս ուղղութեան հիմնադիրները և ոչ էլ նրանց աշակերտ հետևողները որոշակի չեն սահմանաւորել դասակարգ դաղափարը. յայտնի է, որ այս խնդրի առթիւ դեռ մինչև այսօր էլ տնտեսագէտների մէջ համածայնութիւն չկայ։ Միւս կողմից երբ ի նկատի ենք ունենում պատմութիւնը, ժողովրդագրութիւնը և հնաբանութիւնը, տեսնում ենք, որ նախնական հասարակութիւնների մէջ, երբ դեռ կեանքը չէր բարդուել, երբ աշխատանքի բաժանում ու միութիւն տեղի չէր ունեցել, երբ մարդկանց հոգևոր և մտաւոր հորիզոնները նեղ սահմանների մէջ էին, դասակարգեր փնտրելը առնուազն անմտութիւն է եթէ ոչ աւելին։ Հասարակութեան յառաջադիմութեան և շերտաւորման շնորհիւ միայն առաջ են գալիս մարդկանց շահերի տարբերութիւններ և ընդհարումներ. բայց չէ՞ որ շերտաւորումից առաջ տեղի է ունենում հասարակութեան անդամների միութիւնը, որը և նպաստում է հասարակութեան ամուր կապակցութեան և կազմակերպութեան, իսկ միութեան դէպքում դասակարգերի բաժանումն նկատել հասարակութեան

մէջ աւելի քան պատմական և տրամաբանական սխալ է։ Պէտք է խոստովանել, որ հասարակութեան ի՞նչպէս կազմուելու և ի՞նչ մասերից կազմուելու խնդիրը այս ուղղութիւնը չի մշակել առանձնապէս. իսկ եղածն էլ, ինչպէս տեսնում ենք, թերի է և պատմական անճշտութիւն ունի իր մէջ։

Հասարակութեան զարգացման օրէնքը ըստ այս ուղղութեան պէտք է փնտրել հասարակութեան մէջ իշխող տնտեսական պայմանների մէջ։ տնտեսական պայմաններն են այն հրամայական օրէնքները, որոնք ղեկավարում են հասարակութեան ընթացքը։ Այդ պայմանները հասարակութեան մէջ ապրող, գործող դասակարգերից կախուած չեն և չեն ենթարկւում նրանց, ընդհակառակը նրանք անկախ վիճակ ունեն և հրամայողական բնոյթ։ Հոգեկան աշխարհը, կուլտուրան, մտաւոր զարգացումը ամբողջապէս տնտեսական պայմաններից առաջ եկող, նրանց ենթարկուող երևոյթներ են։ Տնտեսական դրութիւնը ինքը իր հերթին մի տեսակ անխուսափելիութեան է ենթակայ. նրա մէջ իշխում է ինչոր immanent ոյժ, որը ստիպում է տնտեսական դրութեանը զարգանալ, առաջ գնալ միայն այն ուղղութեամբ, որը հաճելի է այդ անյայտ ոյժին։ Պարզ դաղափար կազմել «տնտեսական դրութիւն» դաղափարի, նրա մէջ գործող անյայտ ոյժի և երկուսի միմեանց հետ ունեցած յարաբերութեան մասին աւելի քան դժուար է, որովհետև մատերիալիստ փիլիսոփաները իրենց հիմնական դաղափարները բացատրելու դէպքում ստիպուած ընկել են մետաֆիզիկայի մէջ։ Քանի որ իրերի և դրութիւնների տէրն ու տնօրէնը տնտեսական դրութիւնն է, ուստի մարդ անհատը հասարակութեան զարդացման խնդրում ոչ մի դեր չունի, բայց եթէ մի գործիքի, մի միջոցի, որին տնտեսական պայմանները այնպէս են ծառայեցնում, ինչպէս այդ իրենց հաճելի է։ Զարդացումն ըստ ինքեան տեղի է ունենում պայքարի շնորհիւ միայն. պատմութիւնը դասակարդային կռիւ է, լոզունգի անխուսափելի հետևանք է ընդունել հասարակութեան զարդացումը իբրև մի մշտատև և անհրաժեշտօրէն տեղի ունենալիք կռիւ։

Միջանկեալ նկատեմ, որ թէ որքան տնտեսական պայմաններն են միշտ ծնունդ տալիս հասարակական բոլոր երևոյթներին, այս մասին աւելի քան գրուած ու խօսուած է. միայն մի օրինակով բաւականանանք պարզելու այդ դատողութեան ճշմարտութիւնը։ Երևոյթների առաջ գալու և հասարակական միջավայրի կապը յայտնի է. բայց միջավայրը չի նշանակում միայն տնտեսական պայմանների գումարը. երկու. գաղափարները միմեանց չեն ծածկում. տնտեսականը միայն մի մասն է ամբողջի։ Միջավայր ասելով մենք հասկանում ենք ի թիւս այլ պայմանների նաև բնութիւնը, շրջապատող բնական պայմանները, որոնց ազդեցութիւնը դժուար թէ տնտեսական ուղղութեան հետևողները ժխտեն։ Միւս կողմից նրանք պէտք է խոստովանեն, որ իրենց գործածած տերմինը՝ տնտեսութիւնը, դեռ չի ներփակում իւր մէջ բնութիւնը, բնական պայմանները։ Զելիգմանը ցոյց է տալի, որ Լիւտերը նպաստել է կօնտրապունկտը ներդաշնակութեան վերածելուն, բայց այդ դեռ չի նշանակում, որ այդ փոփոխութիւնը անհրաժեշտ պատճառական կապ ունէր վերածնութեան ժամանակի տնտեսական պայմանների հետ։ Աւելի անհասկանալի է կապ գտնել երաժշտութեան մէջ ֆուգան մտցնելու և կապիտալիզմի զարգացման ու դասակարգային կռւի մէջ, կամ Շօպէն ու Նուբերտի թախծամած երգերի ու ժամանակաւոր հակայեղափոխական շարժման յաղթանակի մէջ։ *)

Այս է այս ուղղութեան ամբողջ ուղն ու ծուծը, որի մէջ դժուար է փնտրել գիտական անաչառութիւն և ճշմարտութիւն։ Ըստ այս ուղղութեան մտածողների հասարակութիւնը, անհատը և հասարակական բոլոր երևոյթները ներփակում են տնտեսական դրութեան մէջ, մինչդեռ առանց կանխակալ կարծիքի նայողի համար պարզապէս նկատելի է, որ հասարակութեան գաղափարը աւելի քան ընդարձակ է և տնտեսական դրութիւնը նոյնպէս մի տարր է այդ ամբողջութեան մէջ,

---

*) Տես М. Ковалевскій: Современные соціологи. 320 եր.

ինչպիսի են իրաւական, բարոյական, կրօնական և այլ տարբերը։ Միւս կողմից այդ ուղղութեան հետևողների համար տնտեսական երևոյթները մի տեսակ անկախ դրութեան մէջ են և կարծես հասարակութիւնից դուրս են. չէ՞ որ սակայն այդ տնտեսական գործօն ոյժը ինքը իւր ամբողջ մանրամասնութիւններով մարդկանց մէջ է միայն դեր խաղում և նրանց շնորհիւ է առաջ եկել. չլինէր հասարակական կազմը, ի՞նչպէս և ո՞րտեղից պէտք է առաջանային այդ տնտեսական երևոյթները. հասարակութիւնը ինքն է առաջ բերում նրանց. նրա մէջ են կատարւում այդ երևոյթները և նրա շնորհիւ։ Աւելացնենք սրա վրայ և այն, որ իւրաքանչիւր երևոյթ առհասարակ հասկանալի է դառնում և ոյժ է ճանաչւում այս կամ այն չափով միայն այն ժամանակ, երբ նա դառնում է մարդկային հոգու մտածողութեան նիւթ, երբ նա հոգեկան աշխարհում վերլուծութեան է ենթարկւում, պարզ է ուրեմն, որ տնտեսական երևոյթները իրենք ոչ թէ հոգեկան աշխարհից անկախ են և նրանից դուրս, այլ միայն նրա միջոցով են հասկանալի դառնում և որև է արժէք ստանում։ Քանի դեռ հասարակութեան անդամների մէջ չկայ հոգեկան, մտաւոր հաղորդակցութիւն, քանի դեռ գաղափարների ըմբռնողութիւնը պակաս է, չի կարող տեղի ունենալ որև է երևոյթ, որը ճանաչուի ոյժ կամ որին հնարաւոր լինի որակել. միայն հոգեկան աշխարհի արթնացումով և զարգանալովն է հնարաւոր դառնում այս արժէքաւորումը երևոյթների։ Այս տեսակէտից հէնց այդ ուղղութեան մտածողների խօսքերը, դասակարգային գիտակցութեան արթնացումն և կամ նոյնութիւնը, հասկանալի են դառնում միայն, երբ ի նկատի ենք ունենում հոգեկան աշխարհի դերը. այլապէս ոչ մի տնտեսական երևոյթ անկախ վերցրած չի կարող ոյժ դառնալ հասարակութեան համար և դեր խաղալ յառաջադիմութեան մէջ։

Հետաքրքիր է այժմ ուշք դարձնել այն հանգամանքի վրայ, որ ըստ այս ուղղութեան հասարակութեան զարգացումը անխուսափելիօրէն միայն մի ուղղութեամբ կարող է լինել և ոչ այլ ուղղութիւններով։ Այս դատողութեան մէջ տեսնում ենք

մի տեսակ պատճառ ու հետևանք՝ գաղափարների շփոթումն ու թիւր հասկացողութիւն։ Ինչպէս տեսանք, տնտեսական պայմանները հասարակութիւնից դուրս չեն գտնւում, այլ նրա մէջ են և մարդու հոգու շնորհիւ միայն հասկանալի։ Ինչպէս ուրեմն այս պայմանները ինչոր անհրաժեշտութիւն են դառնում հասարակութեան համար. ի՞նչպէս նրանք մեզանից անկախ են գործում և մեզ ստիպում են այսպէս կամ այնպէս առաջ գնալու։ Ցայտնի է, որ մենք դրսի առարկաների մէջ չենք գտնում ըստ ինքեան ինչոր պատճառի օրէնք, որ օբիեկտների մէջ որևէ սինտէզ տեսնել անկախ սուբիեկտից անհնարին է. այն կապը, որ մենք տեսնում ենք առարկաների մէջ, այն օրէնքը, որին մենք ասում ենք պատճառականութեան օրէնք, բուսինքեան իրերի մէջ չէ գտնւում, այլ մենք ենք վերագրում այդպիսի օրէնք առարկաներին և երևոյթներին. սա միայն մեր մտածողութեան արդիւնք է։ Քանի որ պատճառականութիւնը միայն երևոյթների այս կամ այն ձևով հասկանալու մի եղանակն է, որը մարդկային հոգուն է յատուկ և նրանից է բղխում, նրա հետ միասին զարգանում և փոփոխւում, արդեօք հնարաւոր է իրերին իրենց և երևոյթներին մի այժ վերագրել, որը ոչ միայն մեզ հասկանալի չէ, այլ և մեզ չի ենթարկւում, աւելացրէք և այն, որ դեռ մեզ էլ կառավարում է։

Պատճառականութիւնը միայն մարդկային հոգու արդիւնք է. այդ օրէնքն էլ հոգեկան զարգացման հետ փոփոխւում է. սխալ է ուրեմն տնտեսական երևոյթների մէջ ինչոր պատճառականութիւն փնտրել անկախ մեր հոգեկանից և նրան վերագրել անխուսափելիութեան այժ։ Այս անխուսափելիութիւնը յեսոյ այս ուղղութեան հիմնադիրներից մէկը (Էնդելս) մեղմացրեց նրանով, որ նա վերապահելով տնտեսական դրութեանը առաջնութեան պատիւը թոյլ տուեց, որ անհատը իբրև սատմայր հանդէս գայ որևէ երևոյթ առաջ դալու դէպքում։ Այսպիսով հէնց իրեն բերանով մեծ հեղինակը խախտում է իւր դաւանած օրէնքը. եթէ մի օրէնք երկաթ է և նրան փոխել չի կարելի, էլ ի՞նչ արժէք ունի տատմայր հրաւիրել. իսկ եթէ տատմայրը կարևոր է, նա ուրեմն մի բան կարող է փոխել.

օրինակ ծննդաբերութեան ցաւերը թուլացնել, որ նշանակում է թէ երևոյթը այնպէս չի կատարւում, ինչպէս որ այդ բնական ոյժն է պահանջում։ Երբ օրէնքի մէջ փոփոխութիւն կարելի է մտցնել, այդ օրէնքը անհրաժեշտութեան ոյժ չունի այլևս։

Ամէն ինչ հասարակական կեանքում վերագրելով տնտեսական երևոյթներին, այս ուղղութեան հետևողները անհատի դերը զրօյի են հաւասարեցնում։ Բայց թէ իրական կեանքը և թէ գիտական ուսումնասիրութիւնը ապացուցանում են, որ այդ մտածելակերպը և սխալ է և նոյնիսկ վնասակար։ Բաւական է յիշել գերմանական, ֆրանսիական և այլ երկրների այս ուղղութեան հետևող քաղաքական կուսակցութիւնները, նրանց ախտանքը, թէ խօսքով, թէ գրչով, նրանց ահագին դրամական ծախքերը գաղափար կազմելու համար, թէ որքան այս ուղղութեան առաջնորդները հեռացել են իրենց դաւանանքից։ Եթէ յիրաւի անհատը ոչինչ անել չի կարող, ինչո՞ւ համար են այդ բոլոր ջանքերը և հալածանքները, որ այնպէս սիրով շատ անգամ յանձն են առնում այդ ուղղութեան քարոզիչները։

Գիտական տեսակէտից նայելով խնդրին պէտք է ասել, որ իրերի մէջ ըստ ինքեան նպատակ չենք տեսնում և ոչ մի գիտութիւն չի կարող ասել թէ իրերի միտքը, նպատակը այս է կամ այն։ Գիտութիւնը կարող է միայն իրերի կապակցութիւնները ուսումնասիրել և ոչ թէ տալ նրանց միտք, նպատակ, որ հէնց իրենցից, իրերից բղխէին։ Այս դէպքում աւելի շուտ հաւատքը, բարոյական հասկացողութիւնն է դեր խաղում։ Եթէ մարդ իրերի երևոյթների մէջ նպատակ է դնում, ծգտում նրանց արժէքաւորել իբրև լաւ և վատ, օգտակար և անօգուտ, նա այդ անում է շնորհիւ իւր բարոյական հասկացողութեան։ Գիտութիւնը տալիս է, ինչ որ կայ, իսկ բարոյականութիւնը այն, ինչ որ ցանկալի և պէտք է որ լինի։ Գիտութիւնը ասում է, որ մի բան կատարւում է, որովհետև այս ինչ պատճառները և հանգամանքները դրդում են այդպէս, իսկ բարոյականութիւնը աւելացնում է, որ մի բան կատարւում է, որպէսզի այն այնպէս լինի. այսինքն որ մի ցանկալի բան տեղի ունենայ։ Տրն-

տեսական վարդապետութեան հետևողները իրենք ոչ թէ ստիպուած են կատարել այս կամ այն, այլ նոքա էլ ծգտում են, որ մի բան լինի, որը իրանց ցանկալի է և նպատակն է իրենց աշխատանքի։ Ոչ թէ օբիեկտիւ երևոյթներն են դեր խաղացողը այս ուղղութեան երևոյթների աշխատանքում, այլ սուբիեկտիւ ծգտումները, այսինքն բարոյական օրէնքներ. իսկ բարոյական օրէնքները դիտակցական օրէնքներ երբէք չեն ապացուցւում, քանի որ նրանք ոչ իրերից և ոչ էլ երևոյթներից են անմիջապէս բղխում։ Այնքանը բաւական է կարծեմ պարզելու, որ տնտեսական ուղղութիւնը հասարակութեան ինչ լինելու և ինչպէս առաջ գնալու խնդիրների պարզաբանութեան համար կիսատ և միակողմանի բացատրութիւններ է տալիս։

Ինչ վերաբերում է անհատի դերին հասարակական կազմի և երևոյթների մէջ, այս մասին աւելի ընդարձակ խօսք կլինի հետևեալ գլխում, իսկ այստեղ միայն մատնանիշ կանեմ երկու փաստ, ցոյց տալու համար, որ անհատը ունի իւր ուրոյն տիպը հասարակութեան մէջ շնորհիւ իւր կամքի ազատութեան։ Այդ երկու փաստերն են—նախ պատժական օրէնքների գոյութիւնը և երկրորդ մանկավարժութիւնը։ Պատժական օրէնքների գոյութիւնը ըստ ինքեան ապացոյց է, որ անհատը իւր գործելակերպի մէջ որոշ չափով ազատ է, որ նա գործիք չէ հասարակութեան ձեռքին և ոչ էլ պայմանների խաղալիք, այլապէս մենք իրաւունք չենք ունենայ յանցաւորի և ոչ յանցաւորի մասին խօսելու։ Եթէ անհատը միայն դրսի, հասարակական պայմանների արդիւնք է, էլ ի՞նչպէս և ի՞նչ օրէնքով պէտք է նրան պատժել, չէ՞ որ նա մեղաւոր չէ. իսկ եթէ մենք այնուամենայնիւ մարդասպանին, գողին պատասխանատուութեան ենք կանչում, ապա մենք նրա մէջ տեսնում ենք որոշ անկախութիւն, ինքնուրոյնութիւն։ Այստեղ արժէ յիշել Գ. Զիմմելի խօսքը, թէ եթէ մի կողմից հասարակութիւնը պատասխանատու է անհատի համար, միւս կողմից էլ չէ՞ որ անհատը իւր յանցանքով հիմք է դառնում ապագայում գործողների համար. նա էլ իւր յանցանքն է ժառանգութիւն թողնում, որով իւր յաջորդներին վատ ժառանգութիւն է թողնում, ուրեմն նրան

*Եւս առաւել պէտք է պատժել։ *) Մանկավարժութիւնն էլ միւս կողմից ապացոյց է, որ մարդ կարող է և ընդունակ է իւր ուզածին պէս որոշ չափով թեքել, ուղղել կրթուող սերնդի միտքը, հոգին։ Եթէ մարդ ազատ չլինէր, հնարաւո՞ր էր արդեօք նրա միտքը, կամքը այս կամ այն կերպ կրթել. եթէ մարդը ամբողջապէս դրսի, օտար պայմանների է ենթակայ, ապա նրան չէր կարելի փոխել ոչ մի կերպ, միայն ազատ կամքն է որ ընդունակ է ճկւելու, թեքւելու։ Այս երկու խոշոր երևոյթները բաւական են ապացուցանելու, որ անհատը իւր կամքի շնորհիւ ազատ է շատ դէպքերում հասարակական պայմանների «անհրաժեշտութեանը» ենթարկուելուց և նա կարող է որևէ հասարակական խնդրում բռնել իւր ցանկալի ուղղութիւնը։ Թող չիշեն այդ ուղղութեան հետևողները իրենց երկու մեծ ուսուցիչներին, հասկանալու համար թէ անհատը չիրաւի՞ դեր ունի հասարակական կեանքում, թէ նա միայն մի անշունչ գործիք է։*

Pessimist

(Վերջը միւս անգամ)

---

*) Г. Зиммель, Соціологія дифферн. եր. 65.

ՈՂՋՈՅՆ ՁԵԶ...

Ողջոյն ձեզ լերանց կարմիր կատարներ,
Որ երեկոյեան լուսով ողողուած
Հպարտ հայեացքով դէպ անհուն եթեր
Նայում էք ազատ վեհութեամբ լեցուած։
Ու ձեր փառահեղ զագաթին հպարտ
Սողում են ամպերն, պայթում է որոտ.
Բայց դուք անսասան, անհոգ եւ հպարտ
Նայում էք վերից շատերին վախկոտ։
Նայում՝ էք դէպ ցած, ուր սուր եւ նիզակ
Պատռում, կտրում են սիրտ ու պարանոց,
Իզուր քարոզներ սիրով ներշնչուած,
Իզուր աղերսանք, արցունք ու հոգոց։
Եւ ստրկութեամբ բոլորը բռնուած՝
Ոմանք սողում՝ են թոյլ եւ անարի,
Ոմանք էլ ոսկու փայլով շլացած
Փառքի ու թագի դարձել են գերի։
Ես էլ թուլացած հոգով ու մտքով
Կասկածի, դաւի ցանցից խոյս տուած
Եկել եմ ձեզ մօտ անհուն կարօտով.
Եկել եմ իսպառ մարդկանցից մերժուած։
Եկել եմ սովրել ձեզնից քաջութիւն,
Կամքի, կորովի պողպատէ ուսումն,
Որ հպարտ կրծքով, զգոյշ եւ արթուն
Անցնեմ ուղիներս քաջ ու աննկուն։
Ահ՝ սիրեցի շատ—սիրով երկնատուր,
Սիրոյ քոցերին իմ հոգին կնդրուկ
Տեղը թշնամանքն եղաւ տրիտուր,
Մինն է սա, ասին, կրքերին ստրուկ։

Ու որոնց վրայ մեծ զուրզուրանքով
Սահեցաւ ծեռս, սիրտս քաքախեց,
Ու որոնց համար աղի արցունքով
Հոգիս իւր կոկոն վարդերը կախեց,
Նոքա սեւ, դաժան օձերի նման
Կոկոն վարդերս գրկում թառեցան
Սրտիս խորքերում քացուեց գերեզման
Ողջ նուշ տենչերս յանկարծ թոշնեցան։
Իսկ ես, ես այժմ ատել եմ ուզում
Սիրոյ տեղ միայն սեւ թոյն պատրաստել։
Ուզում եմ մարդկանց թքել ու մրել
Քեզպէս անսասան նայել եմ ուզում։
Նայել, թէ ինչպէս նոքա—ճիճուներ,
Սողում են դողում ցեխի, մրի մէջ,
Կրծում են միմեանց ցերեկ ու գիշեր,
Իրար նախատում հայածում անվերջ։
Ողջոյն ձեզ լերանց կարմիր կատարներ,
Ուսուցէք եւ ինձ ձեզպէս անվեհեր
Նայել միշտ հպարտ, նայել դէպի վեր։
Անկախ ու անվախ, ինքս լոկ իմ տէր։

ԱՄՊՐԷ

ՔՕՍԱ-ԴԱՂ ԼԵՐԱՆ ՎԿԱՆ*)

VII

Երեք օրից յետոյ երկու հակառակ կողմերից Խասթուր գիւղը մտան այդ խմբակները և մի քանի եւրոպացիներ, որոնց իրը առաջնորդի դեր էր կատարում Վռամը։ Վերջինս միանալով եւրոպացի (ըստ երևոյթին) ճանապարհորդների, բայց իրօք միսիոնարների հետ, դրամական վարձատրութեամբ համ հաստատում էր դրանց իրանց գործունէութեան մէջ, համ հետամուտ լինում Արթոյին, իր հօր սպանողին, գտնել և կառավարութեան ձեռքը մատնել։ Կարծես ընութիւնը ամեն տեղ իր փորձութեան դուռն էր բացել խեղճուկ փախստականների համար։ Այս անգամ էլ, երբ իրանց աւելի քան ապահով էին կարծում, ընկան եւրոպական միսիոներների ճանկերը։

Տեղաւորուելով գիւղում, Վռամը առանց յապաղելու մտաւ փախստականների մէջ և ամեն տեղ լաւ դիտելուց յետոյ վերադարձաւ իր ուղեկիցների մօտ և ասաց, որ իրանց տանջանքները պիտի յաջողութեամբ պսակուին, որովհետև թշուառների սոսկալի դրութիւնը յուսահատութեան է հասել, ուստի և նրանք առանց տատանուելու կը մտնեն Հռօմի եկեղեցու ծոցը, որի ուխտեալ ջատագովներն էին իրանք։ Միսիոնարների ուրախութեանը չափ ու սահման չը կար։ Իւրաքանչիւրը սրանցից պատրաստեց իր ոսկու քսակների բերանները, որ վաղ առաւօտեան, գիմելով նրանց զօրութեան, որսան թշուառ հալածուածներին։

Հետևեալ առաւօտ փախստականների խմբերի գլխաւորները հրաւիրուեցան միսիոնարների մօտ։

Վահէն օգտուելով առիթից, ծպտեալ կերպով միացել էր նրանց և հետները մտել հաւատորսների մօտ։ Նրան այդտեղ ոչ ոք չէր ճանաչում։

Վռամի և միսիոներների թախանձանաց համաձայն՝ փախստականները սկսեցին մի առ մի նկարագրել իրանց գլխի եկածը սկսեալ այն օրից, երբ առաջին անգամ հրաժեշտ տուին իրանց վաթանները, մինչև Խասթուր հասնելը։

---

*) «Լումայ» 1909 № 5—6

Ուշադրութեամբ լսելուց յետոյ, Վռամը ուրախացաւ, որ նրանց միջոցով թերևս կարողանայ մի բան իմանալ Արթոյի մասին. սակայն տակաւին վաղ համարելով այն՝ իր ուղեկիցների թելադրութեամբ հարց տուեց նրանց.

—Ինչո՞ւ ձեր քահանաները, վարդապետները և առհասարակ հոգևոր հայրերը ջանքեր գործ չեն դնում փրկելու ձեզ և գալոց դժբաղդութիւնների առաջն առնելու։

—Աղա, ի՞նչ կըսես. էն խեղճերուն մըզնից յէւէլ տանջանքներ տուեցին. զուլում էր, զուլում նրանց հալը. ընտորք ի՞նչ գինէն, որ մըզի պտի ջարդեն, օր եկող պատուհասի առաջն առնէին,—միաբերան կրկնեցին նրանք։ Բայց Վահէն լուռ էր, նա չէր ենթադրում, որ եկողների մէջն է գտնուում Վռամը. նա սպասում էր խօսակցութեան վախճանին։

—Նրանք պարտական էին իմանալու. նրանք գիշեր ու ցերեկ իրանց հօտի մասին պիտի մտածէին։ Այ, ես քահանայի որդի եմ, հայրս, ճշմարիտն եմ ասում, հանգստութիւն չունէր՝ իր հօտի ցաւը՝ իր ցաւն էր, նրանց ուրախութիւնը՝ իր ուրախութիւն. բայց վերջն էլ զոհ գնաց իր այդ դաւանած գաղափարներին և մի պակ կատարելու ժամանակ սպանուեց։ Իսկ ես տեսայ, որ իրօք մեր հաւատը այն չէ, ինչ թելադրում է ս. աւետարանը, և մենք ու մեր պապերը, դժբաղդաբար, քանի դար է ինչ այդ ծուռ ճանապարհը բռնած՝ գնում ենք. էլ ուշադրութիւն չենք դարձնում լուսաւոր երկրների վրայ, այդ պատճառով ես ընդմիշտ թողեցի պապերիս դաւանած ձեր այժմեան եկեղեցին և եկայ շիտակ ճանապարհի վրայ։ Օ՜ գիտէ՞ք, ինչ տուեց այդ սըրբազան նոր հաւատը. նա կէս միլիոնի չափ կարողութիւն՝ օժիտ տուեց ինձ։ Գիտէ՞ք ի՞նչ հայրական խնամքով է խնամում իր զաւակներին այդ եկեղեցիս։ Ա՜խ. երանի մենք բոլորս կարողանայինք ըմբռնել այս եկեղեցու գերազասութիւնը։

—Աղա, ի՞նչ է էդ էկէղեցու, էդ թազայ խաւատի անունը, որի խարազատ զաւակն ես դու դարձել։

—Այդ եկեղեցու անունը կաթոլիկ եկեղեցի է, որի անսխալ պետը համարւում է Հռոմի պապը։

Փախստականները զարմացմամբ իրար նայեցին և ակամայ կրկնեցին—ա՜խ, մեր լոյս խաւատ, Գրիգոր Լուսաւորչի խաւատը դու ուրացել ես. մենք չուրի մկայ գինէինք թէ, ուրիշ խաւատից դարձեր ես մըր լոյս խաւատին...

—Հա, հա, հա, յիմարներ. մի ժամից աւելի է, ինչ խօսում եմ և դուք դեռ չէք հասկացել ինձ. եթէ դուք լսէք ինձ և թողնէք ձեզ այդ հալին, այդ վիճակին հասցնող եկեղեցին ու հաւատը

և ընդունէք մերը, ես կը միջնորդեմ, որ ձեզ դրամական նպաստ էլ լինի. այո, այդ եկեղեցին պէտք է առատ վարձատրէ իր նոր-բաղարձ զաւակներին։ Խելքի եկէք...

—Ցիմարները այդ թշուառները չեն, այլ նրանք, որոնք ուրանում են իրանց նախնիքների դարաւոր սրբութիւնները, որոնց իւրաքանչիւր մասնիկը կրում է իրանց նուիրական անցեալի պատկերը. այո, յիմարները նրանք են, որոնք իրանց նախնիքների թողած անտէր յիշատակները չեն յաւերժացնում և չենաւանդ տալիս սերնդէ-սերունդ, վառ պահելու, նրանց զէթ իրանց սեփական դրութեան մէջ։ Իսկ նրանք, որոնք իրանց նախնիքների թողած ամենաչնչին զէթ մնացորդը վաճառում են և կոպէկների սիրոյ համար հեռանում իրանց նախնիքների ճանապարհից, ինչ էլ որ նա լինի, զուրկ է մարդ անուն կրելուց. նրանց կրծքում սիրտ չէ բաբախում, նրանց գլխում ուղեղ ասած բան չէ գործում. նրանք բնական մարդիկ չեն, այլ ժամանակի խելագար ծնունդ, որի համար ոչ մի սրբութիւն և ոչ մի դաւանանք չը կայ, դիւրագրգիռ կերպով վերջացրեց Վահէն։

Վռամը մնաց զարմացած, նա չէր հաւակայում, որ խօսողը իր առաջ կանգնած փախստականի ցնցոտիների մէջ գտնուող թշուառն է։ Նա աւելի ևս շփոթուեց խօսելու այդ ոճի վրայ, սակայն շուտ ուշքի եկաւ և տհաճութեամբ պատասխանեց.

—Իզուր չէ ասած, որ ձեր յիմար երկրի զաւակները պօռոտախօսներ են։ Դարեր են անցել, բայց շիտակ ճանապարհի վրայ չեն կարողացել դնել ձեր պօռոտախօսութեան ոգին. դա ձեր սև ճակատագիրն է, տեսնում էք, դուք ցնցոտիների մէջ էք, բայց դարձեալ արհամարհում էք կոպէկները։ Մի՞թէ դա յիմարութիւն չէ։

—Ցիմարութիւն է այո, միայն յիմարների համար, որոնք կեանքի ամեն մի առաքինութիւն գտնում են միայն կոպէկների մէջ. դուք, լուր է հասել մեզ, որ բարձր դպրոցի ծնունդ էք եղել, սակայն ձեր իւրաքանչիւր արարքը կրում է ստրկահոգութեան կնիք իր վրայ։ Դուք դաւաճանել էք ձեր ազգային սրբութիւններին, դուք մանկական միամտութեամբ խաբուել էք միմիայն դրամների շլացուցիչ փայլով և այսօր տակաւին այնքան ստահակութիւն ունիք, որ ձեր շողոքորթ լեզուով աշխատում էք և այլոց շեղել իրանց դարաւոր բռնած ճանապարհից դարձեալ այդ նզովեալ դրամի համար։ Այս թշուառների բազմութիւնը գոնէ անարատ խղճմտանքով դերեզման կարող է իջնել, որ հազար ու թանկագին զոհեր տալով, չէ մտածել անգամ ուրանալ իր հայրենի հաւատը, իսկ դուք ուզում էք զրկել դրանց այդ միակ հոգե-

կան մխիթարութիւնից։ Ամօթ ձեզ. դուք մեր ցնցոտիները ան-համարհում էք, բայց մոռանում էք, որ նրանց տակին սրտեր են բաբախում, որոնք իրանց վեհ զգացմունքներով առաւել փայլ ու զեղեցկութիւն ունին, քան ձեր ոսկու շղերը...

—Դուք ո՞վ էք, որ համարձակւում էք շօշափել իմ պա-տիւը։

—Ես այն եմ, որի համար իմ թշուառ ազգայիններին վիշտը՝ իմ վիշտս է, նրա հոգս ու տառապանքը՝ իմ հոգսն ու տառապանքը։ Հը, ինչ է երևի կարծում էք, ձեզանից կրթութեամբ պա-կաս անձնաւորութեան հետ գործ ունիք։ Օ՜, դուք, երևի սովո-րել էք ցնցոտիների մէջ միշտ տգիտութիւն տեսնել։ Ուշքի եկէք, թողէք ձեր բռնած ընթացքը։ Ձեմ կարող չը խղճալ ձեզ, որ կար-ծում էք թէ՝ ես չեմ ճանաչում, թէ ում հետ գործ ունիմ։ Ուզում էք իմանալ. ես գործ ունիմ ուրացողի, դաւաճանի հետ. և այդ չէ զարմացնում ինձ, կրթութիւնը չէ կարողացել մեռցնել ձեր մէջ ձեր տոհմական, ձեր ցեղական լպիրշ յատկութիւնները, որոնք հաստատուն տեղ են բռնել ձեր մէջ. ո՜, դրանց արմատախիլ անել՝ դժուար է, շատ դժուար է.....

—Լռեցէք, ընդհատեց Վահէին Վռամը իր սուր ճվոցով,— եթէ ոչ, այս րոպէիս կառավարութեան օգնութեան կը դիմեմ և ձեզ նման յիմարներին իրանց չափը ճանաչեցնել կը տամ։

—Դիմեցէք, դիմեցէք, այդ ինձ չէ սարսեցնում. այլ կերպ վարուել դուք չէք էլ կարող. կենդանի է ձեր հոր ոգին և դուք նրա հարազատ երկրպագուն՝ իժից իժ է ծնուել։ Կիսակենդան թողեցի հարազատ վայրերս, փախայ հեռացայ ձեր եղուիտ հոր ճանկերից, որի անբաղդ զոհն եմ ես. սակայն ամեն տեղ նրա անդգամ ճտերն են վխտում։ Այո՛, ձեր եղուիտ հայրը ճիգ ու ջան-քեր թափեց և թշուառիս համար սոսկալի դրութիւն ստեղծեց։ Ձեր ամեն ինչ ուրացած հայրը գիտէ՞ք քանի՞ վաղամեռիկ գե-րեզմաններ պատրաստեց. նա յուսահատեցրեց, անբաղդութեան գագաթնակէտին հասցրեց մի անպաշտպան աղջկայ և սպանել տուեց նրան։ Այո՛, նա սպանեց իմ թշուառ Սօնային։ Նա սուր-սուր նետեր ուղղեց իմ կրծքին, խոցեց և անբուժելի վէրքեր թողեց իմ սրտում. նա անբաղդացրեց Աւոյին, Բաղոյին, Իսհակին, ո-րոնք նրա ձեռքի խաղալիքներն էին և միամիտ զոհեր, իսկ դուք, եկել էք նրա պակասը լրացնելու. լրացրէք, յաղուրդ տուէք ձեր արիւնռուշտ կրքերին։ Որքան էլ սրտամաշ լինին այժմ ձեր հասցրած վէրքերը, հաւատացած եղէք՝ ծանր չեն լինի ձեր հոր տուած վէրքերից։ Վահէն սովոր է տանել վիշապի՝ ձեր հոր տուած վէրքերը, իսկ ձեր, նրա խղճալի ճուտի արարքը, սարսուռ չեն առաջ բե-

դում նրա երակներում։ Ուզում էիք իմ ով լինելը իմանալ. այժմ հո իմացաք, որ ես Վահէն եմ, արէք, ինչ կարող էք. սակայն իմացէք, որ ձեր իւրաքանչիւր քայլի համար չարաչար տուժելու էք։ Այն Արթօն, որին փնտռում էք, միշտ ինձ հետ և գիտէ պատժել անիրաւութիւնը։ Մնաք բարեաւ, ես այժմ հեռանում եմ։

Վահէն դուրս եկաւ. փախստականների գլխաւորները հետեւեցին նրան։

Վռամը իւր ականջներին չէր հաւատում, նա Վահէին սպանուած էր կարծում. բայց ինչպէս էր եղել, որ կենդանի է մնացել։ Փոքր ինչ տատանուելուց յետոյ, նա էլ դուրս ելաւ. այստեղ նրան շրջապատեցին թշուառների նոր խմբեր, որոնք ոսկու անունը լսելով, ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չէին դարձնում։ Վռամը առաջնորդեց նրանց իր ուղեկիցների մօտ, ուր ստորագրութիւններ առան դրանցից, բաժանեցին ոսկիներ և կարգադրեցին օրական մի քանի անգամ այցելել իրանց, նոր հաւատի ուսմունքի հետ ծանօթանալու համար։

Միամիտներին որսալուց յետոյ, ներկայացաւ տեղական գայմագամին և յայտնեց նրան Վահէի ով լինելը, բարդելով նրա վրայ զանազան քաղաքական յանցանքներ, աւելացնելով, որ նրան յայտնի է և Արթօյի ապաստարանը։

Մինչ այս մինչ այն, Վահէն խորհրդակցեց փախստականների գլխաւորների հետ և կարգադրեց, որ նրանք իսկոյն և եթ ուղևորուեն դէպի Տրրիս գիւղը, այնտեղից էլ դէպի սահմանը։ Նա խոստացաւ Արթօյի և նրա ընկերների հետ միանալ ճանապարհին և առաջնորդել մինչև սահմանագլուխը։

Բազմութիւնը ճանապարհ ընկաւ։ Խաթուրի շրջակայքում նրանց միացաւ Արթօն Վահէի և իր ընկերների հետ։

Երեկոյեան արևը մերձենում էր Քոսադաղ լերան. կարծես այդ լերան չար ոգիները խմբուել էին նրա ճանապարհին և սպառնում էին իրանց ճանկերի մէջ առնել այդ հրաշէկ գնդի անաւոր զօրութիւնը։ Ահ ու սարսափը տարածւում էր ամեն տեղ. միքանի ամիս էր, ինչ գիշերային աղջամղջի ժամանակ, այդ երկրի իւրաքանչիւր քար ու թուփը մի մի դարանավայր էին դառնում հազար ու մի թափառաշրջիկ ցեղերի համար։ Միքանի ամիս էր, ինչ մարդկային արիւնը ոռոգում էր այդ երկրի խուլ ու մութ խորշերը, ամեն տեղից արիւնի հոտ էր գալիս։ Իւրաքանչիւր արարած ժամ առաջ փնտռում էր իր համար մի ապահով անկիւն, ուր իր գոյութիւնը պաշտպանել կարողանար գիշերային սարսափների ժամանակ։ Միայն թշուառ փախստական-

ներն էին, որոնք մի ազատ-սպահով գլուխ դնելու տեղ չունէին և միշտ ու միշտ առաջ էին շարժուում։

Գտնուելով Արթօյի հովանաւորութեան ներքոյ, իրանց աւելի քան ապահով էին զգում. ամեն ինչ թողած ճակատագրի քըմահաճոյքներին, մտամոլոր կերպով քայլում էին Տըրխ գիւղը տանող ճանապարհով։

Արթօն իր ընկերներով գնում էր նրանց ետևներից։ Ցանկարծ լսուեցին մի քանի հրացանի ձայներ և գնդակները իրանց սուր սուլոցով անցան փախստականների գլխի վերևով։ Հրացանի պայթիւնների հետ, համարեա, միաժամանակ լսուեց և գայմագամի սպառնացող հրամանը՝ «տեղներից չը շարժուել»։ Արթօն վայրկենաբար ցնցուեց, ոակայն իսկոյն հասկացաւ, թէ եկողները ովքեր են և ինչ են պահանջում, ուստի աննկարագրելի արագութեամբ կարգադրեց իր ընկերներին կանգնել, պատսպարուել մի մի ժայռի, քարի, խորշի ետև և դիմադրութիւն ցոյց տալ եկողներին. իսկ բազմութեանը հրամայեց շարունակել իր ճանապարհը։

Սկսուեց մի կատաղի կռիւ. տասնեակ հրացաններ մի ակնթարթում բազմաթիւ զոհեր էին գետին տապալում. իսկ փոքր ինչ հեռացող բազմութիւնը երկիւղի, յուսահատութեան աղաղակներով օդն էր թնդացնում և նզովք կարդում իր ճակատագրին։ Կռուի այդ եռ ժամանակին, յանկարծ Արթօն տեսաւ Վռամին, որը Գայմագամի հետ մի կողմի վրայ կանգնած պատրաստւում էր փախուստ տալ. նողկանքի ու բարկութեան զայրոյթի հետ ձայն տուեց նորան.

—Նզովեալ մատնիչ և ամեն սրբութիւն ուրացող զազրելի արարած, դարշելի կեանքդ այժմ իմ ձեռքումս է, բայց այս աղնիւ կուում չեմ զրկի քեզ նրանից։ Նայիր Գայմագամին և քո ձիուն ու քեզ խղճա... Նրա ձայնի հետ լսուեց հրացանի պայթիւն և Գայմագամը արիւնշաղախ վայր ընկաւ ձիուց։

Վռամը փորձեց մենակ փախչել, բայց լսուեց երկրորդ պայթիւն և նրա տակի ձին, վիրաւորուելով ճակատից, փռուեց գետին։ Կենդանի մնացած մի քանի զապտիները սկսեցին փախուստ տալ։

Արթօն Սալվիի հետ վրայ վազեցին և դուրս բերելով Վռամին ձիան տակից, կապեցին նրա ձեռքերը. ապա իրանց ընկերների հետ ճանապարհուեցին դէպի Տըրխ գիւղը։

Հետզհետէ թանձր խաւարը ծածկեց շրջակայքը։ Բազմութիւնը Արթօյի կարգադրութեամբ կանգ առաւ. անհրաժեշտ էր փոքր ինչ հանգստութիւն տալ յոգնած ամբոխին, ապա շարու-

նակել ճանապարհը։ Բազմութիւնը անփոյթ կերպով տարածուեց գետնին։

Արթօն Վահէի և իր ընկերների հետ առանձին խումբ էր կազմում։ Սրանք էլ, նստելով բորբոքուած խարոյկի, շուրջը դայլի ախորժակով ընթրում էին և զրոյց անում իրար հետ։

—Այո, մեր ժողովուրդը միշտ էլ այսպիսի փախստական կեանք կունենայ, եթէ լուրջ ուշադրութիւն չը դարձնի ամենաէական և ամենակարևոր խնդիրներից մէկի վրայ, այդ նրա ընտանեկան կրթութիւնն է։ Խնդիրը աւելի կարևոր և լուրջ կերպարանք է ստանում, մանաւանդ որ այսօր գիւղացին մեր ժողովրդի ամենապատկառելի թիւն է կազմում, նկատեց Արթօյին Վահէն։

—Այո, անխնամ թողնուած արմատն է նա, որին կուլտուրական հողի վրայ դնելը և աչալուրջ ուշադրութեան առնելը՝ անյետաձգելի մի պահանջ է դառնում օրէցօր. սակայն ինչպէս,— հարցրեց նրան Արթօն։

—Ինչպէս. իւրաքանչիւր ժողովուրդ, գիւղացի թէ քաղաքացի, մի որոշ ապագայ աչքի առաջ ունենալով, միշտ նրան է ձգտում և միշտ նրա համար է կրթում, դաստիարակում իր մատաղ սերունդը։ Այդ յատկութիւնից զուրկ չէ նաև սարերի, ձորերի հարազատ զաւակ՝ քուրդը։ Նա իր զաւակի ականջին բառեր է շշնջում, երգ ու դլոներ է դնդնում, որոնք նրա ամբողջ ապագան են կազմում։ Աշխատեցէք քարոզների, ճառերի կրակներ թափել այդ ըստ երևոյթին վայրենի ցեղի, ուղեղի, գլխի վրայ, նա միշտ էլ քուրդ ծնուել է և քուրդ էլ կը մնայ. ձեր ազդու քարոզները անզօր կը լինեն մաղաչափ անգամ շեղելու նրան դաւանած սկզբունքներից։ Ինչու.—նրան այդպէս է ծնել, մնել, կրթել, դաստիարակել հայրենի օրրանը։ Իսկ մենք, որ համեմատաբար աւելի առաջ ենք գնացել այդ կիսավայրենի ցեղից մեր հոյակապ շէնքերով, մեր մի քանի յարկանի փառահեղ և շքեղազարդ պալատներով, ապարանքներով, կարողանում ենք արդեօք ըմբռնել, թէ ինչ ձևով և ինչ ապագայի համար սերունդ ենք պատրաստում։ Մենք, որ գիր ու գրականութիւն ունենք, արդեօք արտադրում ենք նոյնքան իրանց համոզմունքի մէջ հաստատակամ զաւակներ։ Ո՛չ և ոչ .... այսքանից յետոյ պարզ է թէ՝ ինչպէս..... Ահա թէ որքան անջնջելի հետքեր է թողնում որոշ ուղղութեամբ ընթացող ընտանեկան կրթութիւնը. և այդ դեռ մի անշուք վրանի տակին, սարերի ձորերի գրկում...

—Այո, այդ տեսակէտից մեր գիւղական մրոտ խրճթի ընտանեկան կրթութիւնը դեռ որոշ սկզբունքի և հասկացողութեան

հասած չէ. ընտանեկան կրթութիւնը մեր գիւղերում միանգամայն բարձի թող է արուած և Աստծու խնամքին յանձնուած։

—Ճիշտ է միանգամայն. մեր գիւղական նուիրական մրոտ խրճիթը տակաւին մանկական օրրանում ահ ու դողի, վիշտ ու տառապանքի, սև սարսափի օրօրներ է կարդում ապագայ գիւղացու սրտում, օրօրներ, որոնք նրա սեաւոր կեանքում միշտ նրա անբաժան ընկերներ են մնում ու կապում, կաշկանդում են նրա սիրտն ու ոգին։ Մեր գիւղական անտէր խրճթի մրոտ յարկի տակ միշտ էլ լսւում են մանկան ծեծ ու ջարդի, լաց ու հառաչանքի, սուգ ու շիւանի ձայներ, որոնք միշտ էլ մի արտասովոր սրտամաշ ցնցումներ են առաջ բերում նրա հոգեկան աշխարհում և ապագայում, երբ նա մարդ է դառնում, որոշ տեղ են բռնում նրա չարքաշ կեանքում։

—Այդքանից յետ, Վահէ, պարզ է թէ՝ որպիսի հայրեր, որպիսի մայրեր են տակաւին ապրում մեր գիւղական սեաւոր խրճիթներում։ Ուրեմն կանխապէս մենք պիտի աշխատենք բարուոքել մեր հայրերի, մեր մայրերի բարոյական ներքին աշխարհը, որովհետև դրանք են կազմում իւրաքանչիւր ընտանիքի հաստատմատ սիւները, դրանց վրայ է ընկնում մատաղ սերնդի դաստիարակութեան գործը։

—Անպայման ճիշտ է, Արթօ. երբ մենք բարուոքենք դրանց ներքին աշխարհը, այն ժամանակ որոշ չափով ապահոված կը լինի մեր ապագան...

—Ո՞ւր է Թորոս-բիձան,—հարցրեց Արթօն, որը նոր էր նկատել նրա բացակայութիւնը։

—Նա միշտ էլ գիշերները շրջում է բազմութեան խմբերի մէջ և ո՞վ գիտէ՝ ինչի վրայ է մտածում,—հանդիստ ձայնով ասաց Սալվին։

—Ինչպէ՞ս թէ ինչի վրայ. միթէ նա քիչ մտածելու բաներ ունի. չէ՞ որ այդ բազմութիւնը իւրաքանչիւր քայլափոխում յիշեցնում է նրան իր բազմամարդ ընտանիքը, որը նոյնպէս անտէրութեան գիրկն է մատնուած. ինչպէս նա կարող է չը մտածել իր անբաղդ ընտանիքի վրայ, որին այդ թշուառութեան հասցնողը հաժարեա, Վռամն է, որը այժմ, փառք Աստծու, իր արժանի պատիժը ստացաւ,—վրայ բերեց Արթօն։

—Հա, լաւ յիշեցրիք այդ անզգամի մասին. երբ բազմութիւնը անցկացնենք սահմանը, այն ժամանակ նոր միասին կը խորհենք թէ՝ ինչպէս վարուել այդ լիրբ ուրացողի և մատնիչի հետ։

Մինչ նրանք այսպէս զրոյց էին անում, Թորոս-Բիձան գաղտագողի մօտեցաւ կալանաւորուած Վռամին, որը խարոյկից բաւականին հեռու ընկած էր գետնի վրայ։ Կալանաւորը գլուխը բարձրացրեց և հազիւ լսելի ձայնով մրմնջաց.—Ո՞վ ես դու, աղաչում եմ՝ մի փոքր ջուր տուր պապանձուած շրթունքներս զովացնելու համար։ Ծառաւից մեռնում եմ. խղճա ինձ։

—Ես Թորոսն եմ, յիշում ես։ Կարծում եմ, ամեն ինչ հասկանալի է քեզ։ Տեսնում էք, որքան անտանելի, որքան ծանր բան է կարիքի մէջ լինելը և կարիք զգալը։ Տեսաք, արդեօք, չար բաղդը որտեղից որտեղ ինձ հասցրեց, և ես ներկարարի գործարան բաց արեցի. սակայն դուք այդ էլ չուզեցիք և ձեր այդ անխիղճ վարմունքով ինձ այստեղ հասցրիք։ Բայց ես սիրում եմ ազատութիւն և այդ բառի վեհ կոչման տակ, դարձեալ մի անգամ էլ կեանք եմ տալիս ձեզ և արձակում եմ ձեր կապանքները։ Զգոյշ, ձեզ կարող են տեսնել. հեռացէք և միւս անգամ մի ուրացէք ձեր խիղճը և արդարութիւնը։

Այս ասելով, նա շտապ-շտապ արձակեց նրա կապանքները։

—Դէհ, գնացէք և մի մոռացէք, ինչ ասացի ձեզ։ Տէր ընդ ձեզ...

Վռամը կորաւ խաւարի մէջ։

VIII

Հետևեալ օրը մի քանի ժամ ճանապարհորդութիւնից յետոյ, բազմութիւնը հասաւ Տըրխ գիւղը։ Հասցնելով փախստականներին այդ գիւղը, Արթօն իր ընկերներով անյայտացաւ։ Այստեղ վճռուած էր մի առ ժամանակ հանգստութիւն տալ բազմութեան յոգնած ու վաստակած անդամներին, ապա ճանապարհը շարունակել դէպի սահմանը։ Առհասարակ ցերեկները Արթօն շատ սակաւ էր երևում մարդկանց, նոյնիսկ իր ծանօթ-բարեկամներին։ Տըրխ գիւղը նորոգեց Վահէի վէրքերը. այստեղ իւրաքանչիւր քար ու թուփ ասես ձայն էին տալիս նրան թէ՝ «քո թշուառ Սօնան այստեղ է. այստեղ է նրա անտէրունչ գերեզմանը»։

Հազար ու մի դառն յիշողութիւններով նա կապուած էր այդ գիւղի հետ։

Հեռանալով մի առ ժամանակ այդ վշտախորով գիւղից, Վահէն համարեա թէ իր նախկին օրերի նման չէր տանջւում մելամաղձութեամբ. նրան գրաւել էր փախստականների սոսկալի վիճակը և նա աւելի, քան իր միւս ընկերները, նուիրուած էր այդ

վշտին։ Երբ գիշերը վրայ հասաւ, նա յուսահատութեամբ լցուած՝ ուղղեց իր դանդաղ քայլերը դէպի այն վայրը, ուր գտնուում էր Սօնայի անշուք գերեզմանը։ Այստեղ նա այլ ևս անկարող եղաւ զսպել արտասուքները։ Նրա խուլ հեկեկոցի ձայները ստէպ-ստէպ խանգարում էին գերեզմանական լռութիւնը։ Եթէ մի ձայն, մի թեթև շշուկ անգամ լսէր գերեզմանի խորքերից, գուցէ նրա վիրաւոր սիրտը փոքր ինչ թեթեւութիւն զգար. «խօսիր, խօսիր, իմ թառլան, իմ վաղամեռիկ Սօնա։ Ի՞նչ անեմ, ո՞ւր գնեմ իմ դժբաղդ գլուխը այս աւեր աշխարհում. ամեն տեղ արիւն է հոսում. ամեն տեղ տանջուողը, տուժողը արդարութիւնն է, ինչպէս դու տանջուեցիր, ինչպէս դու տուժեցիր կեանքովդ։ Դու մեռար, պրծար. դու չտեսար հաղարաւոր քեզ նմանների, որոնք դիակների կոյտեր կազմեցին. դու չը տեսար հաղարաւոր քեզ նմանների, որոնք իրենց անմեղ արիւնով ներկեցին հայրենի հողը։ Այժմ ամեն ինչ փոխուել է. վեր կաց, վեր, տես ի՞նչ օրի ենք հասել. ցերեկով ողբալը, սգալը անգամ երկիւղի ցնցումներ է առաջ բերում մեր երակներում...

Արտասուքը թեթևութիւն է, ասում է առածը, Վահէն էլ արտասուելուց յետոյ փոքր ինչ հանգստացաւ, ապա յանկարծ յիշելով իր երազը, մի արտասովոր դող զգաց. ուստի շուտափոյթ վերկացաւ, ձեռքը դրպանը տարաւ, թաշկինակ դուրս հանեց, տարածեց Սօնայի գերեզմանի վրայ. յետոյ այդ հողից մի բուռն վերցրեց, ածեց թաշկինակի մէջ ու կապեց։ Օ՜, իմ Սօնա, այսուհետև ուր էլ որ լինեմ, հաւատացած եղիր, որ դու ինձ ընկեր ես. իսկ երբ մեռնեմ, կը կտակեմ այս հողը ուղիղ սրտիս վրայ դնել ու թաղել. այո, սրտիս վրայ դնել, որովհետև այնտեղ է մարդու իսկական երջանկութիւնը և բաղդը։ Թող բեհեղների, ոսկիների մէջ պահեն մարդուն, ի՞նչ փոյթ, երբ դատարկութեան արձագանքներ է տալիս նրա սիրտը... Նա սրբեց արտասուքն և շարժուեց դէպի տուն։

Այնտեղ էին նրա ընկերները և զարմանք յայտնում Վոամի անյայտանալու մասին։ Միայն մէկը լուռ էր և ոչինչ չէր խօսում։ Դա Թորոս-բիձան էր, որին յայտնի էր ամեն ինչ։

—Ո՛չ, ո՛չ, վաղ առաւօտեան պիտի հրամայել, որ բազմութիւնը ճանապարհ ընկնի։ Սահմանը մօտ է, որից յետոյ երկիւղը ամբողջովին վերացած կը լինի և թշուառները իրանք կը հոգան իրանց գլխի ճարը։ Թէ չէ, ո՞վ գիտէ, դեւի ծնունդի անյայտանալը լաւ ապագայ չէ խոստանում մեզ։

—Անպատճառ, անպատճառ, Արթօ, կրկնեցին միւս ընկերները,—հարկաւոր է շուտ ճանապարհ գցել դրանց։

—Իսկ դու, Սալվի, հասար քո տատին. այժմ կաց նրա մօտ. մենք քեզ չենք մոռանալ. նկատեց Արթօն։

—Ե՞ս, հարցրեց Սալվին, մի փորձող հայեացք ձգելով Արթօյի վրայ,—ես քեզ միայնակ չեմ թողնելու, ուր դու լինիս, ես հետդ պիտի լինիմ. թէ դու ինձ մոռանալ չես կարող, ես էլ քեզ չեմ կարող մոռանալ։ Տատիս մասին մտածելու կարիք չը կայ. նա բազմաթիւ ազգականներ ունի այս գիւղում. կը յանձնենք նրանց խնամքին ու հոգացողութեան։

Արթօի պատասխանը եղաւ լռութիւնը։

Առաւօտեան բազմութիւնը առաջ ընթացաւ և, սովորական չարն ու բարին միշտ ճաշակելով երկու օրից յետոյ անցաւ սահմանը, ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ Վ. աւանում։ Այստեղից տեղական իշխանութեան հրամանով բաժանուեց գիւղերի վրայ. իւրաքանչիւր գիւղ պիտի իր մէջ պաշտպանէր մի կամ երկու ընտանիք և հոգար նրանց անհրաժեշտ կարիքները։

Վահէն վճռեց սրանց հետ անցնել իր հայրենի գաւառը տեղեկանալու թէ արդեօք ինչ վիճակի մէջ են գտնուում իր ծնողները և իր հարազատները։

Մի քանի օրից յետոյ հասան Զադ գիւղը։ Անկարող լինելով ցերեկով մտնել գիւղը, Վահէն ուղղեց իր քայլերը դէպի գերեզմանատուն, որը ճանապարհից այնքան էլ հեռու չէր։ Մութը դեռ նոր էր տարածւում երկրի վրայ։ Գերեզմանատանը ոչ ոք չը կար։ Սակայն այստեղ նրա ուշադրութիւնը գրաւեց մի փառահեղ շիրիմ, որի հարուստ շէնքը վկայում էր, որ նրա տէրը պատկանում է ժողովրդի կրեսոս դասակարգի խաւերին։

Հետաքրքրութիւնը նրան դէպի այդ շիրիմի կողմը տարաւ, ուշադրութեամբ կարդալով քարի արձանագրութիւնը, նա մնաց զմայլուած. այդ շքեղազարդ վէմի տակ պարկում էր Վռամի հայր Տրթլամէն. նա, որի ուխտեալ ճուտերը ամեն տեղ հետևում են իրանց ամեն ինչ ուրացութեան տուած հօր օրինակին։ Երկար, շատ երկար շիրիմը դիտելուց յետոյ Վահէն անզգայ ընկաւ մանր ու մաշող խոհերի գիրկը։

Մի քանի ամիս առաջ կատարուած եղերական անցքերը գալիս էին պարզ ապացուցելու, թէ ով և որպիսի՞ հրէշ է հանգիստ գտել այդ շքեղազարդ վէմի տակին։ Յանկարծ նրա շրթունքները ակամայից շարժուեցին, «գիւղական քահանայ, ոստիկանական ստորին պաշտօնեայ, խաչագող, անթիւ անմեղ զոհերի սկզբնապատ-

ճառ դարձած անհատը ուր, այսպիսի շիրիմը՝ ուր։ Կամ արդեօք նիւթական այնքան միջոց, որ նա կարողանար այսպիսի հարուստ դամբարանում հանգչել։ Գիւղական համայնքի աղքատ վարձատրութիւնը իրանց քահանաներին, ամեն տեղից հալածուած խաչագողութեան պաշտօնը և ոստիկանական ստորին սպասաւորի աղքատիկ պաշտօնավարութիւնը, չէին կարող դրան այս օրին հասցնել»։ Սակայն այդ խոհերը իսկոյն և եթ անյայտացան նրա յիշողութեան մէջ, երբ յիշեց Վռամին ու նրա տխրահոչակ ամուսնութիւնը։ Այստեղ էլ զգալի դեր է խաղացել նրա հարսի օժիտը։

Ո՛չ, ոչ, այդ օժիտը սև բծերով է ծածկել ձեր ապագան. որքան էլ փառահեղ կերպով զարդարէք ձեր արտաքինը, նոյնքան սև թախիծով և սև գոյներով ներկւում է ձեր ներքինը։ Միամիտներին կարող է շլացնել այդ օժիտը։ Որդեր ու գարշահոտութիւն է տարածում նա ինչպէս նրա շնորհիւ շինուած այդ գերեզմանում հանգչող դիակը, որը այժմ նեխուած գարշահոտութիւնների թագաւորութիւն է ներկայացնում։ Այո, հարսի օժիտով զարդարուած գերեզման...

Նա հեռացաւ այդտեղից. մութը բաւականին թանձրացել էր, ուստի նա առաջ ընթացաւ դէպի հայրենի տունը։ Մի քանի րոպէ և նա մօր գրկումն էր. հօրը սպանել էին Տրաթլամէի և Բաղոյի ազգականները իր և Սօնայի վիրաւորուելու հետևեալ օրը։ Երկար, երկար նա չէր կարողանում հանգստացնել մօրը և դադարեցնել նրա արտասուքները. մօր վիշտը բազմաթիւ և բազմազան էր. նա կորցրել էր ամուսնուն, կորցրել էր իր մին ու ճար որդուն, վերջապէս, կորցրել էր իր առողջութիւնը և այժմ տանջւում էր մահճի գրկում։ Ամուսնու և որդու կորուստը այնքան խորն էին ազդել նրա վրայ, որ ենթարկուել էր կաթուածի և, զրկուելով ձախ ձեռքը շարժելու ընդունակութիւնից, մի քանի ամիս էր ահա ինչ տանջւում էր այդ անողոք հիւանդութեան ճիրաններում։ Որդու անսպասելի յայտնուիլը թէև ուրախացրեց նրան, բայց միայն մի քանի րոպէով, որովհետև լաւ գիտէր, որ նա չէ կարող մնալ իրանց գիւղում։ Ինքն էլ չէր ցանկանում, որ նա մնայ այդտեղ և իր կեանքը վտանգի ենթարկի. լաւ գիտէր, որ նրան կամ տեղական իշխանութիւնը պիտի կալանաւորէ, կամ Տրաթլամէի և Բաղոյենց ազգականները պիտի սպանեն։ Իր քաղցը յագեցնելուց յետոյ, Վահէն պարկեց մօր կողքին և գլուխը նրա կրծքին դնելով սկսեց ծանր կերպով մշշալ։ Երկար, շատ երկար անբաղդ մայրը նայում էր իր նոյնքան անբաղդ որդու դէմքին։ Նրանից

ոչ հեռու ծանր խոմբացնում էին նրա այրի քոյր Եղիսը իր փոքրահասակ որդու հետ, որոնք Վահէի մօր մօտ էին դիշերում և նրան խնամում։

Լուսաբացին Վահէն զարթնեց. մօտը եղած դրամների մեծ մասը յանձնեց մօրը և, խոստանալով դարձեալ շուտ-շուտ այցելել նրան, հեռացաւ գիւղից, ուր նրա վէրքերը աւելի աղետալի դարձան և աւելի ծանրացան։

ԽԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ [1]

ՐՕԶԵԴԵՐԻ

Քսաներորդ կիրակի.

Անցեալ կիրակի բաժանուեցիր ընկերոջից հեռաւոր հովտում, նախանձոտ հակառակորդների շրջանում: Սակայն բարեկամդ դեռ ողջ է: Ցիշեալ դէպքից յետոյ մի ամբողջ շաբաթ ցաքանել է արտերը, ցանել դեռնախնձորը: Բայց այն ժամանակ վտանգի մէջ էի. չէ՞ որ սիրում եմ ամօթխած աղջկան և ուսուցչից չէի ծածկում այդ: Երբ այն պարոնը բացականչեց «աղջիկը ինձ է պատկանում», ամեն ինչ պարզուեց ինձ համար: Ի՞նչը կարող էր աւելի հասկանալի լինել, քան այն, որ ուսուցիչն էլ էր ճախրում նոյն կրակի շուրջը: Իսկ փոթորկի ժամանակ ամենաթոյլ կրակից էլ կարող է կտուրը վառուել: Եւ մարմարիոնի նման սառնասիրտ աղջիկը թոյլ էր տալիս այս մարդուն համբուրել իրան: Այդ պատճառով էլ հանդարտութեամբ լսեցի ուսուցչի աղաղակը և ասացի—լաւ ճաշակ ունիք, սատանան տանի: Թոյլ տուէք երջանկութիւն մաղթել ձեզ. մի բան կասեմ միայն՝ եթէ դուք թշուառացնէք այդ աղջկան, գիտցած եղէք, որ Հոյզէնդորֆի եկեղեցու հրապարակի վրայ կքարկոծեմ ձեզ:

—Շատ դեղեցիկ, մեղմօրէն պատասխանեց նա—եթէ ինձ հետ անբաղդ լինի նա, աշխատեցէք տեղեկանալ Ներոնից, Իւան Գրոզնիից և ինկւիզիտորներից, թէ ամենախիստ տանջանքներից որով պէտք է պատժել ինձ:

—Համաձայն եմ: Այժմ մեր յարաբերութիւնները չ՛պէտք է փոխուին. ես ուզում եմ ձեր անկեղծութեանը անկեղծութեամբ

1) Լուսայ 1909 5—6

էլ պատասխանել։ Մի փոքր չէ՞ք անցնի ինձ հետ. թիկն տուէք այս ծառին, եթէ ոչ պատմութիւնս լսելով կարող էք ուշաթափուել։ Դուք մի տեսակ վիպականութիւն էք համարում, երբ քսանուհինգ տարեկան երիտասարդը սիրահարւում է։ Սակայն դոքա չնչին բաներ են. ահա տեսէք լրագրի մի աշխատակից, որը գիւղական վարձուոր է դառել և իսկական վարձուոր։

Եւ սկսեցի պատմել։

Վարժապետը լսում էր աննկարագրելի հիացմունքով և սկզբում չէր ուզում հաւատալ ասածներիս։ Յետոյ գլուխը թափահարեց և, համոզուելով որ պատմութիւնս վերացնում է ամէն հակասութիւններ և դժուարութիւնները, սեղմեց ձեռքս։

Մինչ այդ մտանք հեռաւոր ծորիկը և մօտեցանք վիթխարի գորշ ժայռերին, որոնցից հոսում էին առուակները։

Հոգիս անդորը էր—ուրախալի էր դոնէ մի մարդու առաջ առանց դիմակի լինել։

Իսկ ուսուցիչը նայելով սարի ստորոտին անընդհատ հոսող մաքուր, հրաշալի ջրին, ընկղմուեց մտածմունքների մէջ։

—Ուրիշ որևէ մէկին յայտնե՞լ էք ձեր դաղտնիքը, հարցրեց նա։

—Չօյզենդորֆում դուք ամենավաղեմի ծանօթը և նորադոյն բարեկամն էք։

—Եկէք դուով խօսենք իրար հետ։

—Շատ դեղեցիկ։

—«Նրան» էլ երևի դու ես ասում։ Գիւղացիների մէջ այդպէս է ընդունուած։ Այդ միտքը կատաղութեան էր հասցնում ինձ։

—Այլևս յիմարութիւններ չես անի, այնպէս չէ։ Եթէ ինձ չես հաւատում, նայիր նրան։ Ինքդ պէտք է դիտենաս թէ որքան է սիրում քեզ։

—Ապացոյց ունեմ, փնթփնթաց նա.—երևի շատ ես տանջուել դաղտնիքիցդ, շարունակեց նա, ես էլ հանդիստ չեմ եղել։

—Ինձ թւում է, Գվիդօ, դու էլ ինչ որ ծածկում ես ինձանից։

—Ամենի համար հեշտ չէ սիրտ բանալը, ասաց նա.—մինչ-

դեռ ոՐքան լաւ կ'լինէր, եԹէ մարդիկ առանց խոստովանելու հասկանային...

Մի քանի խրախուսական խօսքերից յետոյ, պարզուեցան գործի ամենամուԹ կողմերը։ Հասկանում ես, փիլիսոփայ։ Աւելի լաւ է լսես ուսուցիչ Դավիդ Վինտերի պատմուԹիւնը՝

Ծագումով քաղաքացի է, արհեստաւորի զաւակ։ Ուսումը դժուարուԹեամբ է անցել և հասել է համարեա ԹէՐ իրաւաբանական գոկտորուԹեան աստիճանի։ Բայց արուեստաւորի որդին չէ ուզում հպատակուել, հպատակուել մանաւանդ ընկերների պահանջներին։ Ուսանողական սովորուԹեան համեմատ չի ուզում արբեցողուԹեամբ պարապել և կռուել նրանց հետ։ Ընկերները այդպիսի յանդգնուԹեան համար դուրս են շպրտում նրան իրանց շրջանից և այդպիսով փակում նրա առաջ դէպի փոքրիկ քաղաքի «ընտիր հասարակուԹիւն» տանող ճանապարհը։ Դեռ լաւ էր որ ժամանակաւորապէս դասեր դտաւ Հոյդենդորֆում։ Սակայն, չնայելով բաւարար վարձատրուԹեան, նրա վիճակը շատ աննախանձ էր։ Մէկ բան էր միայն փրկում. դա երիտասարդուԹիւնն էր։ Քաղաքի այս զաւակը մի առանձին սէր չունէր դասաւանդուԹեամբ պարապելու. բացակայում էր գիւղական կեանքի հասկացողուԹիւնը, սէրը դէպի ժողովուրդը, որոնցից կարողացաւ գնահատել միայն մի նորատի աղջկան։ Երբ ուսուցիչը Հոյդենդորֆ եկաւ, աղջիկը դեռ դպրոցական նստարանի վրայ էր նստած և նրա ընԹերցանուԹեան գրքի երեսին պարզ գրուած էր Բարբարա Վէյլէր։ Հէնց առաջին իսկ րոպէից դուր եկաւ ուսուցչին։ Ժամանակով աղջիկը ուսումը աւարտեց. ուսուցիչը կարդալու գրքեր էր տալիս նրան, աղջիկը կարդալուց յետ վերադարձնում էր իր եղբօր ձեռքով երկտողի հետ միասին։

Այսպէս է սկսուել այդ զգացմունքը և յանկարծ տիրել է նրանց։ Սկզբում սկսուել է սովորական շփոԹուԹիւնը. աղջիկը կարմրում էր, տղան ուղիղ ճանապարհին սայԹաքում։ Էհ, հօ չէմ նկարագրի քեզ այն ամենը, ինչ որ Ադամ և Եւայից սկսած միատեսակ է լինում։ Սակայն զարմանալի է ԹէՐ ինչպէս է պատահել, որ մայիս ամսին հանդիպել են իրար զանգակատան պատնէշի մօտ, ծաղկաղարդ շեփրուկի տակ և տղան առաջին

անգամ համբուրել էր նրան։ Բայց պատիժը կրեց. այդ ժամանակից սկսած, աղջիկը սկսեց խորշել նրանից և վերջինս չըզլաէր ինչպէս ազատուէր իրան տիրող կրակից։ Մի անգամ, Կայլինգից վերադառնալիս, Գվիդօն իր սենեակը գտաւ կանանցով լի, լաւ տաքացած և իր անկողնի վրայ պառկած Բարբելին, նա դողում էր ցրտից և ժպտում։ Սառած գետի վրայից անցնելու ժամանակ, ընկել էր ջուրը, որտեղից նրան դուրս էր բերել մի անցորդ գիւղացի և տարել մօտակայ խրճիթը։ Նոյն օրը, ի հարկէ, եկաւ Ադամը կառասայլով, որի մէջ դրին վերմակների մէջ փաթաթած Բարբելին և տարան տուն։ Բայց ուսուցիչը շարունակում էր տաքանալ։ Ցիշեալ դէպքից մի քանի օր անց, նա գնաց տարերը և ինչպէս պատահեց իրան գտաւ Ադամի տան մօտ։ Ուզում էր հանդստանալ, սակայն յոգնած չէր. ուզում էր տաքանալ, բայց չէր մրսում։ Վերջապէս ուզեցաւ հարցնել աղջկայ ծնողներից, թէ ինչպէս է նա իրան զգում։ Ծնողները սենեակում չէին, սրահում տաւարի համար ուտելու բան էին պատրաստում. մեն մենակ նստած էր Բարբելը իլիկի առաջ։ Սկզբում երիտասարդը ոչինչ չասաց, բայց յետոյ վազեց դէպի աղջիկը — սիրում եմ քեզ, սիրում եմ, ասաց։ Այստեղ նա բոլորովին իրան կորցրեց...

— Մտածիր միայն, բարեկամս, թէ ինչ էի զգում ես այդ խոստովանութեան միջոցին...

Մինչ այդ, տարերում ստուերները բարձրացան։ Ադամի տունը արդէն հեռու չէր և մենք հրաժեշտ տուինք իրար։

Շուտով ինձ հետ միացաւ մի ուրիշ ընկերակից՝ որսորդ Կօնրադը և սկսեց խօսել Բոխերլի մասին։ Ցզան բժշկութեան համար փող չի վերցնում նորանից, մինչդեռ ինքը պատրաստ է իր աչ թեւը կտրել, միայն թէ դրանով կարելի լինի կատարած սխալը ուղղել։

— Ինչու խփեցիք, հարցրի ես։

— Չէ՞ որ ծառայութեան մէջ եմ և պարտաւոր եմ կատարել ամեն բան, ինչ որ պահանջում են ինձանից մարդիկ, որոնց պատկանում է որսորդութիւնը։ Եւ ցաւալին էլ հէնց այդ է։ Սակայն ամենից վատն այն է, որ Կուլմբօկը, ինչպէս

թեւում է, պատրաստւում է այդ դէպքի մասին խօսել Լանդ-տաղում։

Պարզ է, որ այս մարդը վախենում է բացարձակ խայտառակութիւնից և կ'ցանկանայ հաշտուել Բոխերլի հետ։ Իսկ ես հրաժեշտի ժամանակ յայտնեցի իմ խորին համակրանքը Կուլմբոկին...

Մարգարեանի վրայ, ջրհորի մօտ տեսայ Ադամին։ Նա նստած էր և ծանրութեամբ էր շունչ քաշում։ Առանց թարմ խատի կովերը կաթ չեն տալիս և ինչպէս երևաց, ծերունին զնացել էր խոտ հնձելու։ Աշխատելու ժամանակ շնչարգելութիւնը սկսուել էր։

—Հայր, ինչո՞ւ էք ինքներդ աշխատում, երբ բանուոր ունէք։

Ծանր շունչ քաշելով, նա պատասխանեց.—շնորհակալ եմ բարի խօսքիդ համար, Հանզէլ։ Կիրակին քո օրն է։

Հնձած խոտը տանելով, սկսեցի մտածել թէ ի՞նչպիսի չիմար կերպով են դասաւորուած բաները աշխարհիս երեսին։ Կան մարդիկ, որոնք ժամանակը անց են կացնում մենամարտութեան, ձիարշաւի, որսորդութեան մէջ. կէս միլիոն ազատ դինուոր են պահում, իսկ իմ Ադամը նոյն իսկ կիրակի օրն էլ է ուժասպառ լինում աշխատանքի ծանրութեան տակ։

Երկմը կ'տեսի այս։ Ի՞նչ ես կարծում, փիլիսոփայ։

—

Էհ, թող սիրեն միմեանց, չիմար բաներ են։ Ամեն ինչ չիմար է աշխարհիս երեսին։

—

Քսան եւ մէկերորդ կիրակի

Մայիսի կիսին մեզ մօտ ձիւն է գալիս, կարծես նոր տարին լինի։ Կեռասիները ծաղկել են և միևնոյն ժամանակ ձիւնով են ծածկուած։

Պ. Շաէյնը դարձեալ մի սիրալիր նամակ էր գրել։ Ասում է որ իմ իրաւունքն է իմարկէ ամբողջ ապագաս և դիրքս զոհել որևէ ցնորքներին, բայց ինքը պատիւ ունի յայտնելու, որ

եկող ամսից իմ պաշտօնս յանձնուած կը լինի մի այլ մարդու։ Հասկանալի է որ նա ինձ համար կորած կ'լինի։

Ընկերներից և ոչ մէկը այլևս նամակագրութիւն չէ անում ինձ հետ։ Միայն Մէյերը քանի շաբաթ առաջ նկարագրել էր թէ ինչ է կատարուում խմբագրութեան մէջ։ Թւում է թէ աշխատակիցները ինչ որ դաւեր են սարքում իրանց արժանաւոր դլխաւորի դէմ. ծաղրում են որ գրագը տանուլ է տալիս։ Երբեմնապէս անհանդիստ եմ լինում մեր դրաղի երեք վկաների մասին։ Ի՞նչ կլինի, եթէ մի բան պատահի նրանց, կամ թէ յանկարծ Ամերիկա փախչելու լինին։ Իսկ առայժմ ինձ մեռած եմ ձևացնում և չեմ պատասխանում նախկին տիրոջս։

Շատ ցաւում եմ, բարեկամ, որ չես ընդունում առաջարկս—ամառը դալ Ալմգայ. սակայն, ճշմարիտն ասած, լաւ ես անում որ չես գալիս։ Ճիշտ ես ասում, ցաւալի կ'լինէր կորցնել հողի մերձաւորութեան տուած այս երևակայական տրամադրութիւնը, որ այս ժամին այնքան ախորժելի բոպէներ է տալիս մեզ։ Այս առասպելական աշխարհը կ'անհետանայ, երբ քաղաքի բնակիչը պառկի խոտի վրայ և դեղեցկադոյն մտքերով նայելիս լինի դեանախնծոր ցանող բարեկամին։ Դու արդար ես, հաղար անգամ իրաւացի, այս տարին ես պէտք է անցնեմ միայնակ, իմ «երկնային թագաւորութեան» մէջ։ Պէտք է խոստովանել, որ թշուառ հոգիս երբեմն տանջւում է։ Կեանքը արիւն քրտնքի աշխատանքով եմ ծեռք բերում։ Իսկ համբնակիչներիս տառապանքը, թէպէտ նրանք կիսով չափ են զգում այդ, բայց որ աստիճան նրանք հնազանդութեամբ տանում են ծանր լուծը, այնքան աւելի ցաւալի է լինում նայել նրանց։ Որչափ Ադամի գերդաստանի անդամները խոնարհւում են ճակատագրի առաջ, և ինչքան ես խղճում եմ նրանց, այնքան աւելի երջանիկ եմ զգում ինձ։ Սկսում եմ այժմ միայն հասկանալ, թէ ի՞նչ նշանակութիւն ունի մեզ համար կարեկցութիւնը։ Ցուսահատութեան հակաթոյն է դա, մանաւանդ ինձ համար։ Շատ բան էի սպասում լեռնային բնութեան վեհութիւնից, դաշտանկարների գեղեցկութիւնից։ Սակայն իզուր. բնութեամբ զմայլւում ես միայն այն ժամանակ, երբ հոգիդ ազատ է և ներ-

դաշնակ։ Բայց նա ոչինչ չէ կարող փոխարինել. դորա համար էլ մարդիկ միայն ազքատ են մնում։ Պատահմամբ օգտակար եղայ Ադամի ընտանիքին։ Թող այդպէս լինի, թող չ'սխալուեն իմ վերաբերմամբ։

Քսաներկուերորդ կիրակի

Նամակիցս սկիպիդարի հոտ է գալիս։ Մի զարմանալ. լսիր թէ ինչպէս պատահեց այդ։ Անցեալ շաբաթ զբաղուած էինք մեր կալուածի սահմանները ցոյց տուող և դաշտը մարգագետնից բաժանող ցանկապատի նորոգելով։ Հանաք բան չէ. պատմութեան նայելով՝ այս կողմերում սահմանները պահպանւում են նախնիների հոգիներով։ Ադամի հասկացողութեամբ հողը վաճառել առանց պատժի անկարելի է, որովհետև նա ոչոքին առանձնապէս չի պատկանում, այլ ամենի սեպհականութիւնն է—ամբողջ տոհմի, թէ նախնիների և թէ ապագայ սերնդի։

Այսպէս ուրեմն մենք աշխատում էինք ցանկապատի վրայ։ Ծերունին ջուխտ-ջուխտ ցիցեր էր ամրացնում դետնի մէջ, ես ծողեր էի անցնում նրանց միջից և յետոյ այդ ծողերը կապում էինք թարմ ճիւղերի կեղևով։ Կեղևները պատրաստում էր Ռոխերը խարոյկի մօտ, որպէսզի անհրաժեշտ ամրութիւնը ստանան նրանք։ «Միծեռնանին» միշտ դոհ է, երբ իրա համար էլ մի աշխատանք է գտնւում, որը նա կարող է առողջ մարդուպէս կատարել։ Նա ուզում է կատարեալ մարդ լինել, բայց աչ թեւը չի գործում, կարծես չորացած ծառ լինի և ցաւում է, որքան մարդկային մարմինը կարող է ցաւել։ Խեղճ տղան երբեմնապէս այնպիսի յուսահատութեան է հասնում, որ ամենքս էլ խիստ անհանգստանում ենք։

Ի՞նչ է իմ ձեռքիս վէրքը դորա հետ համեմատած։ Շուտով կ'հասնեմ սկիպիդարին։ Համբարձման նախընթաց օրն էր։ Երեկոյեան, ժամը 4-ին, ծերունին յայտնեց, որ կարող ենք աշխատանքներս դադարացնել։

—Ամեն ինչ լաւ է։ Այժմ կարելի է հանգստանալ, ասաց նա։ Բայց ես նկատեցի, որ բոլորը կարգին չէր։ Ցանկապատի մէկ կողմը դեռ ամրացրած չէր, այնպէս որ մեր՝ եկեղեցում

գանուած ժամանակ, հարևան կովերը կարող էին դիւրութեամբ անցնել մեր ծաղկած արտերը։ Ես Մնացի տանը, որ գոնէ փշերով մի փոքր ծածկեմ այդ չը ծածկուած տեղը և աշխատելու ժամանակ ձեռքս փշով վերաւորեցի։ Ադամին յաջողուեց դանակով փշի մի մասը դուրս քաշել, բայց այն կտորը, որ Մնացել էր վերքի մէջ, անտսելի ցաւ էր պատճառում։ Մայրը մի ամանով սև ծիւթի իւղ բերեց, սպեղանի պատրաստեց և դրեց վերքի վրայ։ «Անպատճառ կ'քաշի փուշը» ասաց նա։

Երկու գիշեր համարեա աչքս չեմ փակել և ուզում էի արդէն հակառակ ընդհանուրի անհամաձայնութեան դիմել Կայլինդի բժշկին, երբ փայտի կտորը սկսեց արդէն երևալ։ Վարդի թուփի փշից մեծ չէր, այնպէս որ մինչև անգամ անախորժ էր զգալ, թէ ինչպիսի ցաւ կարող էր պատճառել նա ջղերին։

Այժմ դիտես, թէ ինչու նամակս սկիպիոնի հոտ է արձակում։

Նախանցեալ օրը մեծ սենեակում ծերուկը սկսեց շինել ինձ համար անհասկանալի ինչ որ բան, որ բաղկացած էր գերաններից, գլանակներից, ակներից և այլն։ Ինքնասիրութիւնս թոյլ չէր տալիս հարցնել, թէ ինչ է նշանակում այդ։ Ճաշից յետոյ երբ սկսեց գլանակների վրայ թել փաթաթել, նոր սկսեցի հասկանալ թէ ինչ էր այն։ Իսկ երբ երևաց կկոցը և սկսեց շրջել շարքին ծգուած թելերի միջև, այն ժամանակ գիւղատնտեսական մասի խմբագիրն անգամ չէր կարող կասկածել, որ նրա աչքի առաջ ջուլհակի գործիք է դրած։

Ինչպէս համարձակ կերպով կարելի է ասել, որ ժանրութիւններ տեղափոխելու համար փայտէ հասարակ գլանիւր աւելի կարևոր յայտնութիւն էր, քան այժմեան շոգեկառքերը, իսկ հասարակ իլիկը ամենաանհրաժեշտ բոլոր մանող մեքենաներից. նոյնպէս կարելի է ասել, որ ջուլհակի փայտէ գործիքը, չնայելով իր պարզ ձևին, ամենահասարակ միջոցներով աւելի նպատակայարմար դարձել, քան մահուդէ գործարանների այժմեան բազմահնար յարմարութիւնները։ Իւրաքանչիւր անհատ տրամադրութեան տակ երկու ձեռք, երկու

ոտ և մի գլուխ ունենալով, հրաշալի հարթ քաթան է պատրաստում։

Սակայն դորա համար նախ և առաջ մտածող գլուխ պէտք է ունենալ։

Քաղաքացու համար խրատական կ'լինի ուշադրութիւն դարձնել յիմար զիւղացու բազմակողմանիութեան վրայ։ Բայի դիւղատնտեսութեան վերաբերեալ հմտութիւնից, գիւղացին դիտէ ոչ միայն ցորեն կալսել, կտաւատի իւղ պատրաստել, բնակարան կառուցանել իր համար, կտուրը ծածկել, վառարան շինել, ջրհոր փորել, օղի հանել, ձիւթի իւղ պատրաստել, ածուխ այրել, այլև մանել, քաթան և բուրդ դործել, կաշի լմել— մի խօսքով անել այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է տնտեսագիտութեան մէջ և որը պէտք է բաւարարութիւն տայ մարդուս անհրաժեշտ կարիքներին։ Ուղղակի զուարճալի է տեսնել թէ ինչպէս է Ադամը աշխատում դաղդեահի վրայ։ Ես մի փոքր օդնում էի ծերունուն, բայց շուտով խճճուեցի դերձանի մէջ. աշխատում էի այս և այն կողմ շուռ ու մուր տալով ադատուել, սակայն աւելի խճճուեցի, այնպէս որ ընտանիքի մայրն էլ չ'կարողացաւ ադատել ինձ. իսկ ես աւելի և աւելի էի խճճուում։ Վերջապէս անշնորհք միջատին ոստայնից ադատելու համար պէտք եղաւ կանչել Բարբելին։ Երբ նա սենեակ մտաւ, ինձ թուաց թէ խաչանիշ սարդը դալիս է տեսնելու թէ ինչպէս այս անդամ որսը ընկել էր նրա թակարդը։ Մինչդեռ նա հանդարտ շարժուածքով հանում էր թելերը և կրծքիս կապանքները թուլացնում, մի ինչ որ նոր բան էր փաթաթուում ինձ և կաշկանդեց վերջնապէս...

Եթէ ուսուցիչը դիտենար այդ։ Կարծում եմ որ Ադամի դործած այս քաթանը օժիտի համար է։ Եւ ինձ թուում է... բայց ոչ, չիմարութիւններ են։ Աղջիկը ոչինչ չունի իմ դէմ, նա պարզամիտ է ինչպէս ծնծաղիկը։ Ես ինքս կաշկանդեցի ինձ— կաշկանդեցի իմ ցնորքներով։

Մենք «բարձր կրթութեամբ» մարդիկս սիրել չենք կարող։ Մենք կարող ենք խաղալ սիրոյ հետ, սիրային խարդաւանութիւններ սարքել, կեղծել և նախանձել։ Իսկ սիրել։ Սիրել ինչ-

պէս Լեանդրը սիրում էր Գերօին, ինչպէս Ռոմեօն—Իւլիային։ Դրա համար մենք չափազանց բարեկիրթ ենք։ Դու ինչ ես կարծում, փիլիսոփայ։

Բարի գիշեր, բարեկամս—այս մաղթանքս ուղարկում եմ քեզ իմ հեռաւոր անկիւնից։

Մեր տանեցիք մի լաւ սովորութիւն ունին, որը հարևան գիւղական այլ խրճիթներում ես չեմ նկատել։ Երեկոները, երբ գնում են քնելու, ծնողները, զաւակները, քոյրը, եղբայրները իրար ձեռք են տալիս և ասում «Աստուած պահպանի քեզ գիշերը»։ Այնպիսի լուրջ կերպով են ասում, կարծես թէ որևէ վտանգից առաջ հրաժեշտ տալիս լինին իրար։ Դա յիշեցնում է ինձ թէ ինչ է գիշերը՝ «նա բարեկամ չէ մարդուն», թ՞ինչ է քունը՝ «մահուան եղբայրն է նա»։ Մարդը պարկում է և լիայոյս է, որ իրա սրտի բաբախումը կ՚տաքացնէ նորա մարմինը։ Շուտով կ՚զարթնի ամենը, ինչ որ նրա կեանքն էր կազմում. կ՚վերջանայ, կարծես երբէք էլ գոյութիւն չի ունեցել և եթէ չի վերանորոգուի, յատիտենապէս քնածը այլևս չի զգայ ոչ տխրութիւն և ոչ վիշտ։ Իսկ եթէ զարթեալ կսկսուի, դա արդէն կարծես աշխարհի նոր ստեղծագործութիւն է, նոր ծնունդ, Աստուածային հրաշք։

«Աստուած պահպանի քեզ գիշերը» բարեկամս։

Քսաներեքերորդ կիրակի.

Հասաւ հոգեզալստեան օրը, այդ սիրելի տօնը։ Այժմ միայն ըմբռնեցի նրա հրաշագեղութիւնը։ Եթէ առողջ գիւղացին իրաւունք ունենար լաց լինելու, ուրախութեամբ կ՚արտասուէի։ Անհնար է նկարագրել, բարեկամս, թէ որ աստիճան շքեղ է լեռնային բնութիւնը։ Երբ մօտից փչում է հողմիկը, կեռասենու ծաղիկները թափւում են կտուրի վրայ, իսկ մարգագետինները սպիտակին են տալիս մարգարտածաղիկներով։ Ես զուարճանում եմ զարունով և ծաղիկներով ու երբեմն ցանկութիւն եմ զգում բացականչելու՝ «Տէր-Աստուած, անարժան եմ այս ամենին»։ Եւ այս երանութեան համար դեռ վարձատրութիւն էլ եմ ստանում։ Մահու չափ ամաչում եմ զրպիս համար։

Իսկ Բաբելի համար դեռ ծաղիկները բաւական չեն։ Նա կանգնած է պարտիզում մի ծունկի վրայ, ձեռքով յենուել է միւս ծնկան և տնկում է մեխակի և լեռնապսակի արծաթափայլ ծաղիկները։ Ահա նա վերցնում է սպիտակ թաշկինակը և քրտինքը սրբում։ Մի՞թէ արդէն այդքան շոգել է։

Այսօր վաղ վերկացայ և խոնաւ խոտի վրայով գնացի դէպի վեր. կանգ առայ այն տափարակի մօտ, որտեղ Զատկի գիշերը խարոյկ էինք վառել։ Այդ հզօր լեռնային երկիրը Աստուածային սեղանի նման սփռած էր առաջս։ Հօյզենդօրֆից զանգակի զօղանջներ էին լսւում, յիշեցնելով, որ այնտեղ է կանգնած եկեղեցին այն անձանց համար, որոնք ընդունակ են Աստծուն միայն այն ժամանակ ճանաչելու, երբ նա փոքրանում է և բնակւում մարդկային շինութեան մէջ։ Ճշմարիտ է, Աստծուն նախ և առաջ պէտք է սեպհական սրտի մէջ որոնել. և, կարող է պատահել, որ մարդս քարաշէն պատերի մէջ աւելի դիւրութեամբ ինքն իրա մէջ խորասուզուի, քան ազատ երկնքի տակ... Սակայն սիրտս միայն այնտեղ չէ, որտեղ մարմինս է գտնւում. նա ամենայն տեղ է, որտեղ միայն կարող է թափանցել իմ միտքս, ամեն բանի մէջ՝ ինչ կարող եմ տեսնել, լսել և հոտով ընդգրկել։ Այն ամենը, ինչ ես դիտեմ, կազմում է իմ մարմինը, իմ անձը։

Այսօր առաւօտ, երբ այդ մտքերը ինձ պաշարեցին, յանկարծ ուրախութիւն զգացի։ Մարդկային տարածք, դու նմանուեցիր տիեզերքին։ Տիեզերք, դու նմանուեցիր մարդուն։ Դու մէկ ես տիեզերքի հետ, դու յաւիտենական ես, իսկ քո հոգին Աստուած է կոչւում։ Այն ժամանակ չկայ այլևս տանջանք, չկայ թերութիւն. իսկ եթէ իրրև մարդ քեզ դժբաղդ ես զգում, նայիր քեզ վրայ իրրև տիեզերքի մի մասնիկի վրայ։

Արդէն մի քանի անգամ նկատել եմ, որ վերամբարձ տրամադրութիւնը կարող է վտանգաւոր լինել։ Այսօր, լեռան տափարակի վրայ, մի վայրկեան ինձ թուաց թէ եթէ անդունդի ափին լինէի կանգնած, կ՚թռչէի հէնց արևի մօտ... բայց վարձուորը զսպեց ինձ և ասաց. «ի՞նչ է պատահել քեզ. մի՞թէ Ադամը իր հիւանդ կրծքով պէտք է միայնակ աշխատի»։

Նկատե՞լ ես արդեօք, որ սովորաբար ճանապարհորդը սարի գլուխը բարձրանալով համարեա միշտ երեսը ակամա, դէպի արևմուտք է դարձնում։ Մաղնիսական ոյժը չէ՞ արդեօք մարդուն արևելքից դէպի արևմուտք դարձնում։ Նախ և առաջ աչքերս ուղղւում են հեռաւոր ժայռ է շղթաների գագաթներին, որոնք լուսաւորուած են ծագող արևով։ Մի։ս կողմից տարածւում է արծաթափայլ լայն ծովը։ Դա Ֆիուվեան ծովացոցն է։ Պարզ չրի երեսին երերում է նաւը... բայց ծովածոց չէ դա, այլ սարերի միջի ամպը. և ոչ էլ նաւ է, այլ բազէն է սաւառնում սպիտակաւուն մառախուղի վրայից։ Եւ ահա այնտեղ, որտեղ ծովը միանում է յաւիտենականութեան հետ, ծագում է արևը... Զարհուրելի, արիւնահեղ, ահագին արևը։ Նա զրկուած է փայլից և վառւում է առանց բոցի, կարծես ածուխ լինի... մի՞թէ նոյն արևն է սա, որը մի քանի ժամից յետոյ կ՚փայլի երկնքում, ինչպէս պայծառ աստղ։ Ահա բարձրանում է դանդաղութեամբ։ Նա չի արտացոլւում ամպի ծովի մէջ, միայն լեռներն են իրանց ստուերները ուղարկում այդ ծովին, և այդ ստուերների վերջաւորութիւնները միաւորւում են ծիածանի գոյների հետ։ Իսկ արևը աւելի և աւելի է տաքանում և ընութեան անբռնադատ օրէնքով անվերջ սլանում է երկնքի վրայով։

Թշուառ քաղաքացիներ, այժմ նրանք քնած են, իսկ տասն չորս ժամից յետոյ արևի ծագումը բեմի վրայ տեսնելու համար, կ՚հաւաքուին զարշահոտ թատրոնում։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

«ՄԹՆԱՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ»

Վահան Տէրեանի

Վերջին երեք-չորս տարուայ ընթացքում, երբոր վերացան ցենզուրական կապանքները, հայ գրական աշխարհը ողողուեց բազմաթիւ հրատարակութիւններով։ Նոյն իսկ մասնագէտ գրագէտը, որ ապրելիս լինէր իսկ գրելով՝ ոչ մի հնար չունէր հետեւելու և բոլորը կարդալու։ Տպագրական խօսքի համեմատական ազատութիւնը թէև ստեղծեց բազմաթիւ անմիտ գրուածքներ, բայց և ունեցաւ, որպէս գրականութեան պատմութիւնից իսկ յայտնի է, շատ լաւ կողմեր։ Մանաւանդ այս եզրակացութիւնը ճշմարիտ է հայերի վերաբերութեամբ։ Այս լաւ կողմերից մէկն էլ այն է, որ երևան եկան հայերի շատ վատ կողմերը։

Նախ բոլոր գրքեր հրատարակողները համոզուեցին, որ հայը այն կուլտուրական ժողովուրդը չէ, որպէս մենք մեզ ներկայացնում ենք օտարներին սնափառութեամբ։ Տպագրած գրքերը, որոնց մէջ ի հարկէ կային և արժանաւորները, փառաւոր կերպով դարսուած մնացին խանութներում կամ ծախուածների մեծ մասն էլ անվճար մնաց։

Երկրորդ՝ տպագրական խօսքի ազատութիւնը մի աւելորդ անգամ ապացուցեց ոչ միայն հայի սնափառութիւնը, այլ և այն պատմական փաստը՝ թէ հայը ազգասէր է դառնում միայն այն ժամանակ, երբոր ենթարկւում է հալածանքների։

Այսպէս օրինակ՝ երբոր երկրիս նախկին իշխանութիւնը դադրեցնում էր գրեթէ բոլոր հայ թերթերը, մենք բողոքում էինք և ազգասիրութիւն անում, իսկ այժմ, երբ մենք հնարաւորութիւն ունենք հայերէն կարդալու, մեր թերթերը հազիւ ապրում են։

Երրորդ՝ խօսքի ազատութիւնը ապացուցեց, որ հայը ընդունակ չէ խելացի կերպով օգտուել ունեցած ազատութիւնից, այլ նա մի ինքնաոչնչացնող ժողովուրդ է։ Էլ ինչ վէպեր, բանաստեղծութիւններ, դասագրքեր, փիլիսոփայութիւններ ասես որ չհրատարակուեցին։ Բայց իհարկէ մէկը միւսին հակառակը,

մէկը միւսի դէմ։ Վարդան ու Վասակ, Վահան ու Մեհրուժան, Դաշնակ ու Հնչակ միշտ անպակաս են հայերի մէջ։

Սակայն տպագրական խօսքի ազատութեան ժամանակամիջոցում լոյս տեսած հրատարակութիւնների մէջ մի քանիսը արժանի են կատարեալ ուշադրութեան. այս տեսակներից է և պ. Տէրեանի բանաստեղծութիւնների առաջին գիրքը։

Ներկայ ժամանակում, երբոր թէ կեանքում, թէ գրականութեան մէջ տիրում է գաղափարների շփոթութիւն և ամեն բանի վերագնահատումն է, զարմանալի չէ, որ պ. Տէրեանը գրում է ժամանակի ոգով. այսինքն Տէրեանի բանաստեղծութիւնների մասին ոչինչ որոշ ասել անհնար է։ Ներկայ ժամանակ ոչ մի բանաստեղծ փոքր ի շատէ տաղանդաւոր, իսկական բանաստեղծ կեանքից գոհ լինել չէ կարող. այս պատճառով նրա գրուածքների մէջ առանձնապէս աչքի են ընկնում տխուր էլէգիաներ, յուռետես մօտիւներ և սիրոյ տանջանքներ, մի փոքր էլ նիցշէականութիւն, այսինքն բառերի կուտակում, սիմվոլիզմ, անորոշ նախադասութիւններ և այլն։ Այս բոլորը հասկանալու համար եթէ մէկը նրա ոտանաւորները թարգմանէ մի ուրիշ լեզուի, ակնյայտնի կդառնայ, որ տաղանդաւոր երիտասարդ Տէրեանը գերի է ժամանակակից գաղափարների խառնաշփոթութեան։

Մթնշաղ.

Վերջալուսի վերջին շողը մեղմ հանգաւ.
Խաղաղութեան քնքոյշ քողը ցած ընկաւ.
Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամեն ինչ խորհրդաւոր ու խոհուն
Ցնորում է կապոյտ մութի աշխարհում,
Չկայ ոչ մի սահման դնող պայծառ շող,
Աղմուկի բեռ, մարդկային դէմք սիրտ մաշող.
Հիւանդ սիրտդ չի տրտնջում, չի ցաւում
Որպէս հրաշք մոռացումի անձաւում,
Եւ թւում է, որ անեզր է ամեն ինչ
Ու ողջ կեանքդ—մի անսահման քաղցր նինջ։

Ո՞ր հայ ընթերցողը այս տողերից մի բան կարող է հասկանալ։ Նախ բոլոր տողերը վերջանում են ստորակէտներով և ոչ մի վերջացած նախադասութիւն չկայ։ Ինչ կնշանակի թէ պօէտը սիրում է մթնշաղը նրբակերտ, երբ ամեն ինչ երազում է հոգու հետ, երբ ամեն ինչ ցնորում է կապոյտ մութի աշխարհում։ Ինչ է նրբակերտ մթնշաղը, ինչ է կապոյտ մութի աշխարհը կամ մութը ե՞րբ է կապոյտ լինում։ Այս ինչ դեղին սէր է կամ կար-

միր մածուն։ Ինչ բան է մոռացումի անձաւում հրաշքը։ Սա ինչ ցնդաբանութիւն է։

Խելագարի երգեր էլ կան այս գրքի մէջ։ «Հիւանդ» ոտանաւորի մէջ հեղինակը խնդրում է (երևի իւր սիրած էակից), որ նա պօէտի սիրտը պաճուճի անուշ երազով և չեղածի յուշով ամոքի նրա հոգին։ Ինչ կնշանակի «սիրտը պաճուճել անուշ երազով կամ ամոքել հոգին չեղածի յուշով»։ Այս ոտանաւորները հասկանալու համար պէտք է պօէտը ամեն մի ընթերցողի կողքին լինի բացատրելու իւր շատ խոր մտքերը և գերազանց խօսքերը։ Ասում են, որ այս գիրքը լրագիրները գովել են։ Կարող է լինել։ Միթէ մեզանում գրականական աշխատանքների գնահատութիւն կայ։

Երիտասարդ պօէտը շատ պեսիմիստ է և նրա երգերը ծայրահեղ յուսահատութիւն են ներշնչում ընթերցողին։ Մի բան մխիթարական է, որ նրան հասկանալը շատ դժուար է, ուստի և պիտի կարծել, որ նրա գրքի ազդեցութեան տակ աշխարհը չի քանդուի և արևը կշարունակի ցորեն ու գարի բուսցնել, թէև Տէրեանը մոռացել է արևի ուղին։

Շատ ափսոսում եմ, որ անձամբ ծանօթ չեմ այս երիտասարդի հետ, պէտք է որ նա շատ սրամիտ և կոմիկ մարդ լինի։ Այսպիսի երիտասարդները, որոնք կեանքում շատ կենսուրախ են լինում և լաւ քէֆ անողներ՝ շատ զարհուրելի բաներ են գրում առհասարակ։ Մօտա է։ Կարդացէք «Վիհի եզերքին» երգը.— Ոչ մի խելացի միտք, ոչ մի պատկեր, ոչ մի առողջ զգացմունք։

Բանաստեղծը մոռացել է Արևի ուղին։ Նախ արևը ուղի չունի, որովհետև նա ոչ մի տեղ չի գնում։ Երկրագունդը դեռ շարժւում է, բայց արևին տեղից շարժելը կարող են միայն հայ բանաստեղծները, որոնց համար ոչ մի գիտութիւն, ոչ մի օրէնք, ոչ մի բնական հասկացողութիւն նշանակութիւն չունի։

Բայց բացի նիշշէականութիւնից, պեսիմիստական ցնորքներից, այս ուխտուն երեսանոց գրքոյկի մէջ կան իդէալական զգացմունքների արտայայտութիւններ էլ, կան գեղեցիկ կտորներ։ Իդէալական սիրոյ արտայայտութիւնն է «Ցնորք» երգը (եր. 29). Գեղեցիկ է վերջին ոտանաւորը, որ «Գարուն» վերնագիր է կրում։

Մի քանի խօսք էլ երիտասարդ գրողի իսկական տաղանդի մասին. պէտք է խոստովանել, որ Տէրեանը շատ սիրուն գրականական լեզու ունի, որ կարծես դիտմամբ ոչ բանաստեղծական է դարձնում իւր խրթին խօսքերով ու ոճերով։ Սա Յովհաննէս Յովհաննիսեանի պակասութիւններից և արժանիքներից մէկն է,

որի ազդեցութեան տակ շատերը գրել են և անշուշտ Տէրեանը կամ իրօք Յովհաննիսեանի աշակերտ է եղել կամ նրա երգերի հետ շատ ծանօթ մէկը։ Յովհաննիսեանը, որին հայ ազգի քննադատ պ. Լէօն նոյն իսկ բանաստեղծ չկամեցաւ ճանաչելու՝ սակայն կովկասահայ գրականութեան մէջ ունեցաւ բազմաթիւ հետևողներ։ Բայց մենք շեղուեցինք բուն խնդրից։ Բացի մի քիչ խրթին, բայց գրականական լեզուից Տէրեանը ունի և անկեղծ զգացմունքներ։ Ջահել է նա և նրան չի սազում նիցշէականութիւն և պեսսիմիզմը, բայց նա ունի մի քանի հատ սիրոյ երգեր, որ յիշեցնում են Անակրէօնին, Հորացիոսին, Հէյնէին, Հաֆիզին և այլն։ Այսպիսի երգեր և Յովհաննիսեանը ունի։ Ահա Տէրեանի երգերի նմուշներ.

—Ջարտասանուած սիրոյ խօսքեր,
Դուք չէք մեռել ու չէք մեռնի,
Դուք ապրում էք, սիրոյ խօսքեր,
Որպէս խայթը սև եղեռնի։
Արծաթ կարկաջուն
Աղբիւրն է խօսում յաւիտենաբար,
Իմ ուղիների հեռում անկոպար
Յաւիտենաբար
Քո սէրն է հնչում։

Այստեղ պեսսիմիզմ շատ քիչ կայ

Սրտագրաւ սիրուհիս
Գրաւեց սիրտս ու հոգիս.
Գրաւեց սիրտս ու հոգիս
Սրտագրաւ սիրուհիս։
Հավիզ

Վարդանոցիս կիպարին
Քո հասակն է, իմ անգին,
Քո հասակն է, իմ անգին
Վարդանոցիս կիպարին։
Հավիզ

Քո տուած վէրքն հալխի տուած
Սպեղանուց շատ քաղցր է,
Քո տուած թոյնն հալխի տուած
Թիրեաքիցը շատ քաղցր է։
Հավիզ

Բոլոր լիրիկ բանաստեղծները կրկնել են սաղմոսները։ Լերմոնտովի ու Պուշկինի «Մարգարէն» նոյնպէս շատ ազդեցութիւն են ունեցել մեր բոլոր քնարերգուների վերայ։ Տէրեանը նոյնպէս մի այդպիսի սիրուն ոտանաւոր ունի։

— Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ,
Ու ճամբայ կընկնեմ յաւէտ միայնակ,
Անխօս կմարի երեկոն աղօտ
Կպառկեմ դաշտում կանաչ ծառի տակ։

Անտուն անցորդից կխնդրեմ ես հաց,
Պայծառ աղբիւրի ջուրը կը խմեմ.
Երկինք կյառեմ աչքերս յոգնած,
Քնքոյշ ծաղկանց հետ խաղաղ կքնեմ։

Այսպիսով Տէրեանի երգերի մոտիւները շատ աղքատ են, նա մի քանի երգ ունի անհատական և եսական սիրոյ մասին, մի փոքր պեսսիմիզմ և նիցշէականութիւն (դէ մեր ժամանակում առանց անարխիզմի և խելագարութեան հօ չի կարելի), բայց և ձգտում դէպի անհունը, այսինքն բանաստեղծական աւիւն, բայց անորոշ։ Լեզուն շատ կոկ է, ոչ գռեհիկ, այլ գրականական և մի փոքր վերացական։ Երբոր Տէրեանը անարխիզմից կանցնի գիտակցութեան և կհասկանայ, որ անհատական և եսական սիրոյ երգիչը չէ, որ գրականութեան պատմութեան մէջ իբրև գաղափարի զինուոր պիտի անմահանայ և կսկսի զգալ և արտայայտել ուրիշների սէրն ու ատելութիւնը, կսկիծն ու խինդը ու կեանքը իւր բոլոր դառնութիւններով և ուրախութիւններով, այն ժամանակ մենք կասենք, որ նա բանաստեղծ է, իսկ այժմ մի սկսնակ, բայց հայ լեզուին տիրապետող և անձնական զգացմունքներով տարուած մի եսական երիտասարդ գրող է։

Գ. ՆԵԳԻԲԱՐԵԱՆ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ռ. Պատկանեան. Զախու. փոխադրեց Ստ. Լիսիցեան, Տրփխիս 1909 20 կ.

Атрпетъ. Имамат. историческое изслѣдованіе. Александрополь 1909, 1 р.

Դ. Պետրով քահ. Մեծ հովիւ. թարգ. Գր. ք. Նոր-Արևեան. Վաղարշապատ 1908 15 կ.

Հարտման—Ռուզամի. Իրաշրջանների վերածուած թուաբա-

Ղական խնդիրների ժողովածու. Դ. տ. փոխադրեց Յ. Տէր-Միրաքեան, Թիֆլիս 1909 35 կ.

Ա. Չիլինգարեան և Ռ. Ռաշմաճեան, Դասընկեր Ա. տարի այբբենարան ընթերցարան. Թիֆլիս 1909 50 կ.

Դաղեան ամուսիններ, Դասագիրք բնագիտութեան, ա. և բ. հատոր. Թիֆլիս 1909 55 կ. և 50 կ.

— Ընդհանուր պատմութեան դասագիրք, ըստ Վինոգրադովի. Թիֆլիս 1909, գ. 45 կ.

Ախիլլ Լուիա. Սօցիօլոգիա. գերմ. թարգմ. Pessimist. Թիֆլիս 1909 60 կ.

Ալ. Աբէլեան. Գիւղի վարժապետ. Թիֆլիս 1909 35 կ.

— Պօէտի երազը. նոյն 20 կ.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մի ամսից աւելի է, որ «Баку», «Մշակ», «Հորիզոն» և այլ թերթերը խօսում են այն երևոյթի մասին, թէ ինչո՞ւ ռուսահայերը չեն օգնում ադանցիներին։ Թշուառացած մարդկանց համար ի հարկէ ոչ մի նշանակութիւն չունեն այն պատճառները, որոնցով կարելի է բացատրել այս երևոյթը, բայց մեր հասարակական կեանքի երևոյթները հասկանալու համար շատ մեծ նշանակութիւն ունի այս խնդիրը։

Մէկը դուրս է եկել և ցանկալով իւր մեծութիւնը և գերազանցութիւնը գովաբանելու համար բոլորովին անտեղի յարձակւում է հայ ինտէլլիգենցիայի վերայ, միւսը մեղադրում է առհասարակ հայ ժողովուրդը, որ նա յօժար կամքով բարեգործութիւն անել չէ սիրում, այլ միայն բռնի ուժի երկիւղից է տալիս (Հորիզոն № 9) և այլն։ Հայ ինտէլլիգենցիան պակասաւոր և յարձակման արժանի կողմեր շատ ունի, բայց ոչ ադանցիներին մի քանի ռուբլի չտալու համար։ Նախ քան պարզելն այն պատճառները, թէ ինչո՞ւ այժմ ռուսահայերը զլանում են օգնելու մեր դժբաղդ ադանցի եղբայրներին, հարկաւոր ենք համարում նշմարել մի տգեղ երևոյթ հայ ինտէլլիգենցիայի և առհանարակ ոչ-ժողովրդական դասակարդից դուրս եկած մարդկանց մէջ։

Հնուց յայտնի է, որ մնափառութիւնը, ցուցամոլութիւնը և կեղծիքը հայ գործիչներից շատերի անխուսափելի յատկանիշներից մէկն են կազմում։

Ահա ձեզ մի հայ յեղափոխական մի երկու գիրք կարդալուց յետոյ՝ ոգևորւում է Իտալիայի, Բուլղարիայի, Սերբիայի ազատութեան գաղափարով, առանց գիտնալու ժողովրդի դրութիւնը, տնտեսական, աշխարհագրական, պատմական և քաղաքական հանգամանքները, իրան երևակայում է մի Գարիբալդի և սկսում է մի ծրագիր կազմել Հայաստանն ազատելու համար։ Մի քանի

խեղճեր ժողովելուց յետոյ մեր Սաքոն, մեր Թաթուլը, մեր Յովնանը պատրաստւում է սահմանը անցնել չար սուլթանի թախտը կործանելու։ Բայց նախ քան իւր զօրքերը սահմանին մօտեցնելը՝ նա իւր խմբով մի տասն անգամ նկարւում է, բոլոր քաղաքներում քէֆեր է անում, ամեն տեղ հռչակում իւր անունը և սրանով շատ գոհ լինում, թէև լաւ գիտէ, որ իւր ամբողջ խումբն էլ պիտի կոտորուի և իւր անմտութեան պատճառով թշուառ ժողովուրդն էլ պիտի հալածանքի ենթարկուի։ Բայց նրա գործունէութեան միակ շարժառիթը սնափառութիւնն է։

Ահա ձեզ մի ուրիշ գործիչ ձևացող, որ ամեն ստորութիւնների միջոցով հարուստի աղջկայ հետ է պսակուել կամ հարստացել նոյնպէս ոչ-իդէալական միջոցներով, որ իրեն յանձնուած գործի վերաբերմամբ շատ էլ հարազատ չէ եղել, մակլերների հետ միացած կողոպտել է իւր ընկերներին, կաշառքներ է վերցրել և հարիւր հազարների վնաս տուել գործին, բայց սաստիկ ցանկութիւն ունի գործիչ և բարի մարդու համբաւ ունենալ։

Ենթադրեցէք մի մարդ, որ մասնաւոր կեանքում քարասիրտ է, անտաշ և կոպիտ, վայրենաբարոյ ինստինկտներով, անընդունակ մասնաւոր կեանքում մտածելու ուրիշի մասին, յանկարծ մի քանի ռուբլի է նուիրում մի որևէ հասարակական գործի համար, բայց սրանով նա չի բաւականանում, որովհետև նա բարիք էր անում ոչ թէ բարութիւն անելու համար, այլ խօսելու և խօսեցնելու իւր մասին, ուրիշներից աւելի լաւ երևալու համար։

Նրանք ի ցոյցս մարդկանց բարի, բայց իրօք հասարակական չարիքներ են։

Ահա այսպիսի յատկութիւնների համար արդարև հայ ինտելիգէնտը արժանի է քննադատութեան, բայց ոչ նրա համար, որ այսօր շատ յայտնի պատճառներով աղանցիներին առհասարակ ռուսահայերը չեն օգնում։

Վերջին քսան և հինգ տարուայ ընթացքում ռուսահայերը տուել են թուրքահայերին մի քանի միլիոններ, միայն հանգուցեալ Արծրունին սովելոց համար երկու հարիւր հազարից աւելի ժողովեց։ Մենք ռուսահայերս էլ ունեցել ենք մեր դժբաղդութիւնները, մեր Ախալքալաքը և Շամախին էլ երկրաշարժից կործանուեցին, հազարաւոր մարդիկ զոհուեցին և հազարաւոր ընտանիքներ դժբաղդացան հայ-թուրքական կոտորածների ժամանակ, բայց արդեօք մի հարիւր ռուբլի ուղարկեցիք մեզ թուրքահայերը, որոնց մէջ կան շատ հարուստներ, որոնք մեր Մանթաշովներից պակաս հարուստ չեն։

Յայտնի է որ, 1905 թուին ռուսաց կառավարութիւնը ի

դէմս իշխան Գոլիցինի կատարեց մի անմիտ գործողութիւն. ինչպէս և ամէն մի ռուս չինովնիկ, իշխ. Գոլիցինը չգիտէր որ ոչ Էջմիածինը Հռոմն է և ոչ հայոց կաթողիկոսը Հռոմի պապը։ Եւ կարծելով որ Էջմիածնում միլիոններ կան, որոնք յեղափոխութեան վրայ են գործադրւում, նա մի գեղեցիկ օր, հազար վեցհարիւր տարուայ գոյութիւն ունեցող մի հիմնարկութիւն, որը դիմացել էր աշխարհի ամենաահռելի բռնակալներին՝ սոված թողեց հազարաւոր մարդկանց և խլեց Էջմիածնի բոլոր կալուածները. արդեօք ազգային այդ մեծ աղէտի օրերում, երբ որ ռուսահայերը ոչ միայն հարիւր հազարներ դրեցին իրանց կաթողիկոսի տրամադրութեան տակ, այլ և հազարաւոր մարդիկ աքսոր գնացին, բանտարկուեցին և սպանուեցին, արդեօք այդ ժամանակ թիւրքահայ մեր եղբայրները մի կոպէկ ուղարկեցին մեզ։ Բացի այս՝ այդ ժամանակ ռուսահայերի մէջ չգտնուեց ոչ միայն ոչ մի դաւաճան և մատնիչ, այլ և ոչ մի երէցփոխան, որ կատարէր իշխան Գոլիցինի հրամանը (բայց եթէ կարելի լինի հրատարակել թէ այսօր բանտերում գտնուած մարդկանց գործում որքան տաճկաստանցիների դոնոսներ կան)։ Տաճկահայերի մէջ գտնուեց միայն մի անձնաւորութիւն, որ մեծ բարոյական օգնութիւն հասցրեց Էջմիածնին և այդ մարդուն տաճկաստանցիները սոսկալի ապերախտութեամբ անարդեցին, այդ մարդը պատրիարք Օրմանեանն էր, որ իւր մի քանի հոգևորականներով ամենաղօրեղ և ամենախելօք բողոքը գրեց իշխան Գոլիցինի կարգադրութեան դէմ։

Այս միջանկեալ բաները մենք ասում ենք տաճկահայերին բնորոշելու համար. բայց մենք խոստացել ենք խօսելու ադանցիներին չօգնելու իսկական պատճառների մասին, թէև այս վերոյիշեալ ասածները մի փոքր մեզ մօտեցնում են բուն խնդրի լուծմանը։

Այո, հայերը չեն օգնում ադանցիներին, ոչ այն պատճառով, ինչպէս գրում են «Հորիզոնում», որ հայերը իբր թէ սովոր չեն յօժարակամ բարեգործութիւններ անելու։ Հայոց պատմութեան սկզբնական օրերից մինչև այսօր փաստերը հակառակն են ապացուցանում։ Փաստերը ապացուցանում են, որ հայ ժողովուրդը, բայց ոչ ներկայի հայ աֆերիստ ինտելիգենտները և հարուստները, միշտ յօժարակամ է բարեգործութիւններ արել։ Քրիստոսի ծննդեան չորրորդ դարում, երբ որ ոչ դաշնակց. և ոչ հնչակ. չկային (թէև իսկական, բայց ոչ կովկասեան սոցիալ-դեմոկրատներ կային) հայ ժողովուրդը բոլորովին յօժարակամ էր տալիս իր տաժանակիր և միլիոնաւոր արժեցող աշխատանքի արդիւնքները Մեծ Ներսիսին, իւր բորոտ, հիւանդ և աղքատ ազգակից-

ների օգտին հիւանդանոցներ և աղքատանոցներ հիմնելու համար։ Մովսէս Խորենացին, Փաւստոս Բիւզանդացին և Ագաթանգեղոսը պատմում են, որ Ներսէս Մեծը ծերերին և չքաւորներին խնամելու համար Հայաստանի համարեա բոլոր գիւղերում և քաղաքներում աղքատանոցներ շինեց (Բիւզ. 76, 78, Խորեն. 42, 44, Ագաթանգեղոս 120)։ Մեծ Ներսէսը, «որ նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, և ապա այլոց օրինակ բարեաց դնելով, և վասն ճշմարտութեան մինչև ի մահ մարտնչէր», իւր բոլոր մեծ բարեգործական հիմնարկութիւնները հիմնեց հայ ժողովրդի յօժարակամ նուիրաբերութիւնների շնորհիւ։ Թէպէտև ինքը Ներսէս Մեծը արժանի էր այդպիսի վերաբերմունքին, որովհետև «ինքն իւրովք ձեռովքն լուանայր զամենեսեան, օծանէր, պատէր և ինքն իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս (Բիւզ. 75, 77, 78)։ Յայտնի է նոյնպէս, որ հայերը մեծամեծ և յօժարակամ նուիրաբերութիւններ են արել նորագոյն ժամանակներում, որի կենդանի ապացոյց են Բագուի և Թիֆլիսի բարեգործական ընկերութիւնները, Կալկաթայի ճեմարանը, բազմաթիւ բարեգործական ընկերութիւնները, տպարանները, ազգային լրագիրները (Ազդարար), Լազարեան և Էջմիածնի ճեմարանը և այլ հասարակական հաստատութիւններ, որոնց համար հայ ազգը զոհել է շատ միլիոններ, առանց սակայն Ադամովների, Ժամհարովների և այլոց սպանութիւնների։ Բայց այս սպանութիւններից յետոյ հասկանալի է որ հայ ժողովուրդը, որը յօժարակամ միլիոններ է տուել, այժմ դադարում է ոչ միայն Ադանցիներին օգնելու, այլ և մատնում է բռնութիւն կատարողներին։ Այո, հայ ժողովուրդը բռնութիւն չէ սիրում և իւր բռնակալներին միշտ խորտակել է կամ ոյժով, կամ ապստամբութեամբ և կամ դաւաճանութեամբ։

Դառնանք այժմ բուն խնդրին։ Ինչու հայերը այժմ չեն օգնում Ադանցիներին։ Մենք ռուսահայերս այժմ չենք օգնում նրանց, նախ՝ որովհետև մենք յոգնել ենք նրանց օգնելուց, երկրորդ՝ որովհետև յանուն տաճկահայերի փրկութեան սկսեցին մեզ սպանել, բռնաբարեցին մեր կանանց և որդիներին և վարկաբեկարին այն սուրբ գործը, որի համար ռուսահայը ոչինչ չէր խնայում, որովհետև բռնութեամբ չի կարելի համակրութիւն առաջացնել դէպի այն գործը, որի անունից կատարուել է բռնութիւնը։

Ոչ մի ազգի մէջ յեղափոխականները յանուն գաղափարի և փողի համար մասնաւոր սպանութիւններ չեն կատարում։ Ցոյց տուէք որ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և նոյն իսկ ռուս յեղափոխականները, բուն Ռուսաստանում մասնաւոր մարդկանցից փող պահանջած լինէին յանուն գաղափարի և մերժման դէպքում

սպանութիւն կատարէին։ Բայց այս բոլորը կարելի է համարուում մեղանում, այսինքն հայերի, վրացիների և Թուրքերի մէջ, որովհետև իսկական կուլտուրայից մենք դեռ շատ հեռու ենք և մեր յեղափոխականները գաղափարի մարդիկ չեն։ Երրորդ, մենք չենք օգնում Ադանցիներին, որովհետև այսօր Թիւրքիայում տիրում է այնպիսի ռեժիմ, որին մենք պիտի ն·սխանձենք։ Այսօրուայ հեռագիրներից յայտնի է, որ Թուրք կառավարութիւնը 160 հազար տաճկական լիրա է վճռել տալու Ադանայի ազգաբնակութեան դրութիւնը վերանորոգելու համար, որ մեր փողով անում է միլիոն ու կէս բուբլի։ Չորրորդ՝ մենք չենք օգնում Ադանցիներին, որովհետև ռուսահայերի այժմեան դրութիւնը տաճկահայերի դրութիւնից շատ աւելի վատ է։ Հայ ազատամիտ կուսակցութիւնների մէջ շատ մեծ համակրութիւն ունեցող Սիմէօն Զաւարեանի, ռուսերէն լեզուով գրած (հրապարակի վրայ երևացող և դեր խաղացող հայ ազգասէրները մեղանում առհասարակ չգիտեն և մայրենի լեզուով խօսել և գրել չեն սիրում) „Экономическое положеніе крестьянъ Эриванской губерніи“ գրքից յայտնի է, որ Երևանի նահանգում հայ գիւղացիք խիստ հողազուրկ են և սոսկալի դրութեան մէջ։ Մեր Զանգեզուրը, մեր Ախալքալաքը, Բայազիտը, Աբարանը յետին աղքատութեան մէջ են և մեր Ագուլիսի լեռնային գիւղերը ամեն մի թիզ հողի վրայ տաժանակիր աշխատանքի շնորհիւ միայն կարողանում են ժայռերի մէջ հաց բուսցնել։

Կարող ենք արդեօք այսօր մենք այսպիսի տնտեսական կրիզիսի ժամանակ այնպիսի առատութեամբ օգնել մեր տաճկահայ եղբայրներին, որպէս առաջ էինք անում, երբ որ մենք չէինք զգացել Գոլիցինեան ռեժիմի և այլ հայ յեղափոխականների գործունէութեան հետևանքները։ Իհարկէ՝ ոչ։

Գ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ Կաթողիկոսը իւր օծման առթիւ Թագաւոր Կայսրին ուղարկած հեռագրին Նորին Մեծութիւնից ստացել է հետևեալ պատասխանը.

«Սրտանց շնորհակալ եմ Ձերդ Սրբութիւնից աղօթքի և բարեմաղթութիւնների համար։

«Թող օգնէ Ձեզ Տէրը ծառայելու հայկական եկեղեցուն և Ձեզ յանձնուած հօտը կրթելու հաւատարմութեան և հպատակութեան մէջ իրանց Թագաւորներին և Ռուսաստանին»։

ՆԻԿՕԼԱՅ

Վեհափառը հետևեալ հեռագիրն էր ուղարկել.

«Ընդունելով Հայաստանեայց Եկեղեցու հնագոյն տաճարի մէջ, սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Գահի առաջ երդումն հաւատարմութեան առ Ձերդ Կայսերական Մեծութիւն և անձնուիրութեան իմ նոր հայրենիքի հիմնական օրէնքներին, ես վերառաքում եմ առ Բարձրեալն ջերմ աղօթք Ձերդ Կայսերական Մեծութեան և ամբողջ Ալբայական Տան թանկագին առողջութեան համար։ Ողորմութեամբն Աստուծոյ արժանանալով սուրբ օծման շնորհաց իմ հօտի ծանր սպասաւորութեան համար, ես տուի երդումն Ամենաբարձրեալին՝ անսասան պահպանել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու հին օրէնքները և կանոնները և Ռուսաց կայսրութեան, այդ եկեղեցու հովանաւորի օրէնքները, հաւատալով՝ որ Ձերդ Կայսերական Մեծութիւնը, իբրև հզօր պաշտպան հայկական հին եկեղեցու և հօտի, Ձեր անփոփոխելի հոգածութեամբ նրա բարգաւաճման համար, կը տարածէք Ձեր Բարձր հովանաւորութիւնը, ինչպէս և ի Տէր հանգուցեալ Ձեր երջանկայիշատակ Թագակիր նախնիքը հայոց եկեղեցու վրայ և կը պահպանէք նրա բազմադարեան կանոնները։ Մնալով, իմ հօտի հետ միասին, այն անխախտելի հաւատի մէջ, թէ միայն Ռուսական Պետութեան հետ ամուր և անքակտելի միութեան մէջ է պարփակուած Ձեր հաւատարիմ հպատակ հայ ժողովրդի բարգաւաճման գրաւականը, ես հաստատ հաւատ ունեմ, որ Ձերդ Մեծութիւնը կը լինի նրա մշտական նեցուկը բոլոր փորձութիւնների մէջ, որոնց նա ենթակայ է լինում ճակատագրով, և Ձեր անճառելի գթութեամբ հայրաբար զիջողաբար կամոքէք իմ հօտի մի քանի զաւակների վիճակը, որոնք իրանց վրայ են գրաւել ճակատագրի հարուածները։ Եւ այսօր, բառնալով ուսերիս վրայ ծանր խաչը սպասաւորութեան իմ հօտի, որ յանձնուած է ինձ Աստուծուց, Ձերդ Մեծութիւնից և ժողովրդի կամքով, ջերմ աղօթքներ եմ վերառաքում Ձերդ Կայսերական Մեծութեան, Թագուհի Կայ-

սրուհիների, Թագաժառանգ Ցեսարէվիչի և ամբողջ Արքայական Տան բարեկեցութեան և երկարակեցութեան և լայնածաւալ հայրենիքի, Մեծի Մօրն Ռուսիոյ մեծութեան և հզօրութեան համար»։

Ցայտնի է, որ Կիլիկիայի էն աչքը՝ ծաղկած Ադանան բառիս բուն նշանակութեամբ ջնջուեցաւ քիւրդ և տաճիկ բարբարոսների ձեռքով. տաճիկները իրանց այդ վայրենի վարմունքը արդարացնում էին նորանով, որ իբր թէ հայ յեղափոխականներ բուն էին դրել այնտեղ և առիթ էին տուել ժողովրդի կրգման. այս լուրը հէնց ինքը տաճիկ կառավարութիւնը հերքեց, բայց այնուամենայնիւ ադանացի մի խումբ հայերի կախաղան բարձրացրեց որպէս յանցաւորների։ Այս առիթով Կ. Պոլսի նորընտիր պատրիարք ամեն. Եղիշէ եպս. Դուրեանը հրաժարական տուեց և ահա մի քանի շաբաթ է, որ նորա ու Բարձր. Դրան մէջ բանակցութիւններ է տեղի ունենում, բայց պատրիարքը դժգոհ կառավարութիւնից՝ պնդում է իւր հրաժարականի վրայ։ Այժմ, ինչպէս իմանում ենք Կ. Պոլսի լրագիրներից և ստացած մասնաւոր նամակներից, ազգային ժողով է գումարուելու յատուկ այն խնդիրը որոշելու, թէ անհրաժեշտ է՞ որ պատրիարքը յամառէ իւր հրաժարականի վերայ և դեռ նոր ցոյցեր էլ աւելացնել իբրև բողոք, թէ կարելի է բաւական համարել այդ ցոյցը պետութեան դէմ։

Լրագիրները հաղորդեցին, որ Ադանայի կոտորածից Կրէտէ կղզում ապաստանած հայերը թուով 2000 հոգի յունադաւանութիւն են ընդունել առաջիկայ նման վտանգներից ազատ մնալու նպատակով և դորան էլ հետևել են Նիկոսիայի և ուրիշ տեղի հայերը բաւական մեծ թուով։ Բայց մի՞թէ ադանացիք կոտորուեցան, որովհետև հայոց կրօնն էին դաւանում նոքա. հապա ինչո՞ւ Պարսկաստանում բնակուող հայերը երկար դարեր հալածանքի չէին ենթարկուում ու չարդուում, Մենք չենք հասկանում, թէ ի՞նչ է շինում Պոլսի Ազգային ժողովը և նորա ճոռոմաբան երեսփոխանները, եթէ նոցա իրաւասութեան տակ գտնուած հայերը հետզհետէ թողնում են իրանց մայրենի եկեղեցին և օտարանում, չէ՞ որ Կրէտէի այդ նոր քաղաքացի 2000 յունադաւան հայերից տասը տարուց յետոյ էլ ոչ մի հայ մարդ չի մնայ։ Ինչ է շինում նաև Բոսֆորի ափերում բազմած բազմաթիւ հայ կրօնաւորութիւնը. էլ ի՞նչ է նոցա միսսիան։

Ս. Էջմիածնում պ. Դաւիթ Աւան Իւզբաշեանցի ծախքով ներկայումս կառուցւում է մի հոյակապ շինութիւն Մայր Աթոռի տպագիր և գրչագիր գրքերի մատենադարանի համար։ Շինու-

թիւնը կառուցում է Տաճարի հիւսիսարևելեան կողմը սրբատաշ քարից գեղեցիկ ճարտարապետութեամբ և լինելու էր միայարկ. ներկայումս, Վեհ. Կաթողիկոսի օծման առթիւ պ. Իւզբաշեանցը ներկայ գտնուելով ս. Էջմիածնում և հաւանելով շինուածքի ճարտարապետութիւնը՝ առաջարկեց աւելացնել նաև երկրորդ յարկ՝ դրադարանապետի, այլ ծառայողների և ընթերցարանի համար, հոգալով և այդ յարկի համար կարևոր ծախքերը։ Պատիւ առատաձեռն բարերարին։

Էջմիածնի հողերի ոռոգման համար ջուր հանելու խնդիրը ուղղակի դառել է միջազգային խնդիր. պարբերաբար, բայց շարունակ այս և այն լրագիրներում լոյս են տեսնում մէկ Հ. Բարգէն վարդապետի յարձակողական յօդուածները, մէկ բժշ. Կիրակոսեանի պաշտպանողական հերքումները և ընթերցողը չգիտէ՝ թէ որն է նոցանից իրաւացի կողմը և որի՞ կողմն է ճշմարտութիւնը։ Ցանկալի էր, որ Էջմիածնի սինոդը էքսպերտների մի խորհուրդ կազմէր, որոնք քննելով այդ խնդիրը՝ իրանց եզրակացութիւնը հրատարակէին լրագիրներում։

Թիֆլիսում նորերս վախճանուած վաճառական Կարապետ Վարդանեանցը թողել է մի կտակ, որով մի բաւական խոշոր գումար է կտակել հայ դպրոցներին և եկեղեցիներին։

«Հորիզոնի» խմբագրատանը ինքնասպանութեամբ վերջ դրեց նոյն թերթի դրասենեկապետ Դաւիթ Գալստեանը, մի եռանդուն երիտասարդ, որ իւր բոլոր կեանքը դրել էր այդ և նախորդ օրաթերթերի վերայ և նորա մահից յետ «Հորիզոնը» առժամանակ դադարեցրեց իւր գոյութիւնը։

Ալէքսանդրօպոլից մեզ գրում են, որ այնտեղ տպագրւում է և շուտով մամուլի տակից դուրս կգայ պ. Կարապետ Կոստանեանցի խմբագրութեամբ Գրիգոր Մագիստրոսի ամբողջ մատենագրութիւնը։

Լրագիրներում կարդում ենք, որ Վեհ. Կաթողիկոսի հրամանով Էջմիածնի միաբանութիւնը մի շարք թեկնածուներ է ընտրել իր միջից Հայրապետական Դիւանի վարչութեան անդամների համար, որոնցից Վեհ. Կաթողիկոսը հաստատել է չորսին և նրանցից Հ. Յուսիկ վարդապետին դիւանապետ։ Այսուհետև ուրեմն Հայրապետական Դիւանը պիտի վարէ ոչ թէ մի անհատ, այլ ամբողջ վարչութիւն։

Էջմիածնի ճեմարանի նախկին տեսուչ պ. Մ. Բերբերեանը, բանտարկութիւնից ազատուելով, բաւական ժամանակ պառկած էր Ղրիմ իւր հօր ամառանոցում. ներկայումս ապաքինուած վերադարձել է Ն. Նախիջևան և «Լումայի» հետեւեալ հա-

մարից կտանք նորա «Հայերը Ռուսիայում» տեսութեան շարունակութիւնը։

■ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում է «Մշակը», որոշել է տօնել վերջինիս խմբագիր Ա. Քալանթարի 25 ամեայ գիւղատնտեսական գործունէութեան յոբելեանը։

ՄԱՀԳՈՅԺ

† ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

Սեպտեմբերի 14-ին Կ. Պոլսից Ամեն. Օրմանեան սրբազանից ստացուած մի հեռագիր գուժեց մեզ «Լումայ»-ի երկարամեայ և մշտական աշխատակից և ծանօթ գրագէտ— Մկրեան Տ. Յովհաննէսի մահը։

Այնուհետև խմբագրութիւնս ստացաւ և սգոյ յայտարարութիւնը հանգուցեալի մահուան և թաղման մասին։

Առաջիկային թողնելով հանգուցեալի մանրամասն կենսագրութիւնը, առ այժմ հարկաւոր ենք համարում ասել, որ հ. Մկրեանը օժտուած էր բազմատեսակ շնորհներով, քաջ ծանօթ էր հայ լեզուին, պատմութեան ու գրականութեան, մշտապէս աշխատակցում էր տաճկահայ և արտասահմանեան բազմաթիւ հայ թերթերին իբրև հմուտ բանասէր, հանգ. Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսի Պոլսի Պատրիարքութեան ժամանակ վարում էր Պատրիարքական տեղապահի պաշտօնը և յայտնի էր որպէս խելօք և փորձուած վարիչ և պատուական հայ։

Խմբագրութիւնս իւր խորին վիշտն է յայտնում աշխատաւոր հովուի և գրագէտի մահուան համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թիֆլիս. պ. Ե. Աթանեանցին. Ձեր յօդուածը ստացել ենք։ Բանաստեղծութիւնը տպեցինք։

Կ. Պոլիս. Մ. Ա. Օ Խնդրում ենք ուղարկել յօդուածի շարունակութիւնը։

Ն. Նախիջեւան. Ե. Շ. Սպասում ենք յօդուածին։ Գիրքը լոյս կտեսնի այս երկու օրս։

Կ. Պոլիս. —«Բիւզանդիոն» և «Արևելք» լրագիրների խմբագրութիւններին։ Բաւական ժամանակ է Ձեր թերթերը չենք ստանում։

Օնէգա. Ն. Ղ.—Ք. Ուղարկեցինք «Լուման». «Հայրենիքը» առ այժմ ոյս չէ տեսնում։

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ

ԴԻՒԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Է

Դաւիթ Կաթողիկոս, մասն Բ.

Ընդարձակ յառաջաբանով, յաւելուածներով, ծանօթութիւններով և մի մեծ վիմատիպ ֆիրմանով.

ԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ։

Հոյս տեսաւ

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

երկրորդ հոխացրած տպագրութիւն

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել Ն. Աղանեանի տպարան

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին	*3 ռ.*	*մանկավարժ. բաժ.*	*4 ռ.*
Կէս տարուանը	*1 ռ. 80 կ.*		*2 ռ. 10 կ.*
Մէկ ամսուանը	*— 30 կ.*		*— 35 կ.*
Պարսկաստանում	*3 ռ. 50 կ.*		*4 ռ. 50 կ.*
Արտասահմանում տարեկան	*ԻՆՀ ֆր.*		*ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.*
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	*11 ռ.*		*15 ռ.*

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լուման լոյս է տեսնում իւր նախկին դիրքով ամեն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 64—80 երեսներից։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւել քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրւում։
3. Նիւթերը չեն վերադարձնում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրւում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունւում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizejskaja, 7.

АТРПЕТЪ

МАМЕД-АЛИ-ШАХЪ

Современная Персія

Съ 36 Картинами

Цѣна 1 руб.

Складъ: Тифлисъ Книж. Торг. „Гутенбергъ“. Александрополь. Типог. „Ширакъ“.